

MINISTRY OF DIASPORA
OF THE REPUBLIC OF ARMENIA

**THE LEGAL STATUS
OF ARMENIAN CULTURAL
HERITAGE ABROAD**

Research

**ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏԵԿՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

Հետազոտական աշխատանք

ԵՐԵՎԱՆ YEREVAN
2010



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ներագործությունը կարարվել է
ՀՀ Սփյուռքի նախարարության պարվերով՝
Երևանի պետական համալսարանի
Եվրոպական ուսումնասիրությունների
կենտրոնի կողմից:**

Արտերկրում գրնվող հայկական պարմամշակութային ժառանգության
իրավական կարգավիճակը/ Ներագործական աշխատանք. Եր. 2010. -168 էջ:

Նեղինակներ՝

Արման Սարգսյան (իրավաբան փորձագետ)

էջեր՝ 4-8, 49-66, 67-105, 146-159

Լիլիթ Միրզոյան (միջազգայնագետ փորձագետ)

էջեր՝ 9-22, 23-48, 106-145, 146-159

Գիտական խմբագիր՝

իրավաբան. գիտ. թեկնածու,

դոցենտ **Ա. Գ. Ղազինյան**

Խմբագիր՝

Ա. Օ. Մկրտչյան

© Ա. Սարգսյան, Լ. Միրզոյան, 2010 թ.

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2010 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Գլուխ 1. Պարմամշակության ժառանգության պաշտպանության միջազգային իրավական ռեժիմը	9
1.1. Պարմամշակության ժառանգության հասկացության միջազգային իրավական սահմանումը	9
1.2. Պարմամշակության ժառանգության իրավական վիճակին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերը	23
1.3. Պարմամշակության ժառանգության համաեվրոպական իրավական կարգավորումը	49
Գլուխ 2. Պարմամշակության ժառանգության իրավական կարգավորումը եվրոպական պետություններում	67
2.1. Հայկական պարմամշակության ժառանգության իրավական կարգավիճակը Բրալիայում	67
2.2. Հայկական պարմամշակության ժառանգության իրավական կարգավիճակը Ֆրանսիայում	88
2.3. Հայկական պարմամշակության ժառանգության իրավական կարգավիճակը Կիպրոսում	98
2.4. Պարմամշակության ժառանգության իրավական կարգավիճակը Ավստրիայում	106
2.3 Պարմամշակության ժառանգության իրավական կարգավիճակը Պորտուգալիայում	120
2.4 Պարմամշակության ժառանգության իրավական կարգավիճակը Հունաստանում	134
Վերջաբան	146
Օգտագործված գրականության ցանկ	162

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նեփազոփության արդիականությունը. Պատմամշակութային ժառանգությունը ցանկացած ազգի և պետության անհափականությունն ու ինքնատիպությունը ընդգծող կարեգորիաներից է: Այն հանդիսանում է այն հիմնական հատկանիշներից մեկը, որով ազգերը և պետությունները տարբերվում են միմյանցից: Փոխանցվելով սերնդեսերունդ՝ պատմամշակութային ժառանգությունը իր վրա կրում է պատմական իրողությունների դրոշմը և անցյալի շունչը: Ելնելով պատմամշակութային ժառանգության կարևորությունից՝ ցանկացած պետություն շահագրգռված է այն պաշտպանելու հարցում: Այս իմաստով բացառություն չի մեր պետությունը, որն աշխարհի ամենափարբեր անկյուններում ունի սփռված հարուստ պատմամշակութային ժառանգություն: Անհրաժեշտ է բավարար պատկերացում ունենալ հայկական պատմամշակութային ժառանգության իրավական վիճակի մասին՝ դրա հեփազա ճակատագիրը գիտակցելու և դրա պահպանության ու շարունակականության ապահովմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու նպատակով: Ընտրված թեմայի ուսումնասիրման արդիականությունը հատկապես բարձրանում է աշխարհի ամենափարբեր հատվածներում տեղի ունեցող ինփոքացիոն գործընթացների համատեքստում:

Ավելին, արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրումը արդիական է նաև պատմամշակութային ժառանգության վերաբերյալ ՏՏ-ում առկա օրենսդրությունը զարգացնելու և դրա կիրարկման պրակտիկական կարարելագործելու առումով:

Ելնելով այն հանգամանքից, որ հայ հանրությունը աշխարհի ամենափարբեր երկրներում պատմամշակութային ժառանգություն ունի սփռված, ուստի անհնար է մեկ հեփազոփությամբ սպառել այդ

հսկայաձավալ պատմամշակութային ժառանգության իրավական վիճակի ուսումնասիրությունը: Ըստ այդմ, որպես ուսումնասիրման մեկնարկային շրջանակ ընտրվում են սույն հեղափոխության «ուսումնասիրման օբյեկտը» հասկանալու նշված պետությունները՝ այնպեղ գոյություն ունեցող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական վիճակի ուսումնասիրման նպատակով:

Նեղագոյության գիտական նորույթը: Նեղագոյության գիտական նորույթը արտահայտվում է դիտարկվող հարցերի շրջանակում: Նայաստանի Նանրապետությունում առաջին անգամ փորձ է կատարվում գիտահեղափոխական մակարդակով հասկանալ պետություններում գոյություն ունեցող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական վիճակը: Մասնավորապես, այս համարեքստում քննարկման առարկա է դարձել Իրալիայում, Ֆրանսիայում, Կիպրոսում, Լեհաստանում, Պորտուգալիայում և Ավստրիայում գոյություն ունեցող հայկական պատմամշակութային արժեքների իրավական վիճակը: Նախուկ ուսումնասիրվել է պատմամշակութային արժեքների վերաբերյալ ձևավորված միջազգային իրավական ռեժիմը և այդ ոլորտում Եվրոպական միությունում առկա օրենսդրությունը:

Նեղագոյության նպատակը և խնդիրները: Նեղագոյության նպատակն է պարզել Իրալիայում, Ֆրանսիայում, Կիպրոսում, Լեհաստանում, Պորտուգալիայում և Ավստրիայում գոյություն ունեցող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական վիճակը, ինչպես նաև ուսումնասիրել պատմամշակութային ժառանգության վերաբերյալ ձևավորված միջազգային իրավական ռեժիմը և այդ ոլորտում Եվրոպական միությունում առկա օրենսդրությունը: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ խնդիրները.

1. պարզել «պատմամշակութային ժառանգություն» հասկացության միջազգային իրավական սահմանումը,

2. դիտարկել և համեմատական վերլուծության ենթարկել պարամամշակութային ժառանգության ոլորտում առկա միջազգային իրավական փաստաթղթերը,

3. ճշգրտել և ուսումնասիրել Իտալիայում, Ֆրանսիայում, Կիպրոսում, Լեհաստանում, Պորտուգալիայում և Ավստրիայում պարամամշակութային ժառանգության ոլորտին վերաբերող օրենսդրական ակտերը,

4. վեր հանել և ուսումնասիրել Եվրոպական միության հիմնադիր պայմանագրերի այն դրույթները և ինստիտուտների կողմից ընդունված այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք վերաբերում են պարամամշակութային քաղաքականության իրավական կարգավորմանը:

Ներագոյության ուսումնասիրման օբյեկտը և առարկան: Ներագոյության օբյեկտը Իտալիայում, Ֆրանսիայում, Կիպրոսում, Լեհաստանում, Պորտուգալիայում և Ավստրիայում գոյություն ունեցող հայկական պարամամշակութային ժառանգության իրավական վիճակն է, ինչպես նաև պարամամշակութային ժառանգության վերաբերյալ ձևավորված միջազգային իրավական ռեժիմն ու այդ ոլորտում Եվրոպական միությունում առկա օրենսդրությունը, իսկ առարկան՝ հայկական պարամամշակութային ժառանգության իրավական վիճակի հետ կապված ամենաբազմաբնույթ հարցերը, ինչպիսիք են այդ ժառանգության բաղկացուցիչ հանդիսացող պարամամշակութային արժեքների օտարումը, արտահանումը, դրանք վնասելու կամ ոչնչացնելու համար առաջացող պարասխանարվությունը և այլն:

Ներագոյության տեսական հիմքը: Ներագոյության տեսական հիմքը կազմում են պարամամշակութային արժեքների իրավական վիճակի վերաբերյալ գոյություն ունեցող արտասահմանյան փոխաբեր հեղինակների աշխատությունները, մենագրություններն ու գիտական հոդվածները:

Նեփազոպության նորմատիվ հիմքը: Նեփազոպության նորմատիվ հիմքն են կազմում Իրավիայում, Ֆրանսիայում, Կիպրոսում, Լեհաստանում, Պորտուգալիայում և Ավստրիայում պարամաշակութային ժառանգության ոլորտում գործող ազգային օրենսդրական ակտերը, ինչպես նաև փարբեր միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք ուղղված են պարամաշակութային ժառանգության պաշտպանությանը:

Արենախոսության նորմատիվ հիմքում ընկած են նաև Եվրոպական միությունում պարամաշակութային ժառանգության պաշտպանության ոլորտում առկա օրենսդրական կարգավորումները: Մասնավորապես, այդպիսի կարգավորումներ առաջին հերթին հանդիսանում են Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագիրը, 2007թ. Եվրոպական միության մասին և Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրերը (վերջիններս իրենց ամբողջության մեջ կոչվում են նաև Լիսաբոնի պայմանագիր):

Օրենսդրական կարգավորումների շարքը երկրորդական իրավունքի աղբյուրների փոխարեն համարում են Եվրոպական միության ինստիտուտների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը: Մասնավորապես, այդպիսի ակտեր ուսումնասիրվում են «Մշակութային արժեքները արտահանելու մասին» Եվրոպական միության խորհրդի կողմից 2008թ. դեկտեմբերի 18-ին ընդունված թիվ 116/2009 դիրեկտիվը, որը մեկ փաստաթղթի ներքո է կոնսոլիդացնում 1992թ. դեկտեմբերի 9-ին Եվրոպական միության խորհրդի կողմից ընդունված «Մշակութային արժեքները արտահանելու մասին» թիվ 3911/92 կանոնակարգը, ի կարարումն այդ կանոնակարգի Եվրոպական հանձնաժողովի կողմից 1993թ. ընդունված թիվ 752/93 կանոնակարգը, վերջինիս մեջ փոփոխություններ և լրացումներ կատարող 1998թ. Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված թիվ 1526/98 կանոնակարգը և 2004թ. ընդունված թիվ 656/2004 կանոնա-

կարգը: Բացի այդ, պատմամշակութային քաղաքականության ոլոր-
տում, որպես ինստիտուտների կողմից ընդունված առանձին աղբյուր,
ուսումնասիրվում են նաև 1993թ. մարտի 15-ին Եվրոպական միու-
թյան խորհրդի կողմից ընդունված «Եվրոպական միության փարա-
ժից անօրինական կերպով դուրս բերված պատմամշակութային ար-
ժեքները Եվրոպական միության փարաժք վերադարձնելու մասին»
թիվ 97/3 դիրեկտիվը և դրանում փոփոխություններ և լրացումներ
կատարող համապատասխան ակտերը:

Ներագոյության մեթոդոլոգիական հիմքը: Ներագոյու-
թյամբ հռչակված խնդիրները իրականացնելու և նպատակները ձեռք
բերելու անհրաժեշտությունից ելնելով՝ աշխատանքում օգտագործ-
վել են ինչպես հերագոյության ընդհանուր գիտական, այնպես էլ
մասնավոր մեթոդներ: Ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել
են դիալեկտիկական մեթոդը, համակարգային մեթոդը, իսկ մասնա-
վորից՝ փրամաբանաիրավական, պատմաիրավական, համակար-
գակառուցվածքային, իրավահամեմատական և գործառնական մե-
թոդները:

Գլուխ 1. Պատմամշակութային ժառանգության դաճաճության միջազգային իրավական ռեժիմը

1.1. Պատմամշակութային ժառանգության հասկացության միջազգային իրավական սահմանումը

Միջազգային հարաբերությունները բնութագրվում են պետությունների գործունեության ամենապարբեր բնագավառներում մարդկային հարաբերությունների առնչությամբ՝ քաղաքական հարաբերություններում, փոփոխության բնագավառում, գիտահետազոտական համագործակցության բնագավառում, հումանիտար բնագավառում և այլն: Մշակույթի բնագավառում պետությունների համագործակցությունը նույնպես ներառվում է այդ ցուցակում: Մշակույթն ինքնին՝ որպես համամարդկային արժեք, չի ընդունում սահմաններ: Տարբեր մշակույթների փոխազդեցությունը, փոխհարստացումը տեղի է ունենում ամենապարբեր մակարդակների վրա, և պետությունը ի վիճակի չէ կանգնեցնել այդ գործընթացը: Պետությունը ի վիճակի է պարզեցնել, արագացնել և ավելի ընդունելի դարձնել խաղի այն կանոնները, որոնցով պետությունների միջև տեղի է ունենում մշակութային փոխանակումը: Պատմամշակութային ժառանգությունը հանդիսանում է մարդկային քաղաքակրթության, ժողովուրդների մշակույթների և ավանդույթների էվոլյուցիայի վկայությունը, թույլ է տալիս միաձուլվել նրան ցանկացած մարդու, որն էլ, այսպիսով, իրագործում է 1948թ. Մարդու իրավունքների Նամընդհանուր հռչակագրով (հ. 13) և 1966թ. Տնփեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային պակտով (հ. 27) սահմանված իր իրավունքը:

¹ Տե՛ս John Henry Merryman “The nation and the object”, International journal of Cultural Property, Vol.3, 1994, pages 60-63:

Նամաշխարհային մշակութային ժառանգության կարգավիճակի առանձնահատկությունը արտահայտվում է նրանում, որ «մշակութային արժեքները» կամ «պարամամշակութային արժեքները» անկախ նրանց կարեգործիայից, գտնվում են պետության փրամաքում և նրա իրավասության փակ: Այդ իսկ պարճառով համաշխարհային մշակութային ժառանգության կարգավիճակի միջազգային իրավական կարգավորումը հիմնվում է ազգային (ներպերական) և միջազգային իրավական միջոցների փոխազդեցության և փոխրացման վրա՝ վերջիններիս առաջնային դերի դեպքում: Ընդ որում, միջազգային իրավունքի գերիշխող դերը արտահայտվում է ինչպես համաշխարհային մշակութային ժառանգության դասակարգիչ չափանիշների մշակման մեջ՝ մշակութային արժեքների ընդհանուր կարեգործիայից այն առանձնացնելու համար, այնպես էլ նրա պահպանության գծով՝ հարուկ ինստիտուցիոնալ միջազգային մեխանիզմի սրեղծմամբ: Այսօր մշակութային արժեքների իրավական պաշտպանությունը կարևոր բնույթ է կրում ողջ աշխարհում:

Ներկայումս ժամանակակից միջազգային իրավունքի մեջ գոյություն ունեն համընդհանուր և փրամաճաշրջանային բնույթի մոտ 100 միջազգային իրավական ակտեր, որոնք կարգավորում են տուրյեկների հարաբերությունները մշակութային ժառանգության օբյեկտների բացահայտման, պահպանման, մասայականացման և պաշտպանության ոլորտում: Միջազգային իրավունքում պահպանության օբյեկտ են բոլոր պարամամշակութային արժեքները՝ այդ հասկացության ամենալայն իմաստով: «Մշակութային արժեքներ» փերմինը անկասկաճ առավել բազմաբովանդակ է՝ իր մեջ ներառելով նրանց առավել նշանակալի մասը՝ ազգերի մշակութային ժառանգությունը (հարստությունը): Ելնելով միջազգային իրավական պարավորությունների հարաբերականության սկզբունքից՝ գոյություն ունեցող միջազգային իրավական ակտերում չեն փրվում գորճաճվող հասկացությունների ունիվերսալ սահմանումները: Գորճնականում յուրաքանչյուր իրավական ակտ պարունակում է իր սահմանումները,

որոնք կիրառվում են այս կամ այն Կոնվենցիայի, Առաջարկությունների շրջանակներում՝ ելնելով նրա կոնկրետ նպատակներից և խնդիրներից:

Տվյալ թեմայի հիմնական հարցերի քննարկման համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թե ինչ է մտնում «պատմամշակութային արժեքներ կամ մշակութային արժեքներ կամ մշակութային ժառանգություն» հասկացության մեջ: «Մշակութային արժեքներ» հասկացությունը միջազգային իրավական փեսակերպից ունի երկու առանձնահատկություն: Առաջին հերթին միջազգային կոնվենցիաներում կամ համաձայնագրերում փվյալ սահմանմանը համապատասխան բոլոր օբյեկտները ընդգրկող «մշակութային արժեքներ» ունիվերսալ հասկացություն գոյություն չունի: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր միջազգային կոնվենցիա փալխ է «մշակութային արժեքների» սահմանումը՝ ելնելով այն իրավահարաբերությունների առանձնահատկությունից, որոնք նա կոչված է կարգավորել: Այս երկու առանձնահատկության հիման վրա էլ առաջացել է միջազգային ակտերում հանդես եկող «մշակութային արժեքներ կամ պատմամշակութային արժեքներ» հասկացությունը:²

Մի շարք երկրների օրենսդրությունների, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի վերլուծության հիման վրա, միջազգային կազմակերպությունների գործունեության պրակտիկայում, մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպայի խորհրդի, մշակութային արժեքները նշելու համար կիրառվում են երկու առավել փարածված հասկացություններ՝ «cultural heritage–das Kulturerbe»– «մշակութային ժառանգություն», և «cultural property–das Kulturgut» – «մշակութային սեփականություն»:³ Քննարկենք միջազգային

² Stú Derek Gillman, “The idea of cultural heritage”, Cambridge university press, 2010, pages 2-7:

³ Stú Молчанов С.Н., «К вопросу об использовании в законодательстве оных культурное наследие и культурное достояние», Екатеринбург, 1988г, стр. 20-26:

փաստաթղթերից հիմնականները, որոնք վերաբերում են պատմամշակութային ժառանգությանը: 1935թ. Վաշինգտոնում ընդունված «Գեղարվեստական և գիտական հաստատությունների և պատմական հուշարձանների պահպանության մասին» պայմանագրում, որն առավել հայտնի է Բերիխի պակտ անունով, «մշակութային արժեքներ» հասկացությունը բացակայում է: Պահպանության օբյեկտը սահմանված է պակտի 1-ին հոդվածում. «Պատմական հուշարձաններ, թանգարաններ, գիտական, գեղարվեստական, կրթական և մշակութային հաստատությունները համարվում են չեզոք, և որպես այդպիսիք, պատերազմող կողմերի հարգանքին և պահպանությանն են արժանանում»: Այս միջազգային փաստաթղթում մշակութային արժեքների սահմանման առաջին, թեև թույլ փորձն է ձեռնարկված, չնայած այն բանին, որ Պայմանագրի բովանդակության մեջ «մշակութային արժեքներ» հասկացությունը բացակայում է:⁴ «Մշակութային արժեքներ» հասկացությանը առաջին անգամ հանդիպում ենք «Զինված կոնֆլիկտների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիայում, որը ստորագրվել է 1954 թ. մայիսի 14-ին, Նաագայում: Մանրամասն դիտարկենք 1-ին հոդվածում ընդգրկված սահմանումը: Նոդված 1-ի կետ 1-ը սահմանում է, որ Կոնվենցիայում «մշակութային արժեքներ ասելով նկատի ունեն այն շարժական և անշարժ արժեքները, որոնք կարևոր նշանակություն ունեն յուրաքանչյուր ազգի մշակութային ժառանգության համար՝ անկախ նրանց ծագումից և պատկանելիությունից»: Այս սահմանումից հետևում է, որ ինչպես շարժական, այնպես էլ անշարժ մշակութային արժեքին բնորոշ, որակավորող գիծը յուրաքանչյուր ազգի մշակութային ժառանգության համար նրա կարևորության նշանակությունն է: Կոնվենցիան, «մշակութային արժեքներ» հասկացությունը սահմանելով, միայն որոշում է սահ-

⁴ Стів Александрова Е., «Пакт Периха и международная охрана памятников истории и культуры», София, 1987г., стр.10-15:

մանները, իսկ այս կամ այն առարկան մշակութային արժեքների շարքին դասելու պետության և ազգերի իրավունքը այն չի սահմանափակում: Ամեն ինչ կախված է այս կամ այն ազգի պատմական և մշակութային զարգացումից: Կոնվենցիան ասում է նաև, որ «հաշվի չի առնվում մշակութային արժեքի ծագումը և թե ում է այն պատկանում»: Մշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքը կարող է պատկանել ինչպես պետական մշակութային կազմակերպություններին՝ թանգարաններին, պատկերասրահներին, գրադարաններին և այլն, այնպես էլ՝ մասնավոր սեփականատերերին:

1954թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածը փալիս է նաև մշակութային արժեքների դասակարգումը՝ դրանք բաժանելով երեք կարգախմբի.

1. Ուղղակի մշակութային արժեքներ, իսկ կոնկրետ՝ ճարտարապետական և արվեստի հուշարձաններ՝ կրոնական կամ աշխարհիկ, հնագիտական վայրեր, պատմական կամ գեղարվեստական արժեքներ կայացնող ճարտարապետական ամբողջություններ, արվեստի ստեղծագործություններ, ձեռագրեր, գրքեր, ինչպես նաև գիտական հավաքածուներ կամ գրքերի կարևոր հավաքածուներ, արխիվային նյութերի կամ վերը նշված արժեքների վերարտադրություններ:

2. Շենքեր, որոնց հիմնական նշանակությունը առաջին կարգախմբում հիշատակված շարժական մշակութային արժեքների պահումն ու ցուցադրումն է: Դրանց շարքին են դասվում թանգարանները, խոշոր գրադարանները, արխիվային պահոցները:

3. Մշակութային արժեքների համախմբման կենտրոնները: Կոնվենցիան այս կարգախմբին է դասում այն կենտրոնները, որտեղ կենտրոնացված են մեծ քանակությամբ մշակութային արժեքներ: Որպես մշակութային արժեքների համախմբման կենտրոններ կարող են ճանաչվել նաև ամբողջական քաղաքներ, ինչպիսիք են Ֆլորենցիան, Վենետիկը: Կոնվենցիայում փրկված սահմանումը շարքայն է և առավել լիակատար, սա պայմանավորված է այն հարաբերություններով, որոնք նա կոչված է կարգավորել, ինչպես նաև «մշա-

կութային արժեք» հասկացության փակ ընկնող օբյեկտների հնարավորինս մեծ քանակություն ընդգրկելու ձգտմամբ:⁵ Մշակութային արժեքների հասկացությունը ընդգրկող հաջորդ միջազգային ակտերն են հանդիսանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ ընդունված երկու փաստաթուղթ: 1964թ. նոյեմբերի 19-ին ընդունվել է «Մշակութային արժեքների անօրինական ներմուծման, արտահանման, սեփականության իրավունքի փոխանցման արգելքին և նախազգուշացմանը ուղղված միջազգառումների մասին» Առաջարկությունը, իսկ մյուսը՝ 1970թ. նոյեմբերի 14-ին՝ «Մշակութային արժեքների անօրինական ներմուծման, արտահանման, սեփականության իրավունքի հանձնման և նախազգուշացմանն ուղղված միջոցների մասին» կոնվենցիան (Ներազայում՝ 1964թ. Նամաձայնագիր, 1970թ. Կոնվենցիա):

Նամաձայնագրի առաջին կետը սահմանում է «մշակութային արժեքները» որպես շարժական և անշարժ գույք, որը մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի մշակութային հարստության համար: Պետություններին խորհուրդ է փոխում սահմանել չափանիշներ՝ նրանց փարաձքում գտնվող պատմամշակութային արժեքները «երկրի մշակութային հարստության համար կարևոր նշանակություն ունեցող» կարեգործային դասելու համար: Նամաձայնագիրը ներկայացնում է հետևյալ առարկաների ցանկը՝ արվեստի և ճարտարապետության սրբեղծագործություններ, ձեռագրեր, գրքեր, արվեստի, պատմության կամ հնէաբանության փաստանկյուններից արժեք ներկայացնող առարկաներ, ազգագրական փաստաթղթեր, ֆլորայի և ֆաունայի փիպիկ նմուշներ, գրքերի գիտական հավաքածուներ, երաժշտական արխիվներ:⁶

1970թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածը «մշակութային արժեքները» սահմանում է որպես «կրոնական կամ աշխարհիկ բնույթի արժեքներ,

⁵ Տե՛ս K.Chamberlain, «The protection of cultural property in armed conflict. Art, antiquity and law», Vol.8, N3, 2003, pages 110-150:

⁶ Տե՛ս Recommendation on the Means of Prohibiting and Preventing the Illicit Export, Import and Transfer of Ownership of Cultural Property, (www.icomos.org/unesco/illicit64.html), at 20.07.2010.

որոնք յուրաքանչյուր պեպրության կողմից դիտարկվում են որպես հնէաբանության, մինչպատմական շրջանի, պատմության, գրականության, արվեստի և գիտության համար նշանակություն ունեցող արժեքներ»: 1970թ. Կոնվենցիան «մշակութային արժեքները» չի բաժանում շարժականի և անշարժի, բայց, ըստ Կոնվենցիայի բովանդակության, նախ և առաջ նկատի են առնվում շարժական օբյեկտները:

Կոնվենցիան «մշակութային արժեքները» բաժանում է 11 կատեգորիայի.

1. Եզակի հավաքածուներ, ֆլորայի ու ֆաունայի, հանքագիտության, անատոմիայի նմուշներ և պալեոնթոլոգիայի համար հեղափոխություն ներկայացնող առարկաներ:

2. Պատմությանը, գիտությանը, տեխնիկային, պատերազմներին և հասարակության պատմությանը վերաբերող, ինչպես նաև ազգային գործիչների, մտածողների, գիտնականների և արտիստների կյանքին վերաբերող արժեքներ:

3. Ննջաբանական հայտնաբերումներ /ներառյալ սովորական և գաղտնի/ և հնէաբանական բացահայտումներ: Գաղտնիքներին վերաբերվում են առանց պեպրության հատուկ թույլտվության, անօրինական իրականացվող պեղումների ընթացքում ձեռք բերված հայտնաբերումները:

4. Անդամարված գեղարվեստական և պատմական հուշարձանների և պատմական վայրերի բաղկացուցիչ մասերը:

5. Ավելի քան 100 տարվա վաղեմության հինավուրց առարկաներ, ինչպիսիք են՝ մակագիրներ, քանդակադրոշմած մեդալադրամներ և կնիքներ:

6. Ազգագրական նյութեր:

7. Գեղարվեստական արժեքներ, որոնք ներառում են կտավներ, նկարներ, պարկերներ, ցանկացած նյութից քանդակագործական արվեստի ինքնօրինակ ստեղծագործություններ, ինքնատիպ փորագրություններ, փորագրանկարների արտատիպեր և վիճակագրություններ:

8. Եզակի ձեռագրեր և ինկունաբույներ, հինավուրց գրքեր, փաստաթղթեր և հրատարակումներ:

9. Փոստային, հարկային և համանման նամականիշներ՝ առանձին և հավաքածուներով:

10. Արխիվներ, այդ թվում՝ ֆոնո, ֆոտո և կինոարխիվներ:

11. Ավելի քան 100 տարվա վաղեմության կահույք և հինավուրց երաժշտական գործիքներ:⁷

Եթե համեմատենք 1964թ. Նամաձայնագրի և 1970թ. Կոնվենցիայի սահմանումները 1954թ. Նաագայի կոնվենցիայի սահմանման հետ, ապա կնկատենք, որ Նամաձայնագրում և 1970թ. Կոնվենցիայում փոփոխված սահմանումներում ուղիղ կերպով նախատեսված է պեպրությունների իրավունքը՝ որոշելու, թե ինչն է հանդիսանում մշակութային արժեք՝ ելնելով փյույակ ազգի և պեպրության համար ներկայացրած արժեքից: Ընդլայնված սահմանումներ են ընդգրկված նաև 1972թ. «Նամաշխարհային մշակութային ժառանգության և բնական ժառանգության պահպանման մասին» կոնվենցիայում, որը մշակութային ժառանգության շարքին է դասում անշարժ օբյեկտների երեք կատեգորիաներ՝ հուշարձաններ, ամբողջություններ և փեսարժան վայրեր: Որպես «մշակութային արժեքներ» 1972թ. Կոնվենցիայի պահպանվող կատեգորիաներին դասելու հիմնական չափանիշ ընդունված է «համընդհանուր ճանաչված արժեք» չափանիշը: Սակայն Կոնվենցիայում չի հստակեցվում, թե այս չափանիշի փակ ինչ է հասկացվում: Ինչ-որ չափով «համընդհանուր ճանաչված արժեք» չափանիշի մեկնաբանությանը կարող է նպաստել Կոնվենցիայի պրեամբուլայում նշված այն մասը, որտեղ խոսքը «եզակի և անփոխարինելի արժեքների» պահպանման մասին է՝ անկախ այն բանից, թե որ ազգին են դրանք պատկանում:⁸

⁷ Стн Международные нормативные акты ЮНЕСКО, Москва, 1993г., стр.300-303.

⁸ Стн Convention concerning the protection of the world cultural and Natural heritage adopted by the General Conference at its seventeenth session in Paris, 16 november 1972, Paris, UNESCO, 1972, page 16:

Ի փարբերություն 1972թ. Կոնվենցիայի, 1972թ. «Ազգային առումով մշակութային ժառանգության պահպանության մասին» Առաջարկությունում վերը նշված «համընդհանուր ճանաչված արժեք» չափանիշը չի առանձնանում: Բացի դրանից, նրա պրեամբուլայում նշվում է, որ «մշակութային և բնական ժառանգության ցանկացած առարկա եզակի է, և յուրաքանչյուր երկիր, որի փարածքում գտնվում են մշակութային և բնական ժառանգության առարկաներ, պարտավոր է պահպանել մարդկային ժառանգության այդ մասը և ապահովել դրա փոխանցումը հետագա սերունդներին»: 1972թ. Կոնվենցիան, ի փարբերություն Նասագայի կոնվենցիայի, կիրառվում է միայն խաղաղ ժամանակաշրջանում, որն էլ իր հերթին ընդլայնել է մեկնաբանումը՝ մշակութային արժեքներից բացի ներառելով նաև բնական ժառանգությունը: Տվյալ Կոնվենցիայի 2-րդ հոդվածում բնական ժառանգության փակ հասկացվում են գեղագիտության կամ գիտության փեսանկյունից երևելի արժեք ունեցող ֆիզիկական, կենսաբանական գոյացություններից առաջացած բնական հուշարձանները:⁹

«Շարժական մշակութային արժեքներ» հասկացության ամենաձավալուն սահմանումը տրվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1978թ. «Շարժական մշակութային արժեքների պահպանության մասին» Առաջարկությունում: Այս տերմինի փակ ենթադրվում են «բոլոր շարժական արժեքները, որոնք հանդիսանում են մարդու ստեղծագործության կամ բնության էվոլյուցիայի արտահայտում կամ վկայություն, և որոնք հնէաբանական, պատմական, գեղարվեստական, գիտական կամ փոխնիկական փեսանկյուններից ունեն արժեք»: Առաջարկության հոդված 1-ում նշվում է 11 կատեգորիաներից բաղկացած ցանկ, որը մասամբ փարբերվում է 1970թ. Կոնվենցիայի առարկաների ցանկից: Դրանք են.

1. Վերերկրյա և ստորջրյա հնէաբանական ուսումնասիրություն-

⁹ Sten International Journal of Heritage Studies, Vol.12, N3, May 2006, pages 290-293:

ների և պեղումների արդյունքում ձեռք բերված հայտնաբերումները,

2. Նույնություններ, ինչպիսիք են՝ խեցեգործական առարկաները, մականգիրները, մետաղադրամները, կնիքները, թանկարժեք իրերը, գեները, թաղմանը վերաբերող առարկաներ, մումիաներ,

3. Անդամահաբանան ենթարկված պատմական հուշարձանների պարրեր,

4. Մարդաբանական և էթնիկ նյութեր,

5. Պատմական արժեքներ,

6. Գեղարվեստական արժեքներ,

7. Մոնոսկրիպներ և ինկունաբուլներ, օրենսգրքեր, գրքեր, փաստաթղթեր և հրատարակություններ,

8. Դրամագիտության և ֆիլատելիայի պեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող առարկաներ/կրծքանշաններ և մետաղադրամներ/,

9. Արխիվային փաստաթղթեր, քարտեզներ, քարտեզագրական նյութեր, լուսանկարներ, կինոֆիլմեր, ձայնագրություններ,

10. Կահույք, գորգեր, հագուստ, երաժշտական գործիքներ,

11. Կենդանաբանական, բուսաբանական և երկրաբանական նմուշներ:¹⁰

Ինչպես տեսնում ենք, այս ցանկը ավելի ընդլայնեց «մշակութային արժեքներ» հասկացությունը: Այնուհետև անհրաժեշտ է հատուկ կանգ առնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի երկու՝ ավելի ուշ ընդունված համաձայարականներին: 1980թ. «Շարժական պատկերների պաշտպանության և պահպանման մասին» Առաջարկությունը, որը լրացրեց և կոնկրետացրեց վերը նշված ցանկը՝ իրավաբանական բառապաշարում ավելացնելով «շարժական պատկերներ» նոր տերմինը: Առաջարկության 1-ին հոդվածի համաձայն՝ «շարժական պատկերները» պետք է հասկանալ որպես կրիչի վրա ֆիքսված պատկերների շարք /օրինակ՝ կինոստապավենը, մագնիսական ժապավենը, սկա-

¹⁰ Տե՛ս RECOMMENDATION FOR THE PROTECTION OF MOVABLE CULTURAL PROPERTY, (www.icomos.org/unesco/moveable78.html), at 24.07.2010.

վառակը/¹¹ ճայնային վերարտադրմամբ կամ առանց, որոնք շարժական օբյեկտներն են թողնում և նախատեսված են հաղորդակցության կամ ցուցադրության համար: 1980թ. Առաջարկությունը դրանց շարքին է դասում՝ կինեմատոգրաֆիական սրբապատկերները, հեռուստատեսային սրբապատկերները և վիդեոգրաֆիկական սրբապատկերները:՝ Իսկ 1989թ. հոկտեմբերի 15-ին Գլխավոր կոնֆերանսի 25-րդ նիստի ժամանակ ընդունված Առաջարկությունը նվիրված է համալիր բանահյուսության խնդիրներին: Ինչպես նշվում է Առաջարկության փոստամուկում՝ «բանահյուսությունը, լինելով անհատական կամ կոլեկտիվ ինտելեկտուալ սրբապատկերական դրսևորման ձև, հանդիսանում է մարդկության ընդհանուր ժառանգության մի մաս, ինչպես նաև փոքր ժողովուրդների մերձեցման հզոր միջոց, այդ պատճառով էլ արժանի է ինտելեկտուալ սրբապատկերությունների պահպանությանը համանման իրավական պաշտպանության»: Բանահյուսությունը ներառում է մասնավորապես լեզուն, գրականությունը, երաժշտությունը, պարը, խաղերը, դիցաբանությունը, ծեսերը, ավանդույթները, արհեստները, ճարտարապետությունը և գեղարվեստական սրբապատկերության այլ տեսակներ:՝

2001թ. Փարիզում Գլխավոր կոնֆերանսի շրջանակներում ընդունվեց ևս մի Կոնվենցիա «Սպորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մասին»: Կոնվենցիան մեծ նշանակություն փոխեց սպորջրյա ժառանգությանը, դիտարկելով այն որպես մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս: Գիտակցելով սպորջրյա մշակութային ժառանգության մեծ նշանակությունը և այն բոլոր վտանգները, որոնք սպառնում են այդ ժառանգության ոչնչացմանը,

¹¹ Տե՛ս Recommendation for the Safeguarding and Preservation of Moving Images, (http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13139&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html), available at 24.07.2010:

¹² Տե՛ս Recommendation on the Safeguarding of Traditional Culture and Folklore, (www.un-documents.net/folklore.htm), available at 25.07.2010:

կոնվենցիայի նպատակն էր ապահովել և ուժեղացնել այդ «մշակութային ժառանգության» պահպանումը: Կոնվենցիան, «Ստորջրյա մշակութային ժառանգություն» ասելով, նկատի ունի ստորջրյա գրածոները, որոնք ունեն մշակութային, պատմական կամ հնագիտական բնույթ, որոնք 100 փարուց ոչ պակաս, մասամբ կամ ամբողջովին, գտնվում են ջրի տակ: Դրանք են՝ շինությունները, մարդկային մնացորդները, նավերը, այլ փոխադրամիջոցները, խողովակները և այլն:¹³ 2003թ. հոկտեմբերի 17-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում ընդունվեց նոր՝ «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին» միջազգային կոնվենցիան, որը նույնպես կիրառվում էր միայն խաղաղ ժամանակաշրջանում: Այն համաշխարհային ժառանգության հասկացության մեջ ներմուծեց մշակութային արժեքների նոր տեսակ՝ ոչ նյութական մշակութային արժեքներ, այսինքն՝ սովորույթներ, տոնակատարություններ, արտահայտչամիջոցներ, ազգային արհեստների տեսակներ, ինչպես նաև լեզուն, որը նույնպես դասակարգվեց որպես ոչ նյութական մշակութային ժառանգության մի մաս: /h. 2/¹⁴

«Cultural property» և «das Kulturgut-biens culturels» հասկացության հետ մեկտեղ (բառացի՝ մշակութային սեփականություն), որը թարգմանաբար նշանակում է մշակութային արժեքներ կամ մշակութային հարստություն՝ կախված համատեքստից, ունիվերսալ և փարածաշրջանային բնույթի միջազգային իրավական ակտերի մեծ մասում կիրառվում է նաև «cultural heritage-das Kulturerbe-patrimoine cultural-մշակութային ժառանգություն» տերմինը: Այսպիսով, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային իրավական ակտերի վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ «մշակութային արժեքներ», «մշակութային ժառանգություն կամ պատմամշակութային արժեքներ» տերմինները համարժեք հասկացություններ են: Այս

¹³ Տե՛ս Convention on the protection of the underwater cultural heritage, (<http://unesdoc.unesco.org/images/0012/001260/126065e.pdf>), available at 02.08.2010:

¹⁴ Տե՛ս Convention for the safeguarding of the intangible cultural, (heritage,<http://unesdoc.unesco.org/images/0013/001325/132540e.pdf>), available at 06.08.2010:

ամենի հետ մեկտեղ անհրաժեշտ է ընդգծել նաև, որ գործնականորեն «պարմամշակութային ժառանգություն» և «մշակութային հարսություն կամ ժառանգություն» տերմինները ամբողջովին համափոխարինելի են ոչ միայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի ակտերի, այլև, ընդհանուր առմամբ, միջազգային իրավունքի շրջանակներում: Ինչպես տեսանք, ամեն մի իրավական փաստաթուղթ, ելնելով իր կարգավորման առարկայից, տալիս է «պարմամշակութային արժեքների» իր սահմանումը: Գործող միջազգային իրավական փաստաթղթերում հիմնականում գործածվում են երկու տերմին՝ «մշակութային ժառանգություն» և «մշակութային արժեքներ»: Ժամանակակից միջազգային իրավունքի մեջ «պարմամշակութային ժառանգության» տակ հասկացվում են մշակույթի այն օբյեկտները, որոնք հատուկ արժեք ունեն հնէաբանության, պարմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից: «Մշակութային արժեքների» տակ հասկացվում է այն շարժական կամ անշարժ գույքը, որն ունի կարևոր նշանակություն յուրաքանչյուր երկրի մշակութային հարսության համար (առաջին հերթին՝ արվեստի և ճարտարապետական սրելծագործություններ, ձեռագրեր, գրքեր և արվեստի, պարմության կամ հնէաբանության տեսանկյունից արժեք ներկայացնող այլ առարկաներ, էթնիկ փաստաթղթեր, ֆլորայի և ֆաունայի տիպիկ նմուշներ, գիտական գրքերի և արխիվային փաստաթղթերի կարևոր հավաքածուներ): Ընդհանուր առմամբ, վերը նշված հասկացությունը պետք է համարել օրինակելի, գործառնական բնույթ ունեցող: Այսպիսի մեկնաբանությամբ երկու հասկացություններն էլ շատ ընդհանրություններ ունեն, որը հիմք է տալիս խոսել նրանց՝ որպես նույն հասկացությունների մասին: Մշակութային ժառանգության կամ մշակութային արժեքների օբյեկտները սահմանելիս՝ հարկավոր է նկատի ունենալ, որ այդ օբյեկտները պետք է օժտված լինեն համընդհանուր արժեքով՝ պարմության, արվեստի, գիտության, գեղագիտության և այլ տեսանկյուններից և՛ բնօրինակ լինելու բարձր աստիճանով: Ընդ որում,

պեպք է համաձայնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի այն կարծիքին, որ յուրաքանչ-յուր պեպություն ինքն է որոշում որևէ օբյեկտ մշակութային արժեքների կատեգորիային դասելու չափանիշները: Պեպք է նաև նշել, որ մի շարք միջազգային ակտերում վերջին տարիներին սկսել են օգտագործել նաև «cultural patrimony» նոր տերմինը, որն իմաստային առումով ունի «մշակութային ժառանգություն» նշանակությունը և դասակարգվում է որպես պեպության հարստություն, և այդ իսկ պարճառով ենթակա չէ երկրից արտահանման:¹⁵ Բացի մշակութային արժեքներ, պատմամշակութային ժառանգություն, մշակութային հարստություն հասկացությունների գործածման տերմինաբանական առանձնահատկություններից, կարելի է նկատել, որ միջազգային իրավական ակտերից մի քանիսում խոսվում է նաև մարդկության համաշխարհային մշակութային ժառանգության մասին, իսկ մյուսներում՝ ժողովուրդների մշակութային ժառանգության մասին: Նամաշխարհային մշակութային և բնական ժառանգությունը, չնայած դրա առանձնահատուկ բազմազանությանը, հանդիսանում է ազգային պատմամշակութային արժեքների միայն մի մասը՝ տարբերվելով միայն «համընդհանուր ճանաչված արժեք» չափանիշով:

Վերը մեջբերված բոլոր միջազգային իրավական աղբյուրները բխում են պեպությունների ինքնիշխանության սկզբունքից: Դրանք բոլորը այս կամ այն կերպով վերաբերում են պեպության այն չափանիշների սահմանման իրավասությանը, որոնցով նա իր տարածքում գտնվող մշակութային արժեքները դասում է մարդկության մշակութային ժառանգության շարքը:

¹⁵ Stin Cultural property v. cultural heritage. A battle of concepts in international law?, Manlio Frigo, (http://www.provincia.asti.it/hosting/moncalvo/pbc/frigo_ricr.pdf), available at 10.08.2010:

**1.2. Պատմամշակութային ժառանգության իրավական
վիճակին վերաբերող միջազգային իրավական
փաստաթղթերը**

Սկսած 1960-ական թվականներից, շար երկրներում պատմական, գեղարվեստական և մշակութային արժեքների նկատմամբ ուրնձգությունները մեծ փարածում գրան, որն սրիպեց երկրներին կարևորել մշակութային արժեքների իրավական պաշտպանությունը: Այսօր գործում են մշակութային արժեքների իրավական պաշտպանությանը նվիրված ինչպես միջազգային, այնպես էլ ներպերական բնույթի բազմաթիվ նորմատիվ իրավական ակտեր: Մշակութային արժեքների և պատմամշակութային փարերի պահպանության և պաշտպանության գոյացումը և նորմատիվային կարգավորումը գարգացման, կարարելագործման և նորացման երկար ճանապարհ են անցել: Այն ճանապարհը, որը պերք է անցներ արվեստի սրեղծագործությունների պահպանության գաղափարը մինչև միջազգային իրավական պաշտպանության փուլը, բարդ էր: Միջազգային հարարերությունների բնույթը ոչ միշտ էր ապահովում այս ուղղությամբ միջազգային միջոցների ձեռնարկումը, իսկ անընդմեջ միջպերական ընդհարումները, պարերազմները և թույլ համագործակցությունը խոչընդոտում էին մշակութային արժեքների պաշտպանության նորմերի սրեղծմանը: Պատմական անցյալում, միջնադարում և ընդհուպ մինչև Վերածնունդ, մշակութային արժեքների պահպանման հարցում էական փոփոխություններ սրեղի չունեցան: Վերածնունդը ինչպես արևմուտքի, այնպես էլ արևելքի արվեստում և մշակույթում արմարապես փոխեց վերարերմունքը մարդու հոգևոր սրեղծագործական գործունեության նկատմամբ: Միջազգային իրավական գիտության հիմնադիրներից մեկը՝ Ալբերիկո Ջենթիլին, իր «Պարերազմի իրավունքի մասին» աշխարության մեջ առաջադրեց արվեստի առարկաների պաշտպանության հարցը: Մշակութային

արժեքների պաշտպանության հարցում մեծ դեր ունեցավ Ֆրանսիական Մեծ հեղափոխության Կոնվենտը, որն առաջ քաշեց մշակույթի հուշարձանների պաշտպանության գաղափարը: 1791թ. Կոնվենտի հրամանագրով պարմական հուշարձանները առաջին անգամ հայտարարվեցին համազգային հարստություն, իսկ մասնավոր հավաքածուները ազգայնացվեցին:¹⁶ 19-րդ դարի ընթացքում հասարակական կարծիքը առավել հաճախ հակվում էր մշակութային արժեքների պաշտպանության օգտին, սակայն այս խնդիրը լուծում չգտավ ընդհուպ մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը, երբ սկսեցին ընդունվել իրավական ակտեր, որոնք արգելում էին ոչնչացնել և թալանել ազգերի մշակութային հարստությունը:

Մշակութային արժեքների պահպանության մասին առաջին հիշարակումները ներառվում են Բրյուսելյան հռչակագրում: Պարերազմի օրենքների կողիֆիկացման գծով միջազգային կոնֆերանսը փեղի ունեցավ 1874թ. Բրյուսելում: Որպես կոնֆերանսի նախաձեռնող հանդես եկավ Ռուսաստանը, իսկ կոնֆերանսի նպատակը պետությունների գինված ընդհարումների ժամանակ մարդկային փառապանքների նվազեցումն էր՝ պարերազմի օրենքների և սովորույթների համակարգման միջոցով: Այդ հռչակագրում նախատեսվում էր, որ յուրաքանչյուր զավթում, ինչպես նաև կրթական, գիտական և գեղարվեստական հաստատությունների, հուշարձանների, գեղարվեստական սրբաշնորհությունների կանխամրաված ավերումը, վնասումը հետապնդվում է իշխանության կողմից: Հռչակագիրը չվավերացվեց, սակայն նրա ընդունումը որոշակի դեր խաղաց պարերազմի օրենքների և սովորույթների մասին միջազգային նորմերի սրբաշնորհական գործընթացում:¹⁷ Իսկ 1886թ. սեպտեմբերի 8-ին

¹⁶ Стів А.С.Соколов, «История правовой защиты культурных ценностей», Изв. Рос.гос.пед.ун-та им.А.Герцена,2009г., N 118, ст.320-325.

¹⁷ Стів Мартенс Ф, Восточная война и Брюссельская конференция 1874 — 1878 г., 1879г,стр.50-55.

ստեղծվեց Գրականության և արվեստի պահպանման առաջին Միջազգային միությունը /Union International pour la Protection des oeuvres Litteraires et Artistiques/, որի հիմնադիրներից էր նոր կազմավորված Գերմանական կայսրությունը: Ներագայում՝ 1899թ., Նաագայում, նորից Ռուսաստանի առաջարկով, կազմակերպվեց Կոնֆերանս, որին մասնակցեցին 26 պետություններ՝ Ավստրո-Նոնգարիան, Գերմանիան, Բելգիան, Չինաստանը, Դանիան, Իսպանիան, ԱՄՆ-ը, Մեքսիկան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Նոնաստանը, Իտալիան, Ճապոնիան, Լյուքսեմբուրգը, Չեոնոգորիան, Իրանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբիան, Սիամը, Շվեդիան, Նորվեգիան, Շվեյցարիան, Բուլղարիան: Կոնֆերանսը կոչվեց «խաղաղ», որովհետև դրա պաշտոնական նպատակը գենքի սահմանափակումն էր և խաղաղության ապահովումը: Ջենքի սահմանափակման իմաստով ոչ մի արդյունք չգրանցվեց, սակայն Կոնֆերանսը հանգեցրեց երեք Կոնվենցիաների ընդունման և ստորագրման: Դրանք են՝ «Միջազգային վեճերի խաղաղ դադարեցման մասին», «Ցամաքագնաց պատերազմների օրենքների և սովորույթների մասին» և «Վիրավորների ու հիվանդների վերաբերյալ Ժնևյան Կոնվենցիայի կիրառման մասին» կոնվենցիաները:¹⁸

Սակայն 1907թ. (հունիսի 15 - հոկտեմբերի 18) նորից Նաագայում գումարվեց երկրորդ կոնֆերանսը, որը դարձավ առաջին միջազգային համաձայնությունը, որն արգելում էր մշակույթի հուշարձանների ավերումը և դրանց բռնագրավումը պատերազմական գործողությունների ժամանակ, որն էլ հետագայում էապես ազդեց հարուցման ինստիտուտի ստեղծման վրա: Կոնֆերանսին մասնակցեցին Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի մի շարք երկրների ներկայացուցիչները: Կոնֆերանսում ընդգրկված էին պատերազմի ժամանակ

¹⁸ Стів Франсуа Бюньон «Право Женевы и право Гааги», ([http://www.icrc.org/web/rus/siteuser0.nsf/html/irrc-841-844-2001/\\$File/07_IRRC_844_Bugnion_RUS.pdf](http://www.icrc.org/web/rus/siteuser0.nsf/html/irrc-841-844-2001/$File/07_IRRC_844_Bugnion_RUS.pdf)), available at 15.08.2010:

մշակութային արժեքների պահպանությանը վերաբերող մի քանի կետեր: Իսկ կոնկրետ՝ րվյալ Կոնվենցիայի 27-րդ և 56-րդ հոդվածներում հիշատակվում է մշակութային արժեքների պահպանության մասին: «Պարերազմական գործողությունների մասին» հոդված 27-ի 2-րդ բաժնում ասվում է, որ «շրջապատումների և ռմբակոծումների դեպքում պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեն՝ հնարավորինս խնայելու համար փաճարները, գիտությանը, արվեստին և բարեգործությանը ծառայող շենքերը, պատմական հուշարձանները, հիվանդանոցները և այն վայրերը, որտեղ հավաքված են հիվանդներ և վիրավորներ՝ այն պայմանով, որ այդպիսի շենքերը միաժամանակ չծառայեն ռազմական նպատակներին: Շրջապատվածները պարտավոր են նշել այդ շենքերը և տեղերը հատուկ տեսանելի նշաններով, որոնց մասին շրջապատողները պետք է տեղեկացված լինեն նախօրոք»: Իսկ «Նակառակորդ պետության փարածքում ռազմական իշխանության մասին» հոդված 56-ի 3-րդ բաժնում նշվում է, որ «Նամայնքների, եկեղեցական, բարեգործական և կրթական, գեղարվեստական և գիտական հաստատությունները, եթե անգամ դրանք պետությանը պարկանող սեփականություն են, հավասարեցվում են մասնավոր սեփականությանը: Նմանափայ հաստատությունների, պատմական հուշարձանների, գեղարվեստական և գիտական սրբեղծագործությունների կանխամտածված զավթումը, ոչնչացումը կամ վնասումը արգելվում է և ենթակա է հետապնդման»:¹⁹

Կոնվենցիան ամբողջովին նվիրված չէ մշակութային արժեքների պահպանությանը, սակայն այստեղ արդեն ուղիղ կերպով ասվում է, որ անհրաժեշտ է խնայել փաճարները, գիտության, արվեստի նպատակներին ծառայող շենքերը, պատմական հուշարձանները, չնայած և՛ «ինչքան հնարավոր է» նշումով: Այստեղ արդեն իսկ հիշատակվում է հատուկ և տեսանելի նշաններով րվյալ կառույցները

¹⁹ Sten Peace treaties and international law in European History, Cambridge University Press, 2004, pages 255-265:

նշելու անհրաժեշտությունը: Իսկ հոդված 56-ում ուղիղ կերպով նշվում է րվյալ հասարակությունների կանխամտածված զավթման կամ ոչնչացման դեպքում հետապնդման մասին:²⁰ Ինչ վերաբերում է խաղաղ ժամանակաշրջանում մշակութային արժեքների պահպանության կարգավորմանը, ապա րվյալ ժամանակահատվածում այն իրենից միջազգային իրավունքի առարկա դեռ չէր ներկայացնում:

Ամբողջովին մշակութային արժեքների պաշտպանությանը նվիրված առաջին փաստաթուղթը հանդիսանում է 1935թ. ապրիլի 15-ին, Սպիտակ րանը Ամերիկայի 21 նահանգների կողմից ստորագրված «Գեղարվեստական և գիտական հասարակությունների և պարմական հուշարձանների պահպանության մասին» պայմանագիրը, որն ավելի հայտնի է «Րերիխի պակտ» անվանումով: Այն առաջին միջազգային համաձայնագիրն է, որն ամբողջովին նվիրված է մշակութային արժեքների պաշտպանության հարցին և որն էլ դարձավ մշակութային արժեքների պաշտպանության ժամանակակից միջազգային իրավական համակարգի հիմնական հիմնասյունը: Պայմանագրի ստորագրմանը նախորդում էին մի շարք ոչ պաշտոնական հանդիպումներ, որոնք կայացան Բրյուզում և Վաշինգտոնում 1931թ., 1932թ. և 1933թ.: Րերիխի պակտը ուժի մեջ մտավ 1935թ. օգոստոսի 26-ին և ներկայումս այն միավորում է արևմտյան կիսագնդի 11 պետություններ, այդ թվում՝ ԱՄՆ-ը:²¹ Տվյալ պայմանագրի առանձնահատկությունը այն է, որ

1. այն պարմության մեջ առաջին պաշտոնական պայմանագիրն էր, որն ամբողջապես նվիրված էր մշակութային արժեքների պահպանության թեմային.

2. առաջին անգամ պայմանագիրը վերաբերում էր մշակութային

²⁰ St'ın Convention with respect to the laws and customs of war on land (HAGUE, II) (29 July 1899), (http://avalon.law.yale.edu/19th_century/hague02.asp), available at 20.08.2010:

²¹ St'ın Александров Е., «Пакт Периха и международная охрана памятников истории и культуры», София, 1978г., стр.5-10:

արժեքների պաշտպանությանը ինչպես պատերազմական, այնպես էլ խաղաղ ժամանակաշրջանում.

3. հուշարձանները և հասարակությունները նշելու համար օգտագործվում է հարուկ փարբերակիչ նշան՝ Խաղաղության նշան.

4. կազմվում է պաշտպանության ենթակա հուշարձանների և հասարակությունների ցանկը.

5. առաջարկվում է արգելել պատերազմական նպատակներով դրանց օգտագործումը.

6. կառավարություններին առաջարկվում է պահպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ներքին օրենսդրության բնագավառում:

Տվյալ պակտի հոդված 1-ում սավում է. «Պատմական հուշարձանները, թանգարանները, գիրական, գեղարվեստական, կրթական և մշակութային հասարակությունները համարվում են չեզոք, և որպես այդպիսին, հարգվում և պաշտպանվում են պատերազմողների կողմից: Նման կերպով հարգվում և պաշտպանվում են վերը նշված հասարակությունների աշխարակիցները: Նմանափայ հարգանքը և պաշտպանությունը փարածվում է նաև պատմական հուշարձանների, թանգարանների, գիրական, գեղարվեստական, կրթական և մշակութային հասարակությունների վրա ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ խաղաղ շրջանում»: ²² Րերիխի պակտը առաջին անգամ հստակ և կարեգորիկ կերպով միջազգային իրավունքում սահմանեց մարդկության համար մշտնջենական նշանակություն ունեցող մշակութային արժեքների պաշտպանության և առաջնայնության սկզբունքը, որն անհարար և կոնյուկտոր նշանակություն ուներ: Մտորագրելով պակտը՝ մարդկությունը ձեռք էր բերում մեծ հնարավորություն փրկելու մշակութի շար անգին գանձերը Երկրորդ համաշխարհային պատերազմից:

²² Տևս Шиббаева В.А, «Пакт Рериха по сохранению культурных ценностей человечества», Краткий исторический очерк, Сборник, Рига, 1935, стр.57-74:

Մշակութային արժեքների պաշտպանության իրավունքի ինստիտուտի հետագա զարգացումը Կոնվենտի ունեցավ՝ կապված Երկրորդ համաշխարհային պատերազմի իրադարձությունների հետ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ևս մեկ հնարավորություն բաց թողնվեց պահպանել Ռեբիխի պակտով գրաված դիրքերը մշակութային արժեքների միջազգային պաշտպանության հարցում: Աշխարհի ոչ բոլոր երկրներին առաջարկվեց միանալ պակտին, և այդ պատճառով այն մնաց որպես երկու Ամերիկաների կողմից ստորագրված փարաձառջանային պայմանագիր:²³

Միջազգային և գլխավոր համագործակցության, այդ թվում՝ մշակութային արժեքների պաշտպանության խնդիրների լայն շրջանով զբաղվող հիմնական միջազգային միջկառավարական կազմակերպությունը կրթության և մշակույթի գծով Միացյալ ազգերի կազմակերպությունն է /ՅՈՒՆԵՍԿՕ/, որի գործունեությունը փարաձվում է աշխարհի բոլոր երկրների վրա: Այն ստեղծվել է 1945թ. Լոնդոնում, 44 երկրների կոնֆերանսի ժամանակ: Դրան անդամակցում են աշխարհի 160 երկրներ: ՅՈՒՆԵՍԿՕ-ն մասնակից պետություններին օգնում է նրանց մշակութային ժառանգության պահպանության հարցում, միջոցառումների կազմակերպման գործում, նպաստում է այս բնագավառում Կոնվենտի փոխանակմանը, իրականացնում է միջազգային կոնվենցիաների և առաջարկությունների նախապատրաստում:²⁴

Ժամանակային առումով Ռեբիխի պակտին հաջորդում է 1954թ. «Զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պահպանության մասին» Նաագայի կոնվենցիան և դրան կից 1954թ. Արձանագրությունը: Կոնվենցիան և դրան կից Արձանագրությունը ընդունվել են Միջկառավարական կոնֆերանս, որը գումարվել էր

²³ St'u M.Кущарова, «Пакт Периха — основа международно-правовой системы защиты женностей культуры и ее будущее», Культура и время, 2005г. N4(18):

²⁴ St'u UNESCO, (www.unesco.org), available at 24.08.10:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գործադիր խորհրդում, Գլխավոր կոնֆերանսի քանաձևին համապատասխան: Նիդերլանդների կառավարության հրավերով այս կոնֆերանսը անց էր կացվում Նաագայում, 1954թ. ապրիլի 21-ից մայիսի 14-ը: Նրավիրված 86 երկրներից կոնֆերանսին ներկայացվեցին 56-ը: Կոնվենցիան և Արձանագրությունը բաց էին կոնֆերանսին հրավիրված բոլոր պետությունների կողմից ստորագրման համար: 2004թ. դրությամբ Կոնվենցիայի մասնակիցներ էին հանդիսանում 113 պետություն, որից 89-ը միացան Արձանագրությանը:²⁵

Կոնվենցիան սկսվում է հետևյալ խոսքերով. «Պայմանավորվող Բարձր կողմերը, արձանագրելով, որ մշակութային արժեքներին վնաս է հասցվել վերջին զինված ընդհարումների ժամանակ, և որ ռազմական տեխնիկայի զարգացման արդյունքում դրանք ավելի ու ավելի են ենթարկվում ավերման սպառնալիքին...: Վստահ լինելով, որ յուրաքանչյուր ազգի մշակութային արժեքներին հասցվող վնասը հանդիսանում է վնաս ամբողջ մարդկության մշակութային ժառանգության համար, քանի որ յուրաքանչյուր ազգ իր ներդրումն ունի աշխարհի մշակույթի մեջ...»: Մյուս հետևում է կոնվենցիայի տեքստը, որի երեք գլխում ներառվում է 40 հոդված:²⁶

Առաջին գլուխը նվիրված է պահպանության մասին երկու դրույթներին: Դրանում մանրամասն դիտարկվում են.

1. Մշակութային արժեքների սահմանումը:

2. Մշակութային արժեքների պահպանման, պաշտպանման և հարգանքի հարցերը: Ուշադրություն է դարձվում դեռ խաղաղ շրջանում սեփական տարածքում գտնվող մշակութային արժեքների պահ-

²⁵ Տե՛ս K.Chamberlain, "War and cultural heritageian analysis of the 1954 Convention for the protection of cultural property in the event of armed conflict and its two protocols", Leicester,2004, pages.10-20:

²⁶ Տե՛ս Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict with Regulations for the Execution of the Convention 1954,http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13637&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html,available at 25.08.2010.

պանությանը նախապատրաստվելու անհրաժեշտությանը:

3. Առանձին դիտարկված է գավթումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության հարցը:

Համաձայն 1-ին գլխի 4-րդ հոդվածի 1-ին կետի, մշակութային արժեքները չպետք է լինեն թշնամական գործողությունների օբյեկտ և չպետք է օգտագործվեն որոշակի նպատակներով, քանի որ այն կբերի դրանց վնասմանը և ոչնչացմանը: Նենց նույն հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ «պարտականությունները նշված առաջին կետում կարող են խախտվել այն դեպքում, եթե ռազմական անհրաժեշտությունը պահանջում է այդպիսի ոչնչացում»: Կոնվենցիան նաև նախապայմաններ է առաջարկում այն մշակութային արժեքների նկատմամբ, որոնք ուղղված են պաշտպանությանը՝ նշելով, որ դրանք կարող են պաշտպանությունից զրկվել «անխուսափելի ռազմական անհրաժեշտության բացարձակ դեպքերի ժամանակ»: ²⁷ Երկրորդ գլխում դիտարկվում են շարժական մշակութային արժեքների պահպանման համար նախապետված թաքստոցների հատուկ պաշտպանության հարցերը: Կոնվենցիայի հոդված 8-ում սավում է, որ որոշակի պայմանների դեպքում զինված ընդհարումների ժամանակ «հատուկ պաշտպանության փակ վերցվում են սահմանափակ քանակությամբ շարժական մշակութային արժեքների պահպանության համար նախապետված թաքստոցներ, մշակութային արժեքների համախմբման կենտրոններ և շատ մեծ նշանակություն ունեցող ոչ շարժական այլ մշակութային արժեքներ»: Եվ այդ հատուկ պաշտպանությունը կատարվում է, դրանք «Հատուկ պաշտպանության փակ գրնվող մշակության արժեքների Միջազգային գրանցամատրյանում» ընդգրկելով: ²⁸

²⁷ Տե՛ս Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict with Regulations for the Execution of the Convention 1954, (http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13637&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html), available at 25.08.2010:

²⁸ Տե՛ս հղում 27:

Երրորդ գլուխը վերաբերում է մշակութային արժեքների փոխադրման խնդիրներին:

Չորրորդ գլխում դիտարկված է մշակութային արժեքների պահպանության համար նախատեսված անձնակազմի անվտանգության հարցը:

Նինգերորդ գլխում խոսվում է փարբերակիչ նշանի և դրա օգտագործման պայմանների մասին: Տվյալ գլխի հոդված 16-ում Բերխի կողմից առաջարկված «Խաղաղության դրոշակ» փարբերակիչ նշանը փոխարինվել է այլ նշանով, ավելի կոնկրետ՝ Կոնվենցիայի նշանով, որն իրենից ներկայացում է 4 կապույտ և սպիտակ մասերի բաժանված սրածայր վահան: Նշանը կիրառվում է մեկ անգամ կամ երեք անգամ եռանկյունի տեսքով՝ տվյալ գլխի հոդված 17-ում նշված պայմաններին համապատասխան:²⁹

Վեցերորդ գլխում դիտարկվում է Կոնվենցիայի կիրառման հարցը:

Իսկ գլուխ 7-ում խոսվում է Կոնվենցիայի կատարման մասին: Եզրափակիչ դրույթների հոդված 36-ը ասում է, որ «տվյալ կոնվենցիան լրացնում է նախորդ կոնվենցիաները և այնպեղ նշված փարբերակիչ նշանները փոխարինում է հոդված 16-ում նկարագրվածներով»:³⁰

Մշակութային արժեքների պաշտպանության միջազգային իրավական միջոցները ամրագրվում են Գործադիր կանոնակարգով, որը հանդիսանում է Նաագայի կոնվենցիայի բաղկացուցիչ մաս: Միջազգային իրավական միջոցները ներառում են հատուկ մարմինների ստեղծումը կամ գործող միջազգային մարմինների օգտագործումը և դրանց վերահսկիչ գործառույթների հատկացումը: Այդպիսի մարմիններին են վերաբերում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենը և պատերազմողների կողմից ընտրված հովանավոր տերությունների նշանակված պատվիրակները, ինչպես նաև մշակութային արժեքներ-

²⁹ Տե՛ս Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict (<http://www.icomos.org/hague/>), available at 25.08.2010:

³⁰ Տե՛ս Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict (<http://www.icomos.org/hague/>), available at 25.08.2010:

րի գծով Գլխավոր հանձնակատարը և նշանակված րեսուլտներն ու փորձագետները: Կանոնակարգը բաղկացած է 4 գլխից:

Առաջին գլխում խոսվում է պաշտոնատար անձանց վերահսկողության կազմակերպման մասին, պարզաբանվում են նրանց գործառույթները:

Երկրորդ գլխում դիտարկված են հանպատրաստի թաքստոցների պահպանության հարցերը, մշակութային արժեքների միջազգային գրանցամատյանի կազմելու կարգը:

Երրորդ գլուխը նվիրված է մշակութային արժեքների փոխադրման հարցին:

Չորրորդ գլխում նկարագրված են տարբերակիչ նշանի տեղադրման պայմանները, անձնակազմի անձի հաստատումը:³¹

1954թ. Կոնվենցիային կից Արձանագրության մեջ ասվում է, որ յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պարտավորվում է պահպանել, կանխարգելել մշակութային արժեքների արտահանումը զավթած տարածքներից: Իսկ եթե արտահանումը ամեն դեպքում տեղի է ունեցել, ապա պայմանավորված կողմը պարտավոր է դրանք վերադարձնել: Այն կողմը, որը պետք է կանխարգելել դրանց արտահանումը, պարտավոր է վարձահատույց լինել: Արձանագրության մեջ նշվում է նաև, որ տվյալ մշակութային արժեքները երբեք չեն պահվում որպես պատերազմական փոխհատուցում:³²

Սակայն Նաագայի կոնվենցիայի ամբողջ կարևորության հետ մեկտեղ համաշխարհային մշակութային ժառանգության հարուկ պաշտպանության կարգավորումը մի շարք թերություններ ունի: Որոշ դրույթներ ձևավորված էին վերացականորեն և ուղղումների կարիք ունեին: Դա հատկապես ակնհայտ էր ձևակերպման հարցում

³¹ Стн ИСПОЛНИТЕЛЬНЫЙ РЕГЛАМЕНТ конвенции о защите культурных ценностей в случае вооруженного конфликта, (<http://www.spsl.nsc.ru/win/frnew/shp/pkt3.htm>), available at 30.08.2010:

³² Стн ПРОТОКОЛ, (<http://www.spsl.nsc.ru/win/frnew/shp/pkt4.htm>), available at 30.08.2010:

«ռազմական անհրաժեշտություն» կամ «հրապուրյալ ռազմական անհրաժեշտություն» արտահայտությունների մեկնաբանության իմաստով: Տվյալ հասկացության մեկնաբանության բացակայությունը դրանց պահպանությունը դարձնում էր անիրական, և նշված թերությունները համաշխարհային մշակութային ժառանգության պաշտպանության մեխանիզմի հեղուկ կարգավորման անհրաժեշտություն էին առաջացնում:

Տվյալ ուղղությամբ կարարվող կարևոր քայլ էր 1972թ. նոյեմբերի 16-ին Փարիզում ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի հարցերով 17-րդ նստաշրջանում ընդունված «Նամաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» Կոնվենցիան: Առաջին հերթին փվյալ Կոնվենցիան ունի գործածման առավել լայն փիրոյթ՝ կողմնորոշված խաղաղ շրջանում, զինված ընդհարման կամ էլ փեխնոգեն կամ բնական աղեփների վրանգի, զբոսաշրջության, մշակութային արժեքների պաշտպանման կամ վերականգնման հեղ կապված իրավիճակներում կիրառելու համար: Երկրորդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր մշակութային արժեքները, անկախ իրենց նշանակությունից, գտնվում են կոնկրետ պետության տարածքում և կոնկրետ պետության իրավասության տակ, Կոնվենցիան սահմանագծել է համաշխարհային մշակութային ժառանգության ազգային և միջազգային պահպանությունը՝ վերջինիս ամրագրելով «միջազգային համագործակցության և պետությունների ջանքերին օժանդակող համակարգի ստեղծումը՝ ուղղված այդ ժառանգության պահպանմանն ու բացահայտմանը» /հ.7/:³³

Կոնվենցիայով ստեղծվեց ինսփիրտոցիոնալ միջազգային մեխանիզմ, որի հիմնական սկզբունքները հեղազայում ընդունվեցին նաև այլ միջազգային իրավական փաստաթղթերով: Որպես նոր միջազգային մարմիններ՝ սահմանվեցին Նամաշխարհային ժառանգության

³³ Տնն Convention Concerning the Protection of the world cultural and natural heritage, (<http://whc.unesco.org/en/conventiontext/>), available at 01.09.2010:

պահպանման միջկառավարական կոմիտեն (հեբրազայում՝ Կոմիտեն) և Նամաշխարհային մշակութային ժառանգության պահպանության ֆոնդը (հեբրազայում՝ Ֆոնդ): Կոմիտեն ընտրվում է Կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից, որի կազմում են պետությունների կողմից ներկայացված թեկնածուներից 21 անդամ 6 փարի ժամկետով /հ. 8-11/:³⁴

Նրա գործառնություններին վերաբերում են համաշխարհային ժառանգության ցանկի կազմումը և նորացումը պետությունների կողմից ներկայացված այն արժեքների ցուցակի հիման վրա, որոնք համապարասխանում են Կոմիտեի կողմից սահմանված չափանիշներին: Կոմիտեի կողմից մշակված չափանիշները ընդգրկվում են նրա կողմից ընդունված «Նամաշխարհային ժառանգության մասին» Կոնվենցիայի իրականացման ուղեցույցում: Ներկայումս համաշխարհային ժառանգության ցանկի մեջ ընդգրկված են 151 երկրներից 911 պարամշակութային արժեքներ, որոնցից 704-ը մշակութային են, 180-ը՝ բնական և 27-ը՝ խառը: Նամաշխարհային ժառանգության ցանկից Կոմիտեն անհրաժեշտության դեպքում ձևավորում է վրանգի փակ գրքովոլ համաշխարհային ժառանգության ցանկ, որտեղ ներառվում են այն արժեքները, որոնք փրկելու համար պահանջվում են զգալի աշխատանքներ, և որոնց վերաբերյալ պետությունը դիմել է օգնության խնդրանքով /հ.11/:³⁵ 2010թ. արդեն 180 երկիր վավերացրել են Նամաշխարհային ժառանգության մասին Կոնվենցիան:³⁶

Զինված ընդհարման ժամանակահատվածում մշակութային արժեքների պահպանության մեխանիզմի զարգացման մեջ ներդրումներ են ունեցել նաև այլ միջազգային համաձայնագրերը: Օրինակ՝ 1949թ. Ժնևյան Կոնվենցիաներին կից «1977թ. միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին» 1 լրացուցիչ Ար-

³⁴ Տե՛ս հղում 33:

³⁵ Տե՛ս Convention Concerning the Protection of the World Cultural and Natural Heritage, (<http://whc.unesco.org/en/conventiontext/>), available at 01.09.2010:

³⁶ Տե՛ս World Heritage list, (<http://whc.unesco.org/en/list> 32,) available at 01.09.2010:

ձանագրությունը: Արձանագրությունում նշվում է, որ միայն ռազմական օբյեկտները կարող են օգտագործվել զինված բախման ժամանակ, իսկ քաղաքացիները կամ քաղաքացիական օբյեկտները չեն կարող լինել այդպիսի բախման առարկաներ: Ռազմական կարող են կոչվել այն օբյեկտները, որոնք պարունակում են 2 չափանիշ: Առաջինը՝ գտնվելու վայրը, բնույթը, նշանակությունը պետք է այնպիսին լինեն, որ այն «ռազմական գործողությունների արդյունավետ ներդրում ունենա», երկրորդը՝ ռազմական գործողությունը պետք է լինի «որոշակի իրավիճակում»:³⁷ Տվյալ արձանագրությունը ոչ միայն չունի 1954թ. «Մշակութային արժեքների դեմ ցանկացած թշնամական գործողությունների արգելքի և ռեպրեսիաների վերաբերյալ» Նաագայի Կոնվենցիայի հիմնարար դրույթները /հ. 53/, այլև որպես Արձանագրության լուրջ խախտում որակավորեց այն, որ շահագրգռված պետության կողմից քրեական հետապնդման են ենթակա այն անձինք, որոնք հապուկ պաշտպանության փակ գտնվող ճանաչելի պատմական հուշարձանների, արվեստի սպեղծագործությունների, պաշտամունքի վայրերը վերածել են հարձակման օբյեկտների, և որի արդյունքում դրանց ավելի շարժվաք է հասցվել /հ.85/:³⁸

1995թ. Նոյեմբերի 11-ին, Իտալիայի Նանրապետության հրավերով, Դիվանագիտական համաժողովի շրջանակներում ընդունվեց «Գողացված կամ ապօրինի արքայազնական մշակութային արժեքների մասին» Ունիդրոյի կոնվենցիան: Այն առաջին փաստաթուղթն էր, որը անդրադարձավ մշակութային արժեքների փոխանակմանը և ապօրինի արքայազնական մշակութային արժեքների պաշտպանությանը: Տվյալ կոնվենցիայի նպատակն էր մշակութային ժառանգության

³⁷ Стів Дополнителный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 года, касающийся защиты жертв международных вооруженных конфликтов (Протокол I). Женева, 8 июня 1977 года: (<http://www.icrc.org/Web/rus/siterus0.nsf/iwpList133/4A1B0FBA8B5AE3CEC3257107002A11CC>), available at 02.09.2010:

³⁸ Стів Phelan, Marilyn, G. Edson and Kimberly P., "The law of cultural Property and natural heritage; Protection, transfer and access", Karlos kapp press, 1988, pages 40-51:

պաշտպանությունը, կարգավորել ապօրինի արտահանված մշակութային արժեքների վերադարձը, ներդնել վերադարձի (ռեստիտուցիայի) ինստիտուտը: Ինչպես նաև պետություններին առաջարկեց ներդնել հատուկ մեխանիզմներ փոխադրված խնդիրները իրականացնելու և օրինականացնելու վերաբերյալ: Կոնվենցիան ինքնին չի լուծում ապօրինի արտահանման հետ կապված խնդիրները, սակայն այն սկիզբ հանդիսացավ մշակութային արժեքների օրինական փոխանակման և միջազգային մշակութային համագործակցության համակարգման գործընթացում:³⁹

1998թ. ընդունված և 2002թ. ուժի մեջ մտնող Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը պաշտամունքային, ինչպես նաև կրթության, արվեստի, գիտության և բարեգործության նպատակներով նախատեսված շինություններին կանխամտածված հարվածներ հասցնելը արդեն իսկ սահմանում է որպես ռազմական հանցագործություն՝ անկախ զինված ընդհարման բնույթից (միջազգային կամ ներքին), և իր իրավասությունն է տարածում այդպիսի հանցանքներ կատարողների վրա / հ.8/⁴⁰

Սակայն զինված ընդհարումների ընթացքում մշակութային արժեքների պահպանության մեխանիզմի զարգացման և կատարելագործման մեջ առավել մեծ դեր խաղաց 1999թ. ընդունված Նասագայի 1954թ. կոնվենցիային կից 2-րդ Արձանագրությունը, որն ուժի մեջ մտավ 2003թ.: Արձանագրությունը, վերը բերված Կոնվենցիաների նոր դրույթները հավաքագրելով, հստակեցրեց դրանք կիրառապես զինված ընդհարման իրավիճակի նկատմամբ և լրացրեց Նասագայի կոնվենցիան՝ վերացնելով նրա թերությունները, մասնավորապես՝ հստակեցրեց ծայրահեղ պատերազմական անհրաժեշտություն հասկա-

³⁹ Տե՛ս UNIDROIT Convention on Stolen or Illegally Exported Cultural, (<http://www.unidroit.org/english/conventions/1995culturalproperty/1995culturalproperty-e.htm>), available at 10.09.2010:

⁴⁰ Տե՛ս United Nations Diplomatic Conference of Plenipotentiaries on the Establishment of an International Criminal Court, 1998: (<http://untreaty.un.org/cod/diplomaticconferences/icc-1998/icc-1998.html>), available at 10.09.2010:

ցությունը: Այսպիսով, Արձանագրության հոդված 9-ում մանրամասնորեն դիտարկված է գրավված փարածքներում մշակութային արժեքների պաշտպանության հարցը: Ըստ Արձանագրության՝ էական ձևափոխումների է ենթարկվել Ղազախի կոնվենցիայի այն բաժինը, որը կարգավորում է մշակութային արժեքների հատուկ պաշտպանությունը: Առաջին հերթին, հատուկ պաշտպանության փոխարեն գործածվում է «ուժեղացված պաշտպանություն» փրերմինը:

Երկրորդ՝ Արձանագրությունը, համաշխարհային մշակութային և բնական ժառանգության մասին 1972թ. Կոնվենցիայի ազդեցությամբ, մշակութային արժեքներին ուժեղացված պաշտպանություն փրամադրում է այն դեպքում, եթե դրանք հանդիսանում են մարդկության համար հսկայական նշանակություն ունեցող մշակութային ժառանգություն և համապատասխանում են հետևյալ լրացուցիչ պայմաններին /հ.10/:⁴¹

Երրորդ՝ ամրապնդվում է նոր ինստիտուցիոնալ միջազգային մեխանիզմ, որը կազմված է մասնակից պետությունների Խորհրդակցությունից, զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության Կոմիտեից, զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության Տիմադրամից: Նոր ինստիտուցիոնալ միջազգային մեխանիզմի սահմանումը ձևափոխության ենթարկեց ուժեղացված պաշտպանության փրամադրման, դադարեցման, վերացման կարգը: Նոր ինստիտուցիոնալ միջազգային մարմինների շարքում կենտրոնական փեդը զբաղեցնում է Մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեն, որն ընտրվում է 4 փրի ժամկետով, Արձանագրության մասնակից պետությունների Խորհրդակցության ընթացքում /հ. 24-25/: Կոմիտեն ոչ միայն Ղամաշխարհային ժառանգության կոմիտեի նման կազմում է ուժեղացված պաշտպանության փակ գրնվող մշակութա-

⁴¹ Стів Павлов В.А., «Второй протокол к Гаагской конвенции о защите культурных ценностей в случае вооруженного конфликта 1954г.», Минск, 2003г., стр. 140-150:

յին արժեքների ցանկը, այլև լուծում է դրա դադարեցման և վնասի հետ կապված հարցերը: Բացի դրանից, Արձանագրությունով մանրամասնորեն կարգավորվում են քրեական պատասխանատվության հարցերը՝ կապված այն անձանց հետ, որոնք լրջորեն խախտել են Արձանագրության դրույթները /հ.15/:

Արձանագրությունը պարտադրում է պեպույթյուններին նաև ընդունել համապատասխան օրենսդրություններ, վարչական կամ կարգապահական միջոցներ ձեռնարկել՝ Արձանագրության կամ Կոնվենցիայի խախտումով մշակութային արժեքների ցանկացած օգտագործումը, ինչպես նաև անօրինական արտահանումը, գրավված փարածքներից մշակութային արժեքների բռնագրավումը և դրանց սեփականության իրավունքի փոխանցումը պարժելու համար /հ.21/:⁴² Այսպիսով, Նաագայի կոնվենցիային կից 2-րդ Արձանագրությունը էապես կատարելագործեց մշակութային արժեքների պահպանության միջազգային մեխանիզմը՝ որակական քննարկումից բարձրացնելով դրանց պահպանությունը զինված ընդհարումների ժամանակ:

2001թ. մարտին Բամիանում Բուդդայի արձանների ողբերգական ոչնչացումից հետո Գլխավոր կոնֆերանսը իր 31-րդ նիստում (2001թ. հոկտեմբեր-նոյեմբեր, Փարիզ) բանաձև ընդունեց, որտեղ Գլխավոր քննարկումն կոչ արվեց Գլխավոր կոնֆերանսի 32-րդ նիստին պարտաստել մշակութային ժառանգության կանխամրավված ավերմանը վերաբերող Նոչակագրի նախագիծը: Տվյալ բանաձևի ի կատարումն համար 2002թ. գումարվեց փորձագետների խորհրդակցություն, և այդ խորհրդակցության արդյունքում ընդունվեց մշակութային ժառանգության կանխամրավված ավերմանը վերաբերող Նոչակագրի նախագիծը, որը հետագայում վերամշակվեց Քարտու-

⁴² Տե՛ս Second Protocol to the 1954 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict - Dutch involvement, (<http://www.kul.ee/webeditor/files/haag/woudenberg.pdf>), available at 10.09.2010:

ղարության և Գլխավոր կոնֆերանսի կողմից, 32-րդ նիստում (2003թ. սեպտեմբեր-հոկտեմբեր, Փարիզ): Նռչակագիրը ընդունվեց 2003թ. հոկտեմբերի 17-ին, Փարիզում՝ լիակազմ նիստի ժամանակ:⁴³ Այնպեղ հիմնավորվում է, որ ընդհարումների դեպքում մշակութային ժառանգության կանխամրաձված ավերումը կարող է վերաբերել ռազմական հանցագործություններից մեկին: «Անհապական քրեական պարասխանաբարության» մասին դրույթում /VII/ ընդգծվում է պետությունների կողմից իրավասության սահմանման և ազդեցիկ պարսամիջոցի ապահովման նպարակով միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը այն մարդկանց հանդեպ, որոնք իրականացրել են կամ հրամայել են իրականացնել կանխամրաձված ավերիչ գործողություններ: «Պետության պարասխանաբարության մասին» դրույթը /VI/ սահմանում է մշակութային ժառանգության կանխամրաձված ավերման համար պետության պարասխանաբարության սկզբունքը՝ այն չափով, որը նախարեսված է միջազգային իրավունքով, եթե այդ պետությունը կանխամրաձված կերպով ոչնչացնում է մշակութային ժառանգությունը կամ միջոցներ չի ձեռնարկում այդպիսի ոչնչացումը կանխարգելելու համար:⁴⁴

Անդրադառնալը մշակութային ժառանգության պահպանության մասին վերը նշված Կոնվենցիաների և Արձանագրությունների արդյունավետության հարցին: Պետությունների միջազգային մշակութային համագործակցությունը նախարեսում է համագործակցություն մշակութային արժեքների պաշտպանության գործում: Մշակութային արժեքների միջազգային պաշտպանությունը հիմնվում է տվյալ բնագավառում երկու հիմնարար սկզբունքների վրա:

Առաջին սկզբունքի համաձայն՝ յուրաքանչյուր ազգի մշակութային

⁴³ Տե՛ս UNESCO Declaration Concerning the Intentional Destruction of Cultural Heritage Paris, 17 October 2003, [http://www.icrc.org/Web/eng/siteeng0.nsf/htmlall/634JX3/\\$File/irrc_854_Unesco_eng.pdf](http://www.icrc.org/Web/eng/siteeng0.nsf/htmlall/634JX3/$File/irrc_854_Unesco_eng.pdf), available at 13.09.2010:

⁴⁴ Տե՛ս հղում 43:

արժեքներին պարճառած վնասը վնաս է ամբողջ մարդկության մշակութային ժառանգությանը, քանի որ յուրաքանչյուր ազգ իր ներդրումն է կատարում համաշխարհային մշակույթի մեջ: Նամաձայն երկրորդի՝ մշակութային արժեքների պաշտպանությունը պետք է կազմակերպվի դեռ խաղաղ ժամանակաշրջանում՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային համապարասխան միջոցներ ձեռնարկելով: Բացի փվյալ բնագավառում միջազգային Կոնվենցիաների մշակումից, պետք է նաև միջոցներ մշակել դրանց իրականացման համար:

Մշակութային արժեքները մեծ վրանգի փակ են հայտնվում առաջին հերթին պատերազմական գործողությունների ժամանակ: Դրանք ենթարկվում են ավերման, ոչնչացման, զավթման, բռնագրավման և այլն: Մինչև XIX դարը գերիշխում էին այն փեսակերպերը, որոնց համաձայն պատերազմում բոլոր միջոցները արդարացված են ոչ միայն ֆիզիկական անձանց, այլև սեփականության, այդ թվում՝ հակառակորդին պատկանող մշակութային արժեքների հանդեպ: Մշակութային արժեքների պահպանության պահանջը առաջին անգամ ձևակերպվեց 1815թ. Փարիզյան Կոնվենցիայում, որը ընդգրկում էր թանգարանների և գրադարանների ամբողջականության երաշխիքների անհրաժեշտության մասին հողված: Մշակութային արժեքների պահպանությունը նախատեսող միջազգային իրավական դրույթները կողիֆիկացված փեսքով իրենց արտացոլումը գտան 1954թ.՝ զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պահպանության մասին Նաագայի կոնվենցիայում: Տվյալ Կոնվենցիայում մերժվեց պետությունների կողմից նախկինում լայն կիրառում գտած պատերազմական գործողությունների փեղակայման սկզբունքը և ամրագրվեց մշակութային արժեքներ ընդգրկող վայրերի սահմանման և մեկուսացման սկզբունքը:

1954թ. զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պահպանության մասին Նաագայի կոնվենցիան ապահովում է մշակութային արժեքների պահպանության երկու հիմնական փեսակներ.

1-ինը՝ ընդհանուր պահպանություն, որը փարածվում է բոլոր մշակութային արժեքների վրա և 2-րդը՝ հատուկ պահպանություն, որը վերաբերում է հատուկ նշանակություն ունեցող շարժական և անշարժ մշակութային արժեքները որոշակի թաքստոցներ կամ կենտրոններ ընդգրկելով:

Մշակութային արժեքների ընդհանուր պաշտպանությունը Կոնվենցիան սահմանազծում է 2 հիմնական տեսակների՝ պահպանություն և հարգանք: Երբ խոսքը պահպանության մասին է, ապա ենթադրվում է, որ պետությունը իր վրա է վերցնում համապարասխան իրավական պարտավորություններ իր փարածքում գտնվող մշակութային արժեքների վերաբերյալ: Իսկ հարգանքի դեպքում ենթադրվում է այն, որ մշակութային արժեքների պաշտպանությունը փարածվում է ինչպես սեփական, այնպես էլ հակառակորդի փարածքում գտնվողների վրա: Տարբերությունը նաև այն է, որ մշակութային արժեքների պահպանությունը իրականացվում է դեռ խաղաղ ժամանակաշրջանում, իսկ դրանց հանդեպ հարգանքը տեղ է գտնում նաև պատերազմի ժամանակ: Ավելին, պահպանությունը ենթադրում է գործողություն /միջոցների ձեռնարկում/, իսկ հարգանքը՝ գործողությունների զսպում /որոշակի նպատակներով դրանց օգտագործման արգելք և թշնամական գործողությունների զսպում/:

Խաղաղ ժամանակաշրջանում ցանկացած երկրի հայեցողությամբ հանձնվող հարց է համարվում այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնց էությունը կայանում է մշակութային արժեքների պահպանման մեջ: Կոնվենցիայում դրանցից մի քանիսը հստակեցվում են: Օրինակ, այն երկրներին պարտադրում է ռազմական կանոնադրությունների և հրահանգների մեջ ներառել դրույթներ, որոնք զինված ուժերի անձնակազմին պարտավորեցնում են հարգել մշակութային արժեքները պատերազմի ժամանակ: Դրա հետ մեկտեղ նախատեսվում է գործերին կից ստեղծել այս հարցով զբաղվող և քաղաքական իշխանությունների հետ կապ պահպանող ծառայություններ:

Նշված միջոցառումները վերջնականապես սահմանված չեն: Ըստ Կոնվենցիայի՝ դրանք մշակութային արժեքների պահպանությունը պետք է նախապատասխան դեռ խաղաղ շրջանում: Այլ կերպ ասած՝ պետությունների պարավորությունը անհրաժեշտ է հասկանալ ամենաարդյունավետ և անհրաժեշտ միջոցների իմաստով, այսինքն՝ այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն մշակութային արժեքների իրական պաշտպանությունը: Ընդ որում, «հայեցողություն» բառը վերաբերում է ոչ այնքան բավարար արդյունավետ կամ ոչ արդյունավետ միջոցների ձեռնարկմանը, որքան պետության՝ նման միջոցների բազմազանության մեջ ավելի արդյունավետներն ընտրելու իրավունքին: Ոչ մի ռազմական անհրաժեշտություն չի արդարացնում մշակութային արժեքների պաշտպանությունը նախապես ող միջազգային իրավական նորմերի խախտումը:

Մշակութային արժեքների պաշտպանության միջոցառումների շարքում հապուկ կարևորություն է ձեռք բերում նաև հապուկ պաշտպանություն հասկացությունը: 1954թ. «Մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիայի համաձայն՝ այն փարավում է զինված ընդհարման դեպքում շարժական մշակութային արժեքների պահպանության համար նախապեսված սահմանափակ քանակությամբ թաքստոցների, մշակութային արժեքների համախմբման կենտրոնների, կարևոր նշանակություն ունեցող այլ մշակութային արժեքների վրա: Ի փարբերություն ընդհանուր պաշտպանությանը, որը ենթադրում է որոշակի միջոցների ձեռնարկումը, մշակութային արժեքները ռազմական նպատակներով չօգտագործելը, այստեղ նկատի ունենք պաշտպանության բարձր մակարդակ, որը փարավում է հակառակորդ կողմերի նկատմամբ անձեռնմխելիության ռեժիմի փակ գտնվող մշակութային արժեքների վրա: Այդ անձեռնմխելիությունը դրսևորվում է ոչ միայն ռազմական նպատակներով նման օբյեկտների և արժեքների ու դրանց կից մասնակիցների օգտագործման զսպման մեջ, այլ նաև դրանց ուղղված ցանկացած թշնամական

գործողության զսպման մեջ: Անձեռնմխելիության բովանդակության այսպիսի սահմանումից պարզ է դառնում, որ սրբազան հեղինակը այն չի համընկնում դիվանագիտական իրավունքում անձեռնմխելիության մասին պարզապես ասելի հետ: Խոսքը ոչ թե օրենսդրության մի մասի գործողությունների բացառման մասին է, այլ ռազմական նպատակներով չօգտագործելու /ինչը կարող է վրանգ առաջացնել մշակութային արժեքների համար/ և ցանկացած թշնամական գործողություններից զուսպ մնալու մասին: Եթե առաջինը /ռազմական նպատակներով չօգտագործելը/ պարզ է և կասկածներ չի առաջացնում, ապա երկրորդը /ցանկացած թշնամական գործողություններից զուսպ մնալը/ հստակեցման կարիք ունի: Թշնամական գործողություններից զուսպ մնալը ակնհայտորեն նպատակ ունի թույլ չտալ մշակութային արժեքների ավերումները: Բայց և այլ գործողություններ, որոնք թշնամական չեն հանդիսանում, նույնպես կարող են բերել մշակութային արժեքների ավերման կամ վնասման: Այդպիսին կարող են լինել, օրինակ, առանց հատուկ նախազգուշական միջոցների ձեռնարկման անց կացվող փրկարարական գործողությունները: Մշակութային արժեքների իրական անձեռնմխելիությունը /անվտանգության բարձր մակարդակ/ ապահովում է ոչ միայն դրանց դեմ ուղղված ցանկացած թշնամական գործողությունների արգելումը, այլ նաև դրանց ավերմանը կամ վնասմանը փաստող ցանկացած գործողության կանխումը:

Զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պահպանության մասին 1954թ. Նաագայի կոնվենցիայի և դրան կից Արձանագրության վերլուծությունը, ինչպես նաև դրանց կիրառման պրակտիկական ցույց են տալիս, որ

- յուրաքանչյուր պետություն, որն ի պահ է վերցրել այլ երկրի արժեքները, պարասխանավորություն է կրում դրանց ապահովության համար և այդ երկրի պահանջի դեպքում պետք է դրանք վերադարձնի,

- արժեքները այլ երկիր փոխանցելու դեպքում նշանակություն չունի, թե պահվող գույքի սեփականության իրավունքը ում է պատկանում՝ պետությանը, թե իրավաբանական կամ ֆիզիկական անձանց:

1954թ. «Զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պահպանության մասին» կոնվենցիայի մշակման ժամանակ օգտագործված իրավաբանական տեխնիկային բարձր գնահատական տրվել է՝ այնուամենայնիվ, անհրաժեշտ է արձանագրել դրա իրականացման պատշաճ մեխանիզմի բացակայությունը, ինչի մասին վկայում են տեղի ունեցած և ներկայումս տեղի ունեցող զինված ընդհարումների ընթացքում այս կարևոր միջազգային իրավական ակտի խախտումները: Այնուհայտ է, որ միայն ՅՈՒՆԵՍԿՕ-ն չի կարող երաշխավորել տվյալ Կոնվենցիայի պահպանումը: Ավելի նախընտրելի կլիներ համապատասխան պարտավորությունը դնել ոչ միայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր փնտրենի վրա, այլ նաև ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի և տարածաշրջանային կազմակերպությունների ղեկավարների վրա: Մշակութային արժեքների 1954թ. Կոնվենցիայում ամրագրված ընդհանուր և հատուկ պաշտպանությունը Կոնվենցիայի դրույթների խախտման դեպքում չի հաստատվում պատասխանատվության մասին համարժեք դրույթներով: Բանն այն է, որ նման խախտումներին հետևում է քրեական կամ նյութական բնույթի պատասխանատվությունը: Սակայն, եթե, օրինակ, օբյեկտի ոչնչացման դեպքում առաջ է գալիս վնասի փոխհատուցումը նախատեսող պատասխանատվություն, ապա այդպիսի մտքերումը անընդունելի է մշակութային արժեքների օբյեկտների նկատմամբ, քանի որ նման օբյեկտները անկրկնելի են և չեն կարող վերաստեղծվել իրենց առաջնային տեսքով: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ անհրաժեշտ է ժամանակակից միջազգային իրավունքի մեջ ամրագրել պետությունների պարտավորությունները այն մշակութային արժեքների պահպանության նկատմամբ, որոնք ունեն «erga omnes» բնույթը: Այստեղից էլ՝ դրանց ոչնչացման պատասխա-

նսարվությունը դառնում է առավել առարկայական և ծանրակշիռ:

Մշակութային արժեքների հանդեպ կիրառվող վերադարձի խնդիրը միշտ արդիական նշանակություն է ունեցել: Վերադարձի դեպքում առաջ եկող հարաբերությունների սուրբեկը է հանդիսանում պետությունը: Ընդ որում, վերադարձի պահանջ ներկայացնելու համար նշանակություն չունի, թե ով է հանդիսանում մշակութային արժեքների սեփականատերը: Վճռական նշանակություն ունի որոշակի պետության փարածքում գույքի գրանվելու չափանիշը: Այսպես գործում է այն սկզբունքը, որի համաձայն երկրի պարտավորությունը փարածվում է ոչ միայն իր փարածքում գրանվող գույքի վրա, այլև փվյալ երկրի քաղաքացու փիրապետման փակ գրանվող գույքի վրա: Վերջերս յուրահատուկ սրություն է ձեռք բերել փոխհատուցողական վերադարձի խնդիրը, որը կանոնակարգվում է ինչպես միջազգային, այնպես էլ ազգային իրավունքով: Միջազգային իրավական ակտերի վերլուծությունը հանգեցրեց այն եզրակացության, որ փոխհատուցողական վերադարձը, որպես միջազգային իրավական պարասխանավորության ձև, օրինական է:

1970թ. նոյեմբերի 14-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր հավանությունը փակեց «Մշակութային արժեքների անօրինական արտահանման, ներմուծման և սեփականության իրավունքի փոխանցման արգելքին ու նախազգուշացմանն ուղղված միջոցների մասին» Կոնվենցիային: Պարզվում է, որ Կոնվենցիան որոշ չափով արտացոլում է փվյալ ոլորտում միջազգային իրավունքի առաջընթաց զարգացումը: Մասնավորապես, Կոնվենցիան 1964թ. Առաջարկության համեմատ ընդլայնեց մշակութային արժեքների հասկացությունը, սահմանելով դրանք հետևյալ կերպ՝ այդպիսիք են համարվում կրոնական կամ աշխարհիկ բնույթի արժեքները, որոնք դիփարկվում են յուրաքանչյուր պետության կողմից որպես հնէաբանության, մինչպատմական շրջանի, պատմության, գրականության, արվեստի և գիտության համար արժեք ներկայացնող: Անհրաժեշտ է համաձայնել այն գիտնա-

կանների հետ /օրինակ՝ Ժ. Բասսիոնի/, որոնք մշակութային արժեքների պահպանության մասին գոյություն ունեցող համաձայնագրերը համադրելով այլ միջազգային քրեաիրավական Կոնվենցիաների հետ՝ հանգեցին այն եզրակացությանը, որ բացակայում են իրավասության, էքստրադիցիայի, քրեական գործերում առաջին օգնության ցուցաբերման և համագործակցության հարցերի գծով լայն շրջանակ ունեցող հարուկ դրույթներ: Չնայած այս ամենին, անհրաժեշտ է արձանագրել, որ գոյություն ունեցող իրավական շրջանակներն արտացոլում են մշակութային արժեքների վերադարձի և փոխանցման խնդիրները:

Երկրների մեծամասնությանը բնորոշ է մշակութային և պատմական ժառանգության պահպանմանն ու վերաստեղծմանը և Կոնվենցիայի ոլորտը կարգավորող արդյունավետ օրենսդրության առկայությանը ուղղված համալիր մոտեցումը: Գործում են մշակութային ժառանգության պահպանության մասին հիմնական օրենքներ, ընդունվել և իրականացվում են ժառանգության պահպանման և հուշարձանների պահպանության դաշնային, քաղաքացային և տեղական ծրագրեր: Ստեղծվել են իշխանական կառույցներ, որոնք օժտված են անհրաժեշտ լիազորություններով՝ Կոնվենցիայի բնագավառում օրենքների կատարման վերահսկողությունը իրականացնելու: Նախա բարդ կառուցվածք ունեցող պատմամշակութային ժառանգության պահպանության միջոցառումներում համագործակցում են պետությունը, քաղաքացային և տեղական իշխանությունները, մասնագիտացված կազմակերպությունները, մասնավոր բիզնեսի ներկայացուցիչները: Մշակութային արժեքները գտնվում են ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավունքի պաշտպանության տակ: Յուրաքանչյուր պետություն ինքն է հետևում իր մշակութային ժառանգության ապահովությանը՝ վարելով թանգարանների աջակցմանը և կազմակերպմանը, օբյեկտների գրանցմանը, վերականգնողական աշխատանքների ֆինանսավորմանը և այլնի ուղղված որոշ-

ակի քաղաքականություն: Միևնույն ժամանակ կարևոր նշանակություն է փրվում մշակութային արժեքների պահպանության գծով միջազգային համագործակցությանը: Պետությունների միջազգային համագործակցությունը անհրաժեշտ է փորձի փոխանակման, անհրաժեշտ օգնության հարկացման, մշակութային արժեքների ոչնչացման կանխարգելման և բռնագրավման դեմ պայքարի համար: Մշակութային արժեքների գծով պետությունների միջազգային համագործակցությունը այն միջազգային իրավական հարաբերությունների մի մասն է, որոնք կարգավորվում են ժամանակակից միջազգային իրավունքի նորմերով: Սա նշանակում է, որ մշակութային արժեքների պահպանությունը միջազգային մակարդակով իրականացվում է ժամանակակից միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են՝ ինքնիշխանության հանդեպ հարգանքը, ներքին գործերին չմիջամտելը, ուժ կամ ուժի սպառալիք չգործադրելը, «pacta sunt servanda»-ն, պետությունների համագործակցությունը և այլն:

Մշակութային ժառանգության պահպանության բնագավառի խնդիրները գոյություն ունեն բոլոր երկրներում, բայց դրանք անընդհար գտնվում են պետության և հասարակության փեսադաշտում:

1.3. Պատրամանակության ժառանգության համաեվրոպական իրավական կարգավորումը

Եվրոպական միությունը իրենից ներկայացնում է ինքնիշխան պետությունների վերաբերյալ միավորում, որին անդամակցող պետությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն ամենապարբեր ոլորտներում զիջել են իրենց իրավասությունները այդ միավորմանը: Այս առումով բացառություն չի կազմում նաև պատրամանակության քաղաքականության ոլորտը, որտեղ ևս տեղի է ունեցել անդամ պետությունների կողմից իրենց սուվերեն իրավունքների զիջում Եվրոպական միությանը: Պատրամանակության քաղաքականության ոլորտում անդամ պետությունների կողմից Եվրոպական միությանը իրավասությունների զիջման պատճառ է հանդիսացել 1993թ. հունվարի 1-ին ներքին շուկայի ստեղծումը, որը բնութագրվում է որպես մի փոստային առանց ներքին սահմանների, որտեղ երաշխավորվում է ապրանքների, ծառայությունների, անձանց և կապիտալի ազատ տեղաշարժը: Այս իրականության պայմաններում սպառնալիք էր ստեղծվում, որ պատրամանակության արժեքները կարող են ազատորեն տեղաշարժվել մի անդամ պետությունից մեկ այլ անդամ պետություն, ինչը կարող էր հանգեցնել դրանց կորստին: Այս հանգամանքը ինքնին անհրաժեշտություն առաջացրեց դիմագրավելու այդ սպառնալիքին և ապահովելու փոստային ազգային պատրամանակության ժառանգությունների ամբողջականությունը:

Պատրամանակության քաղաքականության ոլորտում Եվրոպական միության իրավասությունները առաջին անգամ ամրագրվեցին Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրում:⁴⁵ Ներկայումս դրանք ամրագրված են 2009թ. դեկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած Լիսաբոնի պայմանագրի բաղկացուցիչ

⁴⁵ Տե՛ս article 151 of the Consolidated version of the Treaty Establishing the European Community (2002) OJ C 325/33:

մաս հանդիսացող, Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրում, որը փոխարինեց Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրին: Պատմամշակութային քաղաքականության ոլորտում Եվրոպական միության իրավասությունները ամրագրող դրույթները զերեղված են այդ պայմանագրի 13-րդ գլխում:⁴⁶ Սակայն, ի տարբերություն գյուղատնտեսության, մրցակցության և այլ ոլորտների, պատմամշակութային քաղաքականության ոլորտում անդամ պետությունները իրենց իրավասությունները զիջել են ոչ թե ամբողջությամբ, այլ մասնակի, այսինքն՝ միայն որոշ տեսակետների կամ հարցերի հետ կապված: Այլ կերպ ասած, այս ոլորտում Եվրոպական միությունը բացառիկ իրավասություն չունի: Պատմամշակութային քաղաքականության ոլորտում հարցերի շրջանակը, որը անդամ պետությունները զիջել են Եվրոպական միությանը, ի հայտ է գալիս Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի համապատասխան դրույթները ուսումնասիրելու արդյունքում: Մասնավորապես, Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 167-րդ հոդվածի համաձայն, Եվրոպական միությունը կնպաստի անդամ պետությունների մշակույթների զարգացմանը՝ հարգելով նրանց ազգային և տարածաշրջանային բազմազանությունը և, մինչև ժամանակ, ընդհանուր մշակութային ժառանգությունը մղելով առաջին գիծ:

Տիշյակ պայմանագրի նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, Եվրոպական միության գործունեությունը այս ոլորտում նպատակ է հետպանդում խրախուսել անդամ պետությունների միջև համագործակցությունը և անհրաժեշտության դեպքում նպաստել և իրականացնել նրանց գործունեությունը հետևյալ բնագավառներում.

- Եվրոպական ժողովուրդների մշակույթի և պատմության վերաբերյալ գիտելիքի զարգացում ու մշակույթի տարածում,

⁴⁶ Տե՛ս Title XIII of the Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2008] OJ C 115/1:

- Եվրոպական կարևորություն ունեցող մշակութային ժառանգության պահպանում և պաշտպանում,
- ոչ առևտրային բնույթի մշակութային փոխանակություններ,
- գեղարվեստական և գրական արարում, ներառյալ տեսաձայնային ոլորտը:⁴⁷

Մշակութային քաղաքականության ոլորտը մեկուսացված գոյություն ունենալ չի կարող և սերտ կապի մեջ է գտնվում քաղաքականության այլ ոլորտների հետ: Այդ կապը ինքնին կարող է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն ունենալ մշակութային քաղաքականության ոլորտի վրա: Այդ իսկ պատճառով Եվրոպական միությունը մշակութային քաղաքականության տեսակետները հաշվի է առնում նաև այլ ոլորտներում քաղաքականություն և միջոցառումներ ձեռնարկելիս, որպեսզի հարգի և խթանի մշակույթների բազմազանությունը:⁴⁸

Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 167-րդ հոդվածը, վերը նշված նպատակներին հասնելու համար, միևնույն ժամանակ Եվրոպական միության ինստիտուտներին օժտում է օրենսդրական միջոցներ ընդունելու իրավասությամբ: Մասնավորապես, այդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, Եվրոպական միության խորհուրդը և Եվրոպական խորհրդարանը որոշումների ընդունման սովորական օրենսդրական ընթացակարգին համապատասխան և Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո ընդունում են խթանիչ միջոցներ՝ բացառելով անդամ պետությունների օրենքների և կարգավորումների որևէ ներդաշնակեցում: Ավելին, Եվրոպական միության խորհուրդը Եվրոպական հանձնաժողովի առաջարկությամբ կարող է ընդունել նաև առաջարկություններ:⁴⁹ Իհարկե, առաջարկությունները

⁴⁷ Տե՛ս article 167 (2) of the Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2008] OJ C 115/1:

⁴⁸ Տե՛ս article 167 (4) of the Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2008] OJ C 115/1:

⁴⁹ Տե՛ս article 167 (5) of the Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2008] OJ C 115/1:

Եվրոպական միության իրավական համակարգում պարպաղիք բնույթ չեն կրում, սակայն դրանք կարող են կանխորոշիչ նշանակություն ունենալ ապագայում մշակութային քաղաքականության ոլորտում օրենսդրություն ձևավորելիս:

Ինչպես տեսնում ենք, Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 167-րդ հոդվածի 5-րդ մասը բացառում է Եվրոպական միության կողմից անդամ պետությունների օրենսդրական կանոնների և այլ կարգավորումների որևէ ներդաշնակեցում: Սա նշանակում է, որ Եվրոպական միության կողմից չեն կարող ընդունվել օրենսդրական միջոցներ, որոնք մշակութային քաղաքականության ոլորտում անդամ պետությունների համար կսահմանեն միաբնակ կանոններ: Սակայն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, այս սահմանափակումը բացարձակ բնույթ չի կրում և այն փարսավում է միայն «մաքուր» մշակութային քաղաքականության ոլորտի վրա: Այսինքն, Եվրոպական միությունը կարող է մշակութային քաղաքականության ոլորտում ընդունել անդամ պետությունների օրենսդրական կանոնները ներդաշնակեցնող միջոցներ, եթե դրանք զուգորդված են այլ ոլորտների կարգավորման հետ: Այդ ոլորտները անվանվում են «խառը գործունեության» ոլորտներ:⁵⁰ Օրինակ՝ որպես այդպիսի ոլորտներ կարող են հանդես գալ մշակութային և փնտեսական ոլորտները: Մասնավորապես, ինչպես հայտնի է, Եվրոպական միության հենքն է կազմում ներքին շուկան: Ներքին շուկան բնութագրվում է որպես մի փարսածություն, որտեղ երաշխավորվում է ապրանքների, անձանց, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժը: Ինչպես Եվրոպական ընկերակցությունների դատարանը *Commission v. Italy* գործում սահմանել է, ապրանքների ազատ տեղաշարժը փարսավում է նաև մշակութային արժեքների վրա:⁵¹ Մշակութային արժեքները անդամ

⁵⁰ Տե՛ս Oliver Castendyk, Egbert Dommering, Alexander Scheuer, *European Media Law*, Kluwer Law International, Netherlands, 2008, էջ 250:

⁵¹ Տե՛ս case 7/68, *Commission v. Italy*, (1968) ECR 633, 642:

պեպությունների միջև ապրանքների ազատ փոխադարձի ռեժիմի կանոններին ենթարկելն ինքնին պարարտ հող է ստեղծում մի անդամ պեպության փարածքում գրնվող պարամամշակութային արժեքը ազատորեն փոխափոխելու մեկ այլ անդամ պեպության փարածք և այն իրացնելու այնպեղ՝ վնաս հասցնելով պեպության պարամամշակութային հարստությանը: Բերված օրինակում գործ ունենք մշակութային և փոփոխական ոլորտների հետ, որպեղ առաջանում է անհրաժեշտություն՝ հավասարակշռելու մի կողմից անդամ պեպությունների միջև ապրանքների ազատ փոխադարձը, իսկ մյուս կողմից՝ նրանց պարամամշակութային արժեքների պաշտպանությունը: Նեփնաբար, այն դեպքերում, երբ մշակութային ոլորտի կարգավորումը աղերսվում է այլ ոլորտի հետ, թույլատրվում է Եվրոպական միության մակարդակում ընդունել անդամ պեպությունների օրենսդրական կանոնները ներդաշնակեցնող միջոցներ: Նենց այս դատողություններով է պայմանավորված մշակութային քաղաքականության ոլորտում անդամ պեպությունների ներպեփական կանոնները ներդաշնակեցնելու նպատակով ընդունված ստորն քննարկվող օրենսդրական միջոցների գոյությունը:

Ներկայումս Եվրոպական միությունը պարամամշակութային քաղաքականության ոլորտում ունի ընդունած մի շարք օրենսդրական ակտեր: Ակտերը վերաբերում են պարամամշակութային քաղաքականության ոլորտի միայն խիստ որոշակի հարցերին: Մասնավորապես, այդ հարցերն են հանդիսանում Եվրոպական միության փարածքից պարամամշակութային արժեքների արտահանումը և այդ փարածքից անօրինական կերպով դուրս բերված պարամամշակութային արժեքների վերադարձը Եվրոպական միության փարածք:⁵² Պարամամշա-

⁵² Եվրոպական միությունը ընդգրկում է 27 (Բրալիա, Ֆրանսիա, Ավստրիա, Կիպրոս, Նունաստրան, Պորտուգալիա, Դանիա, Լեհաստրան, Չեխիայի Նանրապեպություն, Մալթա, Նունգարիա, Ռումինիա, Բուլղարիա, Մեծ Բրիտանիա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Իռլանդիա, Գերմանիա, Սլովենիա, Սլովակիա, Իսպանիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Բելգիա) անդամ պեպություններ, և Եվրոպական միության փարածքը ընդգրկում է այդ պեպությունների փարածքը:

կութային արժեքների պաշտպանության և դրանց իրավական կարգավիճակին առնչվող մնացած բոլոր հարցերը (օրինակ՝ պատմամշակութային արժեքները ոչնչացնելու համար առաջացող պատրասխանավության փոփոխությունները, դրանց իրացումը և այլն) կարգավորվում են անդամ պետություններից յուրաքանչյուրի ներպետական օրենսդրությամբ:

Եվրոպական միության փարածքից պատմամշակութային արժեքների արտահանման և այդ փարածքից անօրինական կերպով դուրս բերված պատմամշակութային արժեքները Եվրոպական միության փարածք վերադարձնելու հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով ձևավորվել է համապատասխան համաեվրոպական օրենսդրություն: Վերջին բառակապակցությունը չի նշանակում, որ բոլոր եվրոպական պետություններում, վերը նշված հարցերի կարգավորման հետ կապված, գործում է նույն իրավական ռեժիմը: Այդ ռեժիմը գործում է միայն Եվրոպական միությանն անդամակցող բոլոր 27 պետություններում:

Վերոնշյալ հարցերի կարգավորման հետ կապված, Եվրոպական միությունում գործող օրենսդրությունը արտահայտվում է Եվրոպական միության ինստիտուտների կողմից ընդունված և քաղաքականության իրականացման համապատասխան օրենսդրական միջոցներ հանդիսացող կանոնակարգերի և դիրեկտիվների ձևով: Մասնավորապես, Եվրոպական միության փարածքից պատմամշակութային արժեքների արտահանման հետ կապված հարցերը կարգավորվում են 1992թ. դեկտեմբերի 9-ին Եվրոպական միության խորհրդի կողմից ընդունված «Մշակութային արժեքները արտահանելու մասին» թիվ 3911/92 կանոնակարգով,⁵³ իսկ Եվրոպական միության անդամ պետության փարածքից անօրինական կերպով դուրս բերված պատմամշակութային արժեքները անդամ պետության փարածք վերա-

⁵³ S1'u Council Regulation (EEC) No 3911/92 of 9 December 1992 on the export of cultural goods, OJ L 395/1:

դարձնելու հետ կապված հարցերը՝ Եվրոպական միության խորհրդի կողմից 1993թ. մարտի 15-ին ընդունված թիվ 93/7 համաձայն դիրեկտիվով:⁵⁴ Վերջինս ընդունումից հետո երկու անգամ ենթարկվել է փոփոխությունների և լրացումների, որոնք վերաբերում էին դիրեկտիվի գործողության մեջ ընդգրկվող պարամամշակութային արժեքների շրջանակին և ֆինանսական արժեքին:⁵⁵

Բացի դրանից, ի կարարումն թիվ 3911/92 կանոնակարգի՝ Եվրոպական հանձնաժողովի կողմից 1993թ. ընդունվել է թիվ 752/93 կանոնակարգը:⁵⁶ Վերջինս 1998թ. Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված թիվ 1526/98 կանոնակարգով և 2004թ. ընդունված թիվ 656/2004 կանոնակարգով ենթարկվել է փոփոխությունների և լրացումների⁵⁷ (մինչև 2008 թվականը թիվ 3911/92 կանոնակարգը, ի կարարումն դրա ընդունված ակտերից փարբերակելու համար, անվանվում էր նաև «Նիմնական կանոնակարգ»):⁵⁸ Նաշվի առնելով թիվ 3911/92 կանոնակարգում կարարված բազմաթիվ փոփոխությունները՝ Եվրոպական միության խորհրդի կողմից 2008թ. դեկտեմբերի 18-ին ընդունվել է թիվ 116/2009 դիրեկտիվը, որը համակարգել է այդ բոլոր փոփոխությունները մեկ միասնական տեքստի ներքո:⁵⁹ Այդ իսկ

⁵⁴ Տե՛ս Council Directive 93/7/EEC of 15 March 1993 on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, OJ L 74/74:

⁵⁵ Տե՛ս Directive 96/100/EC of the European Parliament and of the Council of 17 February 1997, L 60/59 and Directive 2001/38/EC of the European Parliament and of the Council of 5 June 2001, L 187/43:

⁵⁶ Տե՛ս Commission Regulation (EEC) No 752/93 of 30 March 1993 laying down provisions for the implementation of Council Regulation (EEC) No 3911/92 on the export of cultural goods, OJ L 77/24:

⁵⁷ Տե՛ս Commission Regulation (EC) No 1526/98 of 16 July 1998 amending Commission Regulation (EEC) No 752/93 laying down provisions for the implementation of Council Regulation (EEC) No 3911/92 on the export of cultural goods, OJ L 201/47-58:

⁵⁸ Տե՛ս article 1 of the Commission Regulation (EEC) No 752/93 of 30 March 1993 laying down provisions for the implementation of Council Regulation (EEC) No 3911/92 on the export of cultural goods, OJ L 77/24:

⁵⁹ Տե՛ս Council Regulation (EC) No 116/2009 of 18 December 2008 on the export of cultural goods (codified version), OJ L 39/1:

պարունառով անդամ պետությունների փարածքից պարամամշակութային արժեքների արտահանման հետ կապված, Եվրոպական միության քաղաքականությունը հասկանալու համար այսուհետ ուսումնասիրման առարկա ենք դարձնելու թիվ 116/2009 կանոնակարգը:

Վերը նշված կանոնակարգերն ու դիրեկտիվը իրենց միասնության մեջ Եվրոպական միությունում սրեղծում են պարամամշակութային արժեքների պաշտպանության համապարասխան իրավական ռեժիմ: Այդ ռեժիմի մասին ամբողջական պարկերացում կազմելու համար անհրաժեշտ է բովանդակային և բազմակողմանի վերլուծության ենթարկել թիվ 116/2009 կանոնակարգը և թիվ 93/7 դիրեկտիվն ու դրանում փոփոխություններ և լրացումներ կատարող ակտերը:

Ինչպես արդեն նկատեցինք, թիվ 116/2009 կանոնակարգը ու թիվ 93/7 դիրեկտիվը կոչված են կարգավորելու պարամամշակութային արժեքների իրավական վիճակի հետ կապված միայն խիստ որոշակի հարաբերություններ: Թիվ 116/2009 կանոնակարգը ուղղված է կարգավորելու այն հարաբերությունները, որոնք կապված են Եվրոպական միության փարածքից մշակութային արժեքները արտահանելու հետ: Մշակութային արժեքները արտահանելու մասին թիվ 116/2009 կանոնակարգը փարածվում է ոչ բոլոր պարամամշակութային արժեքների վրա: Դրանց շրջանակը հստակ սահմանված է կանոնակարգին կցված արձանագրությամբ: Մասնավորապես, այդպիսի արժեքներ են 100 փարվա պարմություն ունեցող հնէագիտական իրերը, որոնք հանդիսանում են ջրում կամ հողում պեղումների կամ գրանքի, հնէաբանական փեսարժան վայրերի կամ հնէաբանական հավաքածուների առարկա, ցանկացած եղանակով և նյութի վրա ամբողջությամբ ձեռքով պարաստրված նկարները և կրավները, ավելի քան 200 փարվա վաղեմություն ունեցող փրպագիր քարտեզները, ավելի քան 100 փարվա վաղեմություն ունեցող առանձին կամ հավաքածու գրքերը, ավելի քան 75 փարվա վաղեմություն ունեցող

տրանսպորտային միջոցները, ավելի քան 100 տարվա վաղեմություն ունեցող գեղագիտական, պատմական և կրոնական հուշարձանների բաղկացուցիչ մաս հանդիսացող տարանջատված բաղադրատարրերը և այլն:⁶⁰

Մշակութային արժեքները արտահանելու մասին թիվ 116/2009 կանոնակարգի 2-րդ հոդվածի համաձայն, Եվրոպական միության տարածքից պատմամշակութային արժեքների արտահանումը հնարավոր է միայն արտահանման լիցենզիայի հիման վրա:⁶¹ Լիցենզիան վավեր է ամբողջ Եվրոպական միության տարածքում: Այն կցվում է արտահանման հայտարարագրին: Արտահանման լիցենզիան փրվում է շահագրգռված անձի դիմումի հիման վրա: Դիմումին պետք է կցվեն պատմամշակութային արժեքի և դիմումը ներկայացնելու պահին դրա իրավական վիճակի վերաբեյալ տեղեկատվություն տրամադրող բոլոր փաստաթղթերը: Արտահանման լիցենզիան ստանալու մասին դիմումները ներկայացվում են անդամ պետությունների իրավասու մարմիններին: Ընդ որում, այդ դիմումները ներկայացվում են, և լիցենզիաները փրվում են այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որի տարածքում օրինական կերպով և հաստատապես գտնվում է խնդրո առարկա պատմամշակութային արժեքը 1993թ. հունվարի 1-ի դրությամբ, իսկ դրանից հետո՝ այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որի տարածքում տեղակայված է մեկ այլ անդամ պետությունից կամ երրորդ պետությունից օրինական կերպով և հաստատապես տեղահանված պատմամշակութային արժեքը կամ երրորդ պետությունից վերաներմուծումից հետո, որը մի անդամ պետությունից օրինական կերպով տեղափոխվել է այդ երրորդ պետություն: Անդամ պետություններից

⁶⁰ Տե՛ս Annex 1 on Categories of Cultural objects Covered by Article 1 attached to the Council Regulation (EC) No 116/2009 of 18 December 2008 on the export of cultural goods (codified version), OJ L 39/1:

⁶¹ Տե՛ս article 2 of Council Regulation (EC) No 116/2009 of 18 December 2008 on the export of cultural goods (codified version), OJ L 39/1:

յուրաքանչյուրը ինքն է որոշում այն մարմինները, որոնք իրավասու են փրամադրել արտահանման լիցենզիաներ: Մակայն նրանք պարտավոր են Եվրոպական հանձնաժողովին ներկայացնել փեդեկապություն այն մարմինների ցանկի վերաբերյալ, որոնք իրավասու են փրամադրել արտահանման լիցենզիաներ: Ընդ որում, այդ մարմինների ցանկը և դրա թարմացումները հրապարակվում են Եվրոպական միության պաշտոնական փեդեկագրում:⁶²

Արտահանման լիցենզիաներ փրամադրելիս, այն փրամադրող մարմինները ունեն մի շարք իրավունքներ: Մասնավորապես, նրանք իրավասու են պահանջել ֆիզիկապես ներկայացնել այն պարամաձակությային արժեքը կամ արժեքները, որոնք պետք է արտահանվեն, պահանջել դիմումափուլից՝ ներկայացնել բոլոր այն երաշխիքները, որոնք վկայում են արտահանվող պարամաձակությային արժեքը Եվրոպական միության փարածք ապագայում վերադարձնելու մասին, պահանջել ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և այլն: Ընդ որում, այդ արժեքների ֆիզիկական ներկայությունը և դիմումին կցվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը ապահովելու հետ կապված ծախսերը կրում է դիմումափուն:

Թիվ 116/2009 կանոնակարգը, ամրագրելով պարամաձակությային արժեքները Եվրոպական միության փարածքից արտահանելու կարգը, միաժամանակ ամրագրում է լիցենզիայի փրամադրման դիմումի մերժման դեպքեր: Մասնավորապես, լիցենզիայի փրամադրումը կարող է մերժվել, եթե համապարասխան պարամաձակությային արժեքը անցնում է զեղազիփական, պարմական կամ հնէազիփական ազգային հարսփությունները պաշտպանող անդամ պետության օրենսդրության ներքո:

Եվրոպական միության օրենսդրությունը, ամրագրելով արտահանման լիցենզիայի ներկայացման նախապայմանը, միաժամանակ

⁶² Դրանք հրապարակվում են Եվրոպական միության պաշտոնական փեդեկագրի “C” հարվածում:

տարբերակում է արտահանման լիցենզիայի մի քանի տեսակ: Այս դասակարգումը առաջին անգամ կյանքի է կոչվել 1998թ. Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված թիվ 1526/98 կանոնակարգով, որը համապատասխան փոփոխություններ կատարեց նախկին, թիվ 3911/92 կանոնակարգի ինպլեմենտացումը ապահովելու համար Եվրոպական հանձնաժողովի ընդունած թիվ 752/93 կանոնակարգում: Թիվ 1526/98 կանոնակարգը ամրագրում է արտահանման լիցենզիայի երեք տեսակ՝ սրանդարտ լիցենզիա, հատուկ բաց լիցենզիա և ընդհանուր բաց լիցենզիա:⁶³

Սրանդարտ լիցենզիան սովորաբար օգտագործվում է թիվ 116/2009 կանոնակարգով իրականացվող յուրաքանչյուր արտահանման համար: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր անդամ պետություն կարող է որոշել, թե, արդյոք, ինքը ցանկանում է ընդունել որևէ հատուկ կամ ընդհանուր բաց լիցենզիա:

Հատուկ բաց լիցենզիան տրվում է որոշակի պատմամշակութային արժեքի արտահանման համար, որը կարող է պարբերաբար արտահանվել Եվրոպական միության տարածքից երրորդ պետությունում օգտագործման և/կամ ցուցադրման համար: Տվյալ դեպքում, պատմամշակութային արժեքը պետք է հանդիսանա այն անձի կամ կազմակերպության սեփականությունը կամ գտնվի օրինական տիրապետման ներքո, որը օգտագործում կամ ցուցադրում է այն: Հատուկ բաց լիցենզիան տրվում է միայն այն դեպքում, երբ իրավասու մարմինները գալիս են համոզման, որ պատմամշակութային արժեքը արտահանելու հայտ ներկայացրած անձը կամ կազմակերպությունը տալիս է բոլոր անհրաժեշտ երաշխիքները, որ խնդրո առարկա պատմամշակութային արժեքը կվերադարձվի Եվրոպական միության տարածք և ժամանակավոր արտահանման պահին կլինի այն-

⁶³ Տե՛ս article 1 of Commission Regulation (EC) No 1526/98 of 16 July 1998 amending Commission Regulation (EEC) No 752/93 laying down provisions for the implementation of Council Regulation (EEC) No 3911/92 on the export of cultural goods, OJ L 201/47-58:

պես նկարագրված և նշագրված, որ կասկած չի առաջանա դրա իսկության վերաբերյալ: Նապուկ բաց լիցենզիան կարող է փրվել մինչև 5 փարի ժամկետով:

Ընդհանուր բաց լիցենզիան փրվում է թանգարաններին կամ այլ հասարակություններին, դրանց մշտական հավաքածուների մեջ մտնող պատմամշակութային արժեքների՝ ցուցադրման նպատակով ժամանակավոր կամ պարբերական արտահանման համար: Նապուկ բաց լիցենզիան փրվում է միայն այն դեպքում, երբ իրավասու մարմինները համոզվում են, որ պատմամշակութային արժեքը կվերադարձվի Եվրոպական միության փարածք լավ վիճակում: Ընդհանուր բաց լիցենզիան կարող է փրվել մինչև 5 փարի ժամկետով:

Թիվ 116/2009 կանոնակարգի իմպլեմենտացման հարցում Եվրոպական հանձնաժողովին աջակցելու համար ստեղծվել է հատուկ կոմիտե, որը բաղկացած է անդամ պետությունների ներկայացուցիչներից և Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչից: Վերջինս հանդիսանում է Կոմիտեի նախագահը: Կոմիտեն կարող է քննարկել թիվ 116/2009 կանոնակարգի իմպլեմենտացման հետ կապված ցանկացած հարց, որը կբարձրացնի նրա նախագահը կամ Կոմիտեի անդամներից որևէ մեկը: Բացի այդ, Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցչի կողմից Կոմիտեի քննարկմանն է ներկայացվում ձեռնարկվելիք միջոցների նախագիծը, որի կապակցությամբ Կոմիտեն Նախագահողի կողմից սահմանված ժամկետներում իր եզրակացությունն է փալիս դրանց վերաբերյալ: Այդ եզրակացությունները Եվրոպական հանձնաժողովի համար պարտադիր բնույթ չեն կրում, սակայն վերջինս հիմնականում հաշվի է նստում Կոմիտեի եզրակացության հետ:

Թիվ 116/2009 կանոնակարգի իմպլեմենտացման արդյունավետությունը ապահովելու համար սահմանավում են համապատասխան պարտավորություններ: Սակայն անդամ պետությունների համար պարտավորությունների միասնական ձևաչափ գոյություն չունի, քանի որ Կանոնակարգը այդ պարտավորությունների փեսակները սահմանելու իրավունքը

թողնում է յուրաքանչյուր անդամ պետության հայեցողությանը: Միակ պայմանն այն է, որ սահմանվող պարժամիջոցները պետք է բավականաչափ արդյունավետ լինեն թիվ 116/2009 կանոնակարգի պարշաճ իմպլեմենտացումը ապահովելու համար:⁶⁴

Եվրոպական միությունում պարամամշակութային արժեքների պաշտպանության իրավական ռեժիմի հենքը կազմող հաջորդ օրենսդրական ակտը մշակութային արժեքները արտահանելու մասին թիվ 93/7 դիրեկտիվն է, որը կոչված է կարգավորելու այն հարաբերությունները, որոնք կապված են Եվրոպական միության անդամ պետության փարածքից անօրինական կերպով դուրս բերված պարամամշակութային արժեքները փոխալ պետության փարածք վերադարձնելու հետ: Քանի որ Եվրոպական միությունում քաղաքականության իրականացման ինքնուրույն օրենսդրական միջոց հանդիսացող դիրեկտիվները ուղղակի կիրառելի ակտեր չեն և միանգամից չեն ներթափանցում անդամ պետությունների իրավական համակարգեր, ուստի բոլոր անդամ պետություններում թիվ 93/7 դիրեկտիվը իմպլեմենտացնելու համար ընդունվել են համապարասխան ներպետական օրենսդրական ակտեր: Մասնավորապես, Դանիայում թիվ 93/7 դիրեկտիվը իմպլեմենտացվել է 1993թ. դեկտեմբերի 22-ին ընդունված թիվ 1104 օրենքով, Իսպանիայում՝ 1994թ. դեկտեմբերի 23-ին ընդունված թիվ 36/94 օրենքով, Ֆրանսիայում՝ 1995թ. օգոստոսի 3-ին ընդունված թիվ 95-877 օրենքով, Իտալիայում՝ 1998 մարտի 30-ին ընդունված թիվ 88 օրենքով, Պորտուգալիայում՝ 1995թ. սեպտեմբերի 1-ին թիվ 90-C/95 օրենքով, Ավստրիայում՝ 1998 մայիսի 15-ին ընդունված թիվ 67/1998թ. օրենքով և այլն:⁶⁵

⁶⁴ Stn'u article 9 of Council Regulation (EC) No 116/2009 of 18 December 2008 on the export of cultural goods (codified version), OJ L 39/1:

⁶⁵ Stn'u Report from the Commission to the Council, the European Parliament and the Economic and Social Committee on the implementation of Council Regulation (EEC) No 3911/92 on the export of cultural goods and Council Directive 97/3/EEC on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, Brussels, 25.05.2000, COM(2000) 325 final, page 20-21:

Դիրեկտիվի գործողությունը սահմանափակված է ժամանակի մեջ: Այն փարաձվում է միայն 1993 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո փեղի ունեցած պատմամշակութային արժեքների անօրինական փեղաշարժի վրա: Սակայն թիվ 93/7 դիրեկտիվը այս ժամանակային սահմանափակվածության առումով անդամ պետություններին ընձեռում է որոշակի ճկունություն, քանի որ նրանց հնարավորություն է փալիս սեփական ցանկությամբ դիրեկտիվով ամրագրված միջոցառումները կիրառել նաև պատմամշակութային արժեքները վերադարձնելու վերաբերյալ այլ անդամ պետության այն հարցումների նկատմամբ, որոնք կապված են մինչև 1993թ. հունվարի 1-ը փեղի ունեցած պատմամշակութային արժեքների անօրինական փեղաշարժի հետ:⁶⁶

Թիվ 93/7 դիրեկտիվը սահմանում է, թե որ պատմամշակութային արժեքների վրա է փարաձվում դրա գործողությունը: Մասնավորապես, դիրեկտիվի իմաստով պատմամշակութային արժեք ստելով պետք է հասկանալ առարկաներ, որոնք անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ գեղագիտական, պատմական կամ հնէաբանական արժեք կազմող ազգային հարստություններ են, հանդիսանում են հանրային հավաքածուների կամ հոգևոր հաստատությունների հավաքածուների բաղկացուցիչ մաս կամ պարկանում են սույն դիրեկտիվի թիվ 1 հավելվածով նշված կարգին պարկանող ապրանքների:⁶⁷ Այս հավելվածում նշված են բավականին մեծաթիվ անուն ապրանքներ: Մասնավորապես, այդպիսիք են հանդիսանում 100 փարուց ավելի վաղեմություն ունեցող հնէագիտական առարկաները՝ անկախ դրանց արժեքից, 100 փարուց ավելի վաղեմություն ունեցող գրքերը, որոնց արժեքը 50.000 եվրո է կամ ավելին, 200 փարուց ավելի վաղեմություն ունեցող փայտեղեղները,

⁶⁶ Տնն արտիկոս 13, 14 (2) of the Council Directive 93/7/EEC of 15 March 1993 on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, OJ L 74/74:

⁶⁷ Այս հավելվածը 1993թ. ընդունումից հետո երկու անգամ ենթակվել է փոփոխության:

որոնց արժեքը 15.000 եվրո է կամ ավելի, 75 տարուց ավելի վաղեմություն ունեցող արասսպորտային միջոցները, որոնց արժեքը 50.000 եվրո է կամ ավելի, 50 տարուց ավելի վաղեմություն ունեցող ցանկացած այլ հնաճ իր, որի արժեքը 50.000 եվրո է կամ ավելի և այլն: Փաստորեն, ինչպես տեսնում ենք, դիրեկտիվի գործողությունը կարող է կախված լինել ինչպես պատմամշակութային արժեքի վաղեմությունից, այնպես էլ՝ ֆինանսական արժեքից:

Բացառված չէ նաև, որ թիվ 93/7 դիրեկտիվը կիրառվի այն առարկաների նկատմամբ, որոնք անդամ պետության ազգային օրենսդրությամբ գեղագիտական, պատմական կամ հնէաբանական արժեք կազմող ազգային հարստություններ կորակվեն նրա փարածքից արտահանելուց հետո: Դրանից բացի, անդամ պետություններին հնարավորություն է տրված թիվ 93/7 դիրեկտիվի գործողությունը փարածել նաև այլ պատմամշակութային արժեքների վրա, որոնք դրա թիվ 1 հավելվածով, որպես առանձին կատեգորիա, հիշատակված չեն:⁶⁸

Թիվ 93/7 դիրեկտիվի իմաստով անդամ պետության փարածքից պատմամշակութային արժեքների ապօրինի դուրսբերում ասելով պետք է հասկանալ ազգային հարստությունները կարգավորող կանոնների կամ թիվ 116/2009 կանոնակարգի խախտմամբ պատմամշակութային արժեքների տեղաշարժը անդամ պետության փարածքից, կամ օրինական կերպով անդամ պետությունից դուրս բերված պատմամշակութային արժեքները չվերադարձնելը մինչև սահմանված ժամկետի ավարտը կամ այդպիսի ժամանակավոր տեղաշարժը կարգավորող ցանկացած պայմանի խախտումը:⁶⁹ Ընդ որում, դիրեկտիվի կիրառման համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, թե պատմամշակութային արժեքը անմիջապես է տեղափոխ-

⁶⁸ Տե՛ս հղում 26:

⁶⁹ Տե՛ս article 1(2) of the Council Directive 93/7/EEC of 15 March 1993 on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, OJ L 74/74:

վել մեկ այլ անդամ պետության տարածք, թե այնպեղ տեղափոխվել է Եվրոպական միության անդամ չհանդիսացող պետություն տեղափոխվելուց հետո:⁷⁰

Դիրեկտիվը հնարավորություն է տալիս անդամ պետությանը, որի տարածքից արտահանվել է պատմամշակութային արժեքը, այն վերադարձնելու նպատակով դատական գործ հարուցել այն անդամ պետության իրավասու մարմինների առջև, որպեղ գտնվում է անօրինական կերպով արտահանված պատմամշակութային արժեքը: Այս նպատակով դիրեկտիվը բոլոր անդամ պետություններին պարտավորեցրել է ստեղծել համապատասխան օրենսդրական բազա:

Դիրեկտիվով ամրագրված նպատակներին հասնելու համար անդամ պետություններից յուրաքանչյուրում ստեղծվում են մեկ կամ մի քանի կենտրոնական մարմիններ, որոնց ստեղծման մասին անդամ պետությունները տեղյակ են պահում Եվրոպական հանձնաժողովին: Այդ մարմինները իրենց ամենօրյա գործունեության ընթացքում համագործակցում են միմյանց հետ: Նամագործակցությունը արտահայտվում է անդամ պետություններից մեկի խնդրանքով կամ հարցումով նրա տարածքից անօրինական կերպով դուրս բերված պատմամշակութային արժեքը փնտրելու, այն փրկապետողին հայտնաբերելու, պատմամշակութային արժեքի ամբողջականությունը պահպանելու, պատմամշակութային արժեքը փրկապետողի և այն վերադարձնելու խնդրանքով դիմած անդամ պետության միջև միջնորդական ծառայություններ իրականացնելու, անդամ պետության տարածքից դուրս բերված առարկան պատմամշակութային արժեք հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքը ճշտելու և այլ հարցերի մեջ:⁷¹ Ընդ որում, պատմամշակութային արժեքները վերա-

⁷⁰ St'n u Europa-Summeries of EU legislation: Return of cultural objects unlawfully removed from the territory of an EU country/Summary, (http://europa.eu/legislation_summaries/culture/l11017b_en.htm), available at 16.09.2010:

⁷¹ St'n u article 4 of Council Directive 93/7/EEC of 15 March 1993 on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, OJ L 74/74:

դարձնելու հետ կապված ընթացակարգերը կարող են հարուցվել մեկ փարվա ընթացքում, այն բանից հետո, երբ հարցում ներկայացնող պետությունը իմացել է պատմամշակութային արժեքի կամ արժեքների գտնվելու վայրի և այն փրակապետողի մասին:⁷² Նման ընթացակարգերը չեն կարող բոլոր դեպքերում հարուցվել, եթե պատմամշակութային արժեքը անդամ պետության փարածքից փեղաշարժվելուց հետո անցել է 30 փարի: Վերադարձման ընթացակարգերը չեն կարող հարուցվել նաև այն դեպքում, երբ դրանք հարուցելու պահին պատմամշակութային արժեքների փեղաշարժը դադարել է լինել ապօրինի:

Թիվ 116/2009 կանոնակարգի և թիվ 93/7 դիրեկտիվի պատշաճ իմպլեմենտացումը ապահովելու համար, անդամ պետությունները պարտավոր են Եվրոպական հանձնաժողովին պարբերաբար զեկույցներ ներկայացնել դրա իմպլեմենտացման վերաբերյալ: Եվրոպական հանձնաժողովն էլ պարտավոր է իր հերթին երեք փարին մեկ Եվրոպական խորհրդարանին, ԵՄ խորհրդին և Եվրոպական փոփոխական ու սոցիալական կոմիտեին զեկույցներ ներկայացնել թիվ 116/2009 կանոնակարգի և թիվ 93/7 դիրեկտիվի իմպլեմենտացման վերաբերյալ,⁷³ որպեսզի նրանք համապատասխան միջոցներ ձեռնարկեն նշված ակտերի կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար:⁷⁴

⁷² Տե՛ս article 7(2) of Council Directive 93/7/EEC of 15 March 1993 on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, OJ L 74/74:

⁷³ Տե՛ս Report from the Commission to the Council, the European Parliament and the Economic and Social Committee on the implementation of Council Regulation (EEC) No 3911/92 on the export of cultural goods and Council Directive 97/3/EEC on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, Brussels, 25.05.2000, COM(2000) 325 final, Report from the Commission to the Council, the European Parliament and the Economic and Social Committee: Second Report on the application of Council Directive 93/7/EEC on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, Brussels, 21.12.2005, COM(2005) 675 և այլն:

⁷⁴ Տե՛ս article 10 of Council Regulation (EC) No 116/2009 of 18 December 2008 on the export of cultural goods (codified version), OJ L 39/1 and article 16 (1,2) of Council Directive 93/7/EEC of 15 March 1993 on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, OJ L 74/74:

Այսպիսով, ընդհանրացնելով ամբողջ վերոգրյալը, պետք է արձանագրենք, որ պատմամշակութային քաղաքականության ոլորտում Եվրոպական միությունն ունի անդամ պետությունների կողմից փոխանցված որոշակի իրավասություններ, որոնց իրականացման արդյունքում Եվրոպական միությունում մշակվել է համապատասխան օրենսդրական բազա՝ ուղղված պատմամշակութային ժառանգության պաշտպանությանը: Եվրոպական միության մակարդակում, պատմամշակութային ժառանգության իրավական վիճակի հետ կապված, կարգավորման առարկա են դարձել Եվրոպական միության փարաձքից պատմամշակութային արժեքների արտահանման և այդ փարաձքից անօրինական կերպով դուրս բերված պատմամշակութային արժեքները Եվրոպական միության փարաձք վերադարձնելու հետ կապված հարցերը, որոնք Եվրոպական միությանն անդամակցող բոլոր 27 պետություններում, ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ հայկական պատմամշակութային ժառանգությանն առնչվող վերը նշված հարցերի կարգավորման հետ կապված, սահմանել է միևնույն իրավական ռեժիմը: Այդ ռեժիմը բավականին խիստ է և միավորված է պաշտպանելու Եվրոպական միության փարաձքում գտնվող պատմամշակութային արժեքների ամբողջականությունը:

Գլուխ 2.

Պատմամշակութային ժառանգության իրավական կարգավորումը եվրոպական լուծումներում

2.1. Հայկական պատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը Եվրալիայում

Միջազգային իրավունքի համաձայն, ցանկացած ինքնիշխան պետություն հանդիսանում է հրապարակային իշխանության կրող: Այս հատկության ուժով այդ պետությունը ընդունում է պարտադիր բնույթ կրող վարքագծի կանոններ՝ ամենապարբեր ոլորտներում ձևավորելով համապատասխան իրավական ռեժիմ: Այս առումով բացառություն չի կազմում նաև պատմամշակութային ժառանգության պաշտպանության ոլորտը, որտեղ պետությունը իր ներքին իրավասության ոլորտում ևս հանդիսանում է համապարտադիր վարքագծի կանոնների սահմանման սկզբնաղբյուր: Պատմամշակութային արժեքների պաշտպանության ոլորտում հարկապես հերաբրքրական է Վերածննդի օրրան հանդիսացող Եվրալիայի ձևավորած իրավական ռեժիմը: Այս երկրում պատմամշակութային արժեքների իրավական ռեժիմի ուսումնասիրման արդիականությունը հարկապես բարձրանում է այնտեղ մեծաքանակ հայկական պատմամշակութային արժեքների և հայկական հասարակությունների փոօրինության ներքո գտնվող՝ այլ երկրների և քաղաքակրթությունների թանկարժեք պատմամշակութային նմուշների առկայության պայմաններում: Այդ արժեքները արտահայտվում են ինչպես շարժական, այնպես էլ անշարժ առարկաների ձևով: Մասնավորապես, վերջիններից կարող ենք հիշատակել Վենետիկի Մխիթարյան միաբանությունը (1717թ.), Վենետիկի Սուրբ Խաչ եկեղեցին (հայերին է

պարկանում 1717թ.-ից սկսած), Նոմում գրնվող Լևոնյան հայ վարժարանը (1883), Միլանում գրնվող Ամբրոյան գրադարանը (1609թ.) և այլն: Նշված հաստատությունները ոչ միայն իրենք են անգնահատելի պարամամշակութային նշանակություն ունեցող օջախներ, այլ նաև դրանցում պահվող պարամամշակութային մեծ արժեքներկայացնող բազմաթիվ առարկաները: Միայն Վենետիկի Մխիթարյան միաբանությունում գոյություն ունի ավելի քան 150 000 (հարյուր հիսուն հազար) անուն գիրք, այդ թվում՝ Ղուրանի ամենահին նմուշը, հայերեն թարգմանված Ալեքսանդր Մեծի պարմությունը (գրքի իսկական, հուներեն փարբերակը ոչնչացել է Ալեքսանդրիայում փեղի ունեցած հրդեհի ժամանակ, և միայն հայկական օրինակն է, որ պահպանվել է) և այլն: Այսպեղ պահվում են նաև ավելի քան 5000 (հինգ հազար) հին ձեռագիր աշխատություններ, այդ թվում՝ մինչև 862թ. թվագրվող հայկական ամենահին փաստաթուղթը: Մխիթարյան միաբանությունում նույնիսկ պահվում է եզրպարական մումիա:⁷⁵

Այս ամենը իր ամբողջության մեջ կազմում է Իտալիայի հայկական պարամամշակութային ժառանգությունը, որի իրավական վիճակը կուսումնասիրենք հետագոյության այս հարվածում: Տարակարծությունները բացառելու համար միանգամից նշենք, որ Իտալիայում հայկական պարամամշակութային արժեքների վերաբերյալ հարուկ իրավական ռեժիմ գոյություն չունի, այդ իսկ պարճառով դրանց իրավական կարգավիճակի մասին պարկերացում կազմելու համար պերք է ուսումնասիրել Իտալիայում գործող պարամամշակութային արժեքների ընդհանուր իրավական ռեժիմը, այսինքն՝ այն ռեժիմը, որը կիրառվում է Իտալիայում գոյություն ունեցող բոլոր պարամամշակութային արժեքների կամ գոնե դրանց զգալի մասի նկարմամբ:

⁷⁵ Տե՛ս article by Ruth L. Edenbaum on slowtravelitaly, Venice, Islands in the Lagoon: The Armenian Monastery on San Lazzaro, 2004, (F:\Italy\Slow Travel Italy - Venice, islands in the lagoon, San Lazzaro, Lido.htm), available at 02.06.2010:

Իրալիայում պարամաշակութային ժառանգության պաշտպանության հիմնախնդիրը բարձրացված է երկրի հիմնական օրենքի՝ Մասնավորապես, Իրալիայում գործող Մասնանադրության 9-րդ հոդվածի համաձայն՝ «Իրալիայի Նանրապետությունը խթանում է մշակույթի և գիտական ու փնիսիկական հետազոտության զարգացումը: Այն պաշտպանում և պահպանում է երկրի բնությունը, ինչպես նաև պարամական ու գեղարվեստական ազգային ժառանգությունը»:⁷⁶ Մասնանադրության մեջ այսպիսի նորմի առկայությունը, ինչպես նաև քննարկվող ոլորտում հաբուկ մասնագիտացված մարմնի՝ Մշակութային ժառանգության և գործառնությունների նախարարության (այսուհետ՝ նաև Նախարարություն) գոյությունը ինքնին վկայում է պարամաշակութային ժառանգության պաշտպանության՝ Իրալիայում գերակա քաղաքականության ուղղություն լինելու մասին:

Իրալիայում, ի կարարումն վերը նշված սահմանադրական դրույթի, ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր՝ ուղղված պարամաշակութային արժեքների իրավական պաշտպանությանը: Մասնավորապես, այդպիսի ակտեր են հանդիսանում «Պարամական և գեղագիտական սեփականության վերաբերյալ» 1939թ. հունիսի 01-ի թիվ 1089 օրենքը, «Լանդաֆրի վերաբերյալ» 1939թ. հունիսի 29-ին ընդունված թիվ 1497 օրենքը, «Արխիվների վերաբերյալ» 1963թ. ընդունված թիվ 1409 օրենքը: Ինչպես ցույց է տալիս այս օրենքների ընդունման ժամանակացուցը, Իրալիայում պարամաշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված իրավական միջավայրի ստեղծումն ունի բավականին վաղ արմարներ: 1999թ. վերը նշված բոլոր օրենքները համախմբվել են մեկ կոնսոլիդացված փաստաթղթի մեջ, որը անվանվում էր Մշակութային և շրջակա միջավայրի արժեքների վերաբերյալ օրենսդրական դրույթներ պա-

⁷⁶ St'u article 9 of the Constitution of Italian Republic, (http://www.concourt.am / armenian / legal_resources/world_constitutions/constit/italy/italy--e.htm), available at 02.06.2010:

րունակող կոնսուլիդացված օրենք:⁷⁷ Սակայն վերջինս 2004թ. հունվարի 22-ին ընդունված «Մշակույթի և լանդշաֆտի ժառանգության վարքականոնի մասին» թիվ 42 Դիրեկտիվով (այսուհետ՝ նաև թիվ 42 Դիրեկտիվ կամ Դիրեկտիվ) պարամամշակութային ոլորտում գոյություն ունեցող մի շարք ակտերի կամ դրանցում պարունակվող առանձին դրույթների հետ միաժամանակ ճանաչվել է ուժը կորցրած:⁷⁸ Ներկայումս թիվ 42 Դիրեկտիվը հանդիսանում է այն հիմնական օրենսդրական ակտը, որով սահմանվում է Իտալիայում պարամամշակութային արժեքների իրավական վիճակը: Այն կարգավորում է պարամամշակութային արժեքների իրավական վիճակի հետ կապված ամենաբազմաբնույթ հարցեր՝ սկսած դրանց պաշտպանությունից, օբարումից, արպահանումից, վերջացրած դրանց վնաս պարճառելու կամ ոչնչացնելու համար առաջացող պարասխանավորությամբ:

Իտալիայում «պարամամշակութային ժառանգություն» հասկացությունը հավաքական հասկացություն է: Թիվ 42 Դիրեկտիվի 2-րդ հոդվածի համաձայն, պարամամշակութային ժառանգությունը իր մեջ ներառում է **մշակութային սեփականությունը** և **լանդշաֆտային ունեցվածքը**: Իրավական որոշակիության ապահովման նպատակով, թիվ 42 Դիրեկտիվը սահմանում է այդ հասկացություններից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Մշակութային սեփականությունը բաղկացած է անշարժ և շարժական առարկաներից, որոնք 10-րդ և 11-րդ հոդվածների համաձայն ներկայացնում են գեղարվեստական, պարմական, հնէաբանական, ազգամարդաբանական, արխիվային և մարենագիտական հետա-

⁷⁷ St'u Legislative decree no. 490 of 29 October 1999, Consolidated Law containing the legislative provisions on cultural and environmental assets (<http://audit2.clio.it/legaldocs/italie/Italia%20web/Testo%20Unico.htm>), available at 10.06.2010:

⁷⁸ St'u Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage:

քրթրություն, ինչպես նաև օրենքով սահմանված կամ օրենքով որպես քաղաքակրթական արժեք որակվող ցանկացած այլ առարկայից: Դիրեկտիվի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, մշակութային սեփականությունը բաղկացած է պեյզաճանր, մարզերին, այլ փարածաշրջանային կառավարման մարմիններին, ինչպես նաև այլ հանրային մարմնի ու հասարակության և մասնավոր ոչ առևտրային միավորումներին պատկանող շարժական և անշարժ առարկաներից, որոնք իրենցից գեղարվեստական, պատմական, հնէաբանական, ազգամարդաբանական հերաքրթություն են ներկայացնում: 10-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված այն շարժական և անշարժ առարկաները, որոնք իրենցից ներկայացնում են արդեն մահացած հեղինակների գործեր և ունեն 50 փարուց ավելի վաղեմություն, դրանց գեղարվեստական, պատմական, հնէաբանական, ազգամարդաբանական հերաքրթություն ներկայացնելու հանգամանքը սպուգում է Նախարարությունը իր իսկ կողմից սահմանված կողմնորոշիչներին և ընթացակարգերին համապատասխան:⁷⁹ Այդ սպուգումը համապատասխան առարկաների նկատմամբ կարող է իրականացվել ինչպես Նախարարության նախաձեռնությամբ, այնպես էլ՝ ներկայացված դիմումների հիման վրա: Սպուգման արդյունքում Նախարարությունը ընդունում է հայտարարագիր, որով ճանաչում է սպուգվող առարկայի գեղարվեստական, պատմական, հնէաբանական, ազգամարդաբանական հերաքրթություն ներկայացնելու հանգամանքը: Եթե սպուգման արդյունքում պարզվում է, որ սպուգվող առարկան կամ առարկաները իրենցից գեղարվեստական, պատմական, հնէաբանական, ազգամարդաբանական հերաքրթություն չեն ներկայացնում, ապա այդ առարկաները դուրս են մնում թիվ 42 Դիրեկտիվի կիրառման շրջանակներից: Քննարկվող ընթացակարգի կիրառումը չի պահանջվում Դիրեկտիվի 10-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված

⁷⁹ Տե՛ս articles 12 and 13 of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, pages 19-20:

առարկաների համար: Դրանք այդ Դիրեկտիվի պաշտպանության փակ են գտնվում իրենց իսկ գոյության փաստի ուժով՝ անկախ դրանց գեղարվեստական, պարամական, հնէաբանական, ազգամարդաբանական հերաքրքրություն ներկայացնելու մասին հայտարարագրի ընդունումից:

Մշակութային սեփականություն հասկացության մեջ, բացի թիվ 42 Դիրեկտիվի 10-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված առարկաներից, մտնում են նաև այլ առարկաներ: Մասնավորապես, Դիրեկտիվի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, այդ հասկացության մեջ մտնում են նաև թանգարանների, պարկերասրահների և պետության, մարզերի, փարածաշրջանային կառավարման այլ մարմինների, ինչպես նաև կառավարման այլ մարմնի և հաստատության ցուցասրահների հավաքածուները, պետության, մարզերի, այլ փարածաշրջանային կառավարման մարմինների, ինչպես նաև այլ կառավարման մարմնի և հաստատության պարկանոց գրադարանների գրքերի հավաքածուները, արխիվները և եզակի փաստաթղթերը:⁸⁰

«Պարամշակութային ժառանգություն» հասկացության մեջ մտնող առարկաների ցանկը վերը թվարկվածով չի սահմանափակվում և, ըստ թիվ 42 Դիրեկտիվի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, կարող է ընդգրկել նաև այլ առարկաներ **(մասնավոր սուբյեկտներին պարկանող մշակութային բացառիկ նշանակություն ունեցող գրքերի հավաքածուներ և հարուկ պարմական նշանակություն ունեցող արխիվներ ու եզակի փաստաթղթեր, ցանկացած սուբյեկտի պարկանող հարուկ կարևոր նշանակություն ունեցող քաղաքական կամ ռազմական պարմությանը, գրականության պարմությանը, արվեստի և մշակույթի պարմությանը վերաբերող կամ հանրային, կուլտուրիվ կամ կրոնական հաստատությունների անհարկանության և պարմության ապացույց հանդիսացող**

⁸⁰ Տե՛ս article 10 of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, pages 17-18:

շարժական և անշարժ առարկաներ, ցանկացած անձի պատկանող իրերի հավաքածուներ կամ հաջորդական շարք, որոնք իրենց ամբողջության մեջ ավանդույթի կամ շրջակա միջավայրի ճանաչման կամ հատուկ բնութագրության ուժով բացառիկ գեղարվեստական կամ պատմական նշանակություն ունեն), եթե դրանք պեղական իրավասու մարմնի կողմից ճանաչվել են գեղարվեստական, պատմական, հնէաբանական, ազգամարդաբանական նշանակություն ունեցող:⁸¹

Լանդշաֆտային ունեցվածքը բաղկացած է կառույցներից կամ սույն օրենքի 134-րդ հոդվածով սահմանված փարածքներից (134-րդ հոդվածը իր հերթին հղում անելով թիվ 42 Դիրեկտիվի 136-րդ, 138-141-րդ, 142-րդ, և 156-րդ հոդվածների վրա, որպես այդպիսի փարածքներ հիշատակում է հրաբուխները, հանրահայտ բնական գեղեցկություն կամ երկրաբանական եզակիություն ունեցող անշարժ առարկաները, այգիները և ազգային կամ փարածաշրջանային պահուսպները, ինչպես նաև այգիների արտաքին պաշտպանության փարածքները, հնէաբանական հեղափոխություն ներկայացնող փարածքները և այլն), որոնք իրենցից ներկայացնում են հողի պատմական, մշակութային, բնական, մորֆոլոգիական և գեղագիտական արժեքներ կամ օրենքով սահմանված կամ դրանով որակվող ցանկացած այլ ունեցվածք:

Ինչպես տեսնում ենք, Իտալիայի օրենսդրությամբ պատմամշակութային ժառանգություն հասկացությունը շարք լայն է սահմանվում: Պետք է նկատենք, որ այդ սահմանումը իր մեջ ներառում է նաև հայկական պատմամշակութային ժառանգության մաս կազմող մի շարք պատմամշակութային արժեքներ, քանի որ դժվար թե որևէ մեկը վիճարկի, որ Վենետիկի Միսիթարյան միաբանությունը կամ Լևոնյան հայ վարժարանը իրենցից պատմական կամ գեղարվեստական

⁸¹ Stn article 10 (3) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage:

հետաքրքրություն չեն ներկայացնում: Ներևաբար, թիվ 42 Դիրեկտիվի գործողությունից անմասն չի մնում նաև հայկական պարամամշակութային ժառանգությունը:

Թիվ 42 Դիրեկտիվի բովանդակության վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ պարամամշակութային սեփականությունը Իտալիայում կարող է պարկանել պերությանը, փարածաշրջանային կառավարման մարմիններին և մասնավոր իրավունքի սուբյեկտներին: Մա ինքնին սպառնալիք է սրելոմ, որ պարամամշակութային արժեքները, գրավելով մասնավոր իրավունքի սուբյեկտների փրապերության, օգրագործման և փնօրինման ներքո, կարող են վնասվել, ոչնչանալ կամ փոխանցվել ձեռքից ձեռք, որը իր հերթին կարող է հանգեցնել դրանց հերքերի կորստյան: Այդ իսկ պարճառով Իտալիայի օրենսդրոյամբ սահմանված են խիստ օրենսդրական կարգավորումներ, որոնք միտված են վերը նշված իրավագորոյունները որոշակիորեն սահմանափակելու միջոցով ապահովել պարամամշակութային արժեքների պաշտպանոյունն ու պահպանոյունը:

Վերը նշված խնդրի իրագործումը ապահովելու նպարակով, թիվ 42 Դիրեկտիվը կարգավորում է առաջին հերթին դրանց օտարման հեր կապված հարցերը: Ընդհանուր կանոնի համաձայն, արգելվում է պերոյանը պարկանող մշակութային ժառանգոյան փոխանցումը, դրանց նկարմամբ երրորդ անձանց կողմից իրավունքների ձեռքբերումը՝ բացառոյամբ թիվ 42 Դիրեկտիվով նախարեսված դեպքերի: Բացի այդ, Դիրեկտիվը, ի դեմս իր 54-րդ հոդվածի, նշում է այն պարմամշակութային արժեքների ցանկը, որոնց օտարումը ընդհանրապես արգելվում է: Մասնավորապես, այդպիսի արժեքներ են հանդիսանում հնէաբանական հետաքրքրոյուն ներկայացնող շինոյունները և փարածքները, օրենսդրոյամբ որպես ազգային հուշարձաններ ճանաչված շինոյունները, թանգարանների, արվեստի սրահների, պարկերասրահների, գրադարանների հավաքածուները, արխիվները, թիվ 42 Դիրեկտիվի 10-րդ հոդվածի 1-ին մասում

թվարկված սուբյեկտներին (պետություն, մարզեր, փարածաշրջանային կառավարման մարմիններ, այլ հանրային մարմիններ ու հասարակություններ և մասնավոր ոչ առևտրային միավորումներ) պարկանող շարժական և անշարժ իրերը, որոնք հանդիսանում են մահացած արվեստագետների աշխատանքներ և ունեն ավելի քան 50 փարվա ստեղծման վաղեմություն, կենդանի արվեստագետների աշխատանքները, որոնք ունեն ավելի քան 50 փարվա ստեղծման վաղեմություն, եթե դրանք ներառնված են Դիրեկտիվի 53-րդ հոդվածով սահմանված սուբյեկտներին (պետություն, շրջաններ և կառավարման փարածաշրջանային մարմիններ) պարկանող հավաքածուներում, Դիրեկտիվի 53-րդ հոդվածում սահմանված սուբյեկտներին պարկանող եզակի փաստաթղթերը, ինչպես նաև այդ հոդվածի մեջ չմտնող կառավարման մարմիններին և հասարակություններին պարկանող արխիվներն ու եզակի փաստաթղթերը և 53-րդ հոդվածում սահմանված սուբյեկտներին պարկանող անշարժ գույքը, որոնք ճանաչվել են որոշակի հետաքրքրություն ներկայացնող: Այս հոդվածում նշված պարամամշակութային արժեքների օտարումը թույլատրվում է միան պետության, շրջանների և այլ կառավարման փարածաշրջանային մարմինների միջև:⁸²

Թիվ 42 Դիրեկտիվի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետությանը պարկանող և թիվ 42 Դիրեկտիվի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում չնախատեսված անշարժ գույք հանդիսացող մյուս պարամամշակութային արժեքները կարող են օտարվել միայն Նախարարության թույլտվությամբ: Օտարման թույլտվությունը կարող է փրվել միայն այն դեպքում, երբ օտարումը երաշխավորում է պարամամշակութային արժեքի պաշտպանությունն ու բարելավումը, որևէ կերպ չի խոչընդոտում հանրային օգտագործմանը, և օգտագործման պայմանը պետք է պարունակի օգտագործման ձևերը, որոնք

⁸² Տե՛ս article 54 of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, pages 39-40:

համապատասխանում են շինությունների պատմական և գեղագիտական բնույթին և պետք է լինեն այնպիսին, որ վնաս չպատճառվի դրանց պահպանությանը:⁸³

Թիվ 42 Դիրեկտիվի 56-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի «ա» և «բ» ենթակետերի համաձայն, Նախարարության թույլտվությունը պատմամշակութային արժեքները օտարելիս անհրաժեշտ է ստանալ նաև.

- երբ օտարվում են պետությանը, շրջաններին, փարածաշրջանային կառավարման մարմիններին պատկանող պատմամշակութային արժեքներ, որոնք չեն մտնում թիվ 42 Դիրեկտիվի 54 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 55 հոդվածի 1-ին մասով նախատեսված պատմամշակութային արժեքների մեջ,
- երբ օտարվում են վերը նշված կետում նշված կառավարման մարմինների մեջ չմտնող, այլ կառավարման մարմինների պատկանող, պատմամշակութային արժեքեր կամ շահույթ ստանալու նպատակ չհետպահող միավորումներին պատկանող, պատմամշակութային արժեքներ՝ բացառությամբ 54-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերում սահմանված պատմամշակութային արժեքների:

Թիվ 42 Դիրեկտիվի 56-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի համաձայն, 56-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի «բ» ենթակետում նշված սուբյեկտների կողմից օտարման թույլտվության ստացումը պահանջվում է նաև առարկաների հավաքածուների կամ հաջորդականության և գրքերի հավաքածուների մասնակի վաճառքի դեպքում:⁸⁴

Քննարկվող համարեքստում անհրաժեշտ է անդրադառնալ Իտալիայի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանությանը պատկանող պատմամշակութային արժեքների օտարմանը: Վերջինս, հան-

⁸³ Տե՛ս article 55 (1,2) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 40:

⁸⁴ Տե՛ս article 56(1,2) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 40:

դիսանալով շահույթ ստանալու նպատակ չհետապնդող միավորում՝ ընդգրկվում է թիվ 42 Դիրեկտիվի 56-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի «բ» ենթակետով սահմանված սուբյեկտների ցանկում և, հետևաբար, նախքան որևէ պատմամշակութային արժեք օտարելը պետք է ստանա Նախարարության թույլտվությունը: Այսպիսի օրենսդրական կարգավորումը նվազագույնի է հասցնում ինչպես Մխիթարյան միաբանությունում, այնպես էլ Իտալիայում գնրվող հայկական այլ պատմամշակութային հաստատություններում առկա շարժական պատմամշակութային արժեքների օտարման հնարավորությունը, քանի որ դրա իրականացումը կախվածության մեջ է դնում Նախարարության հայեցողությունից:

Պատմամշակութային արժեքների օտարման թույլտվության դիմումը կարող է ներկայացվել այն մարմնի կողմից, որին այն պատկանում է: Պետությանը պատկանող պատմամշակութային արժեքների դեպքում թույլտվությունը տրվում է Սուպերինտենդանտի առաջարկությամբ, Նախարարության կողմից՝ համապատասխան շրջանի հետ խորհրդակցելուց և շրջանի միջոցով շահագրգիռ այլ փարածաշրջանային կառավարման մարմինների հետ խորհրդակցելուց հետո:⁸⁵

Պատմամշակութային արժեքների օտարման իրավունքը Իտալիայում սահմանափակված է նաև պետության կողմից օտարվող պատմամշակութային արժեքի գնման նախապատվության իրավունքով: Թիվ 42 Դիրեկտիվի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Նախարարությունը, կամ սույն ակտի 62-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքում շրջանը կամ այլ շահագրգիռ փարածաշրջանային կառավարման մարմինը կարող են գնման նախապատվության իրավունքի ուժով գնել պատմամշակութային արժեքը, փոխանցման գործարքում ամրագրված գնով: Երբ պատմամշակութային

⁸⁵ Տե՛ս article 57(1,2) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 41:

արժեքը օտարվում է այլ գույքի կազմում միասնական դրամական հատուցմամբ, կամ դրա նկատմամբ իրավունքը փոխանցվում է առանց հատուցման կամ փոխանակության եղանակով, ապա դրա արժեքը որոշվում է թիվ 42-րդ Դիրեկտիվի 62-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված այն սուբյեկտի կողմից, որը ցանկություն է հայտնում իրականացնել գնման նախապատվության իր իրավունքը: Երբ պատմամշակութային արժեքի սեփականատերը չի համաձայնվում առաջարկված գնի հետ, ապա պատմամշակութային արժեքի գինը որոշվում է օտարողի և գնման նախապատվության իրավունքը իրականացնողի միջև կնքված համաձայնագրով նախատեսված երրորդ անձի կողմից: Երբ կողմերը համաձայնության չեն գալիս երրորդ անձի նշանակման վերաբերյալ կամ նրա կողմից իր պարտականությունները կատարելուց հրաժարվելու կամ դրանց կատարմանը անցնելու անհնարինության դեպքում՝ փոխարինողին նշանակելու վերաբերյալ, երրորդ անձը կողմերից մեկի պահանջով նշանակվում է գործարքի կնքման վայրի փարածքային դատարանի նախագահի կողմից: Նմանապես է նաև երրորդ անձի կողմից գնահատված արժեքի վիճարկում՝ սխալի կամ ակնհայտ անհամաչափության դեպքում: Գնման նախապատվության իրավունքը կարող է իրականացվել նույնիսկ արդեն որևէ օրինական իրավունքով օտարված պատմամշակութային արժեքի նկատմամբ:⁸⁶

Գնման նախապատվության իրավունքը կարող է իրականացվել միայն որոշակի ժամկետում: Այն կարող է իրականացվել պատմամշակութային արժեքը օտարելու կամ ժառանգության կարգով դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու մասին պետական իրավասու մարմնին հայտարարագիր ներկայացնելուց հետո, 6 (վեց) ամսվա ընթացքում: Ընդ որում, նման հայտարարագրի ներկայացման պարտականություն առկա է պատմամշակութային արժեքի

⁸⁶ Տե՛ս article 60 of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, pages 42-43:

օրարման կամ դրա նկարմամբ ժառանգության կարգով սեփականության իրավունքի ձեռքբերման յուրաքանչյուր դեպքում: Նայարարագրերը ներկայացվում են պարմամշակութային արժեքի գրնվելու վայրի Սուպերինտենդանտին: Պարմամշակութային արժեքի օրարման կամ դրա նկարմամբ ժառանգության միջոցով սեփականության իրավունքի ձեռքբերման վերաբերյալ հայարարագրի բացակայության, սահմանված ժամկետում չներկայացման կամ ոչ լրիվության դեպքում գնման նախապարվության իրավունքը կարող է իրականացվել 180 (հարյուր ութսուն) օրվա ընթացքում, հաշվված այն պահից, երբ Նախարարությունը սրանում է ուշացված հայարարագիրը կամ այլ կերպ տեղեկանում պարմամշակութային արժեքի օրարման կամ դրա նկարմամբ ժառանգության միջոցով սեփականության իրավունքի ձեռքբերման մասին:⁸⁷

Իրալիայում պարմամշակութային արժեքների օրարման հետ կապված կանոնների խախտումը (պետության կողմից գնման նախապարվության իրավունքի խախտում, թիվ 42 Դիբեկտիվի 55-րդ և 56-րդ հոդվածներով սահմանված պարմամշակութային արժեքների՝ առանց թույլտվության օրարում, իրականացրած գործարքի մասին սահմանված ժամկետում հայարարագրի չներկայացում) զուգորդվում է համապարասխան պարասխանապարվության առաջացմամբ, որը արտահայտվում է մինչև մեկ տարի ժամկետով ազարագրկման կամ 1549.50 մինչև 77.469 եվրոյի չափով տուգանքի ձևերով:⁸⁸

Իրալիան, հանդիսանալով Եվրոպական միության անդամ պետություն, այս կառույցի կողմից պարմամշակութային ժառանգության պահպանության ոլորտում իրականացվող քաղաքականության ազդեցության ներքո սահմանել է իր երկրից պարմամշակութային արժեք-

⁸⁷ Տնն article 61(1,2) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 43:

⁸⁸ Տնն article 170 (1) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 40:

ների արտահանման հետ կապված կոշտ օրենսդրական կազավորումներ: Ճիշտ է, Իտալիան որպես Եվրոպական միության անդամ պետություն պարտավոր է ենթարկվել պարամամշակութային արժեքների արտահանման ոլորտում Եվրոպական միության խորհրդի կողմից 2008թ. դեկտեմբերի 18-ին ընդունված թիվ 116/2009 դիրեկտիվին,⁸⁹ սակայն Իտալիայի, ինչպես և ցանկացած այլ անդամ պետության այդ պարտավորությունը գոյություն ունի այնքանով, որքանով դա վերաբերվում է այն պարամամշակութային արժեքներին, որոնց վրա փարածվում է վերը նշված դիրեկտիվի գործողությունը: Այլ պարամամշակութային արժեքների դեպքում գործում են Իտալիայի օրենսդրությամբ սահմանված արտահանման կանոնները: Ընդ որում, այդ կանոնները սահմանված են թիվ 42 Դիրեկտիվում:

Թիվ 42 Դիրեկտիվի 65-րդ հոդվածի առաջին մասի համաձայն, Իտալիայում արգելվում է այդ դիրեկտիվի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում նշված շարժական պարամամշակութային արժեքների մշտական արտահանումը երկրից:⁹⁰ Ընդ որում, այս սահմանափակումը վերաբերում է ինչպես Եվրոպական միության անդամ այլ պետություններ, այնպես էլ երրորդ պետություններ արտահանելուն: Չի թույլատրվում նաև՝

- թիվ 42 Դիրեկտիվի 10-րդ հոդվածի 1-ին մասում հիշատակվող սուբյեկտներին պարկանոց շարժական պարամամշակութային արժեքների արտահանումը, որոնք հանդիսանում են մահացած հեղինակների գործեր և ունեն 50 փարուց ավելի սրեղծման վաղեմություն, քանի դեռ այդ Դիրեկտիվի 12-րդ հոդվածով նախատեսված սպուգումը չի իրականացվել,

⁸⁹ Stn Council Regulation (EC) No 116/2009 of 18 December 2008 on the export of cultural goods (codified version), OJ L 39/1:

⁹⁰ Stn article 65(1) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 46:

- ցանկացած սուբյեկտի պատկանող գույքի արտահանումը, որը ներառված է թիվ 42 Դիրեկտիվի 10-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված կարգախմբի մեջ, և որը Նախարարությունը, համապատասխան խորհրդարավական մարմնի հետ խորհրդակցելուց հետո, արգելել է առանձին ժամանակահատվածներում դրա արտահանումը՝ ելնելով այն հանգամանքից, որ դա կարող է վնասակար լինել պատմամշակութային ժառանգության, պատմամշակութային արժեքի ծագման աղբյուրի և դրա կեցության միջավայրի համար:⁹¹

Թիվ 42 Դիրեկտիվի 65-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դեպքերից բացի՝ համապատասխան իրավասու մարմնի թույլտվությամբ և սահմանված ընթացակարգի պահպանմամբ թույլատրվում է հետևյալ պատմամշակութային արժեքների մշտական արտահանումը.

- առարկաները, անկախ դրանց պատկանելությունից, որոնք իրենցից ներկայացնում են որոշակի մշակութային հետաքրքրություն, մահացած հեղինակների գործեր են և ունեն ավելի քան 50 տարվա սրեղծման վաղեմություն,
- իրենցից մշակութային հետաքրքրություն ներկայացնող արխիվները և եզակի փաստաթղթերը, որոնք պատկանում են մասնավոր իրավունքի սուբյեկտներին,
- թիվ 42 Դիրեկտիվի 11-րդ հոդվածի 1-ին մասի f), g), h) կետերով սահմանված գույքը՝ անկախ դրա պատկանելությունից:⁹²

Վերը նշված մշտական արտահանման դեպքերում արտահանողը պետք է հայտարարագիր ներկայացնի արտահանման գործակալություն՝ իրավասու ազատ շրջանառության վկայագիր ստանալու

⁹¹ Stn article 65(2 a), b)) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 46:

⁹² Stn article 65(3) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, pages 46-47:

համար:⁹³ Արտահանումը հնարավոր է միայն այդ վկայագրի հիման վրա, որը տրվում է երեք փարի ժամկետով: Արտահանման գործակալությունների կողմից վկայագիրը տրվում է Նախարարության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև շրջանների հետ խորհրդակցելուց հետո: Վկայագրի տրման մերժումը կարող է բողոքարկվել Նախարարությանը: Բողոքը կարող է ներկայացվել մերժման մասին որոշումը կայացնելուց հետո, 30 (երեսուն) օրվա ընթացքում:⁹⁴

Իրավիայում օրենսդրական կարգավորումն այլ է պարամաշակութային արժեքների ժամանակավոր արտահանման դեպքում: Մասնավորապես, թիվ 42 Դիրեկտիվի 66-րդ հոդվածի, դրա 65-րդ հոդվածի 1-ին մասում, 2-րդ մասի «ա» ենթակետում և 3-րդ մասում հիշատակված առարկաների և մշակութային սեփականության ժամանակավոր արտահանումը համապարասխան թույլտվությամբ, երկրից թույլատրվում է արվեստի միջոցառումների և ցուցահանդեսների ժամանակ: Մակայն այս դեպքում արտահանողը պետք է երաշխավորի արտահանվող առարկաների և մշակութային սեփականության ամբողջականությունն ու անվտանգությունը:⁹⁵

Իրավիայի օրենսդրությամբ, ինչպես ժամականավոր, այնպես էլ մշտապես արգելվում է արտահանել այն գույքը, որը կարող է փոփոխման ժամանակ վնասվել կամ հայտնվել շրջակա միջավայրի անբարենպաստ պայմաններում, ինչպես նաև այն գույքը, որը հանդիսանում է թանգարանի, պալատերասրահի, արվեստի սրահի, արխիվի, գրադարանի, ինչպես նաև արվեստի գործերի կամ գրական

⁹³ Ազատ շրջանառության վկայագիր տալու իրավունք ունեցող գործակալությունները փոփոխված են Իրավիայի ամենափարքեր քաղաքներում, մասնավորապես, այդպիսի գործակալություններ կան Բոլոնիայում, Կայարիում, Միլանում, Նոմում, Ֆլորենցիայում, Պալեոմոյում և մի շարք այլ քաղաքներում:

⁹⁴ Տե՛ս articles 68(1 ,2, 5, 7), 69 (1) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, pages 48-49:

⁹⁵ Տե՛ս article 66(1) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 47:

հավաքածուի որոշակի հատվածի հիմնական մաս:⁹⁶

Իրավիչայի տարածքից պատմամշակութային արժեքների արտահանման վերը շարադրված կարգավորումները ամեննին չեն երաշխավորում այդ արժեքների ապօրինի արտահանման դեպքերի բացառումը: Այդ իսկ պատճառով Իրավիչայում նաև սահմանված են խիստ պարժամիջոցներ պատմամշակութային արժեքների արտահանման կանոնները խախտելու հետ կապված, որը կարող է արտահայտվել ինչպես ազատագրված ձևով պարիժ կրելով, այնպես էլ ֆինանսական պատասխանատվությամբ: Թիվ 42 Դիրեկտիվի 174-րդ հոդվածի համաձայն, ցանկացած ոք, ով առանց ազատ շրջանառության վկայագրի կամ արտահանման լիցենզիայի արտասահման է արտահանում գեղարվեստական, պատմական, հնէաբանական, ազգամարդաբանական, մատենագիտական, փաստաթղթային կամ արխիվային հետաքրքրություն ներկայացնող առարկաներ, ինչպես նաև նշված դիրեկտիվի 11-րդ հոդվածի 1-ին մասի f), g), h) կետերում նշված առարկաներ, ենթակա է ազատագրված մեկից մինչև չորս տարի ժամկետով կամ 258-ից (երկու հարյուր հիսունութից) մինչև 5.165.00 (հինգ հազար հարյուր վաթսունհինգ) եվրոյի չափով տուգանքի: Այս պարժամիջոցները կիրառելի են նաև այն անձանց նկատմամբ, որոնք խուսափում են սահմանված ժամկետներում ազգային տարածք վերադարձնել այն պատմամշակութային սեփականությունը, որը համապատասխան թույլտվությամբ ժամանակավորապես դուրս է բերվել կամ արտահանվել երկրից:⁹⁷

Իրավիչայի օրենսդրությամբ խիստ կանոններ են սահմանված ոչ միայն պատմամշակութային արժեքների արտահանման, այլ նաև

⁹⁶ Տե՛ս article 66(2 a), b)) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 47:

⁹⁷ Տե՛ս article 174 (1,2) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, pages 101-102:

դրանց ներքին տեղաշարժի հետ կապված: Մասնավորապես, Իրալիայում պեղական իրավասու մարմնի կողմից համապարասխան պարժամիջոցի է ենթակա պարմամշակութային արժեքի ցանկացած ներքին տեղաշարժ: Բացի այդ, պարմամշակութային արժեքի օրինական փրակավորողի կողմից իր բնակության կամ տնտեսական գործունեության վայրը փոխելու հետևանքով իրականացվող պարմամշակութային արժեքի տեղաշարժի մասին անհրաժեշտ է տեղյակ պահել Սուպերինտենդանտին: Վերջինս, ծանուցումը ստանալուց հետո, 30 օրվա ընթացքում պետք է սահմանի այն միջոցները, որոնք անհրաժեշտ են մշակութային արժեքի փոխադրման ընթացքում դրան հնարավոր պարճառվող վնասը կանխելու համար: Պետությանը, այլ կառավարման մարմիններին և հասարակություններին պարկանող ընթացիկ արխիվների տեղաշարժը ենթակա չէ նման պարժամիջոցի:⁹⁸

Իրալիայում պարմամշակութային արժեքների պաշտպանության և պահպանության նպատակով պարասխանարվություն է սահմանված ոչ միայն դրանց արտահանման կամ օտարման կանոնները խախտելու հետ կապված: Պարասխանարվություն կարող է առաջանալ նաև պարմամշակութային արժեքների պաշտպանության և պահպանության նկատմամբ այլ ապօրինի ուրնձգություններ կատարելու դեպքում: Այդ ուրնձգությունները կարող են արտահայտվել պարմամշակութային արժեքների ապօրինի տեղաշարժման, ոչնչացման, ձևափոխման, վերականգնման և այլ ձևերով: Իրալիայում օրենսդիրը ոչ պակաս խիստ է նաև այս դեպքերում: Մասնավորապես, թիվ 42 Դիրեկտիվի 169-րդ հոդվածի համաձայն, ցանկացած ոք, ով առանց թույլտվության տեղաշարժում, ոչնչացում, ձևափոխում, վերականգնում կամ իրականացում է ցանկացած այլ բնույթի աշխարանք սույն օրենքի 10-րդ հոդվածում սահմանված

⁹⁸ St'u article 21(1'b', 2, 3) of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 100:

մշակութային սեփականություն հանդիսացող փարածքներում կամ առանց իրավասու մարմնի թույլտվության իրականացնում է շինությունների որմնանկարների, զարդանկարների կամ այն զարդարող այլ դրվագների անջատում՝ անկախ դրանց՝ հրապարակային ցուցադրված լինելու կամ չլինելու հանգամանքից կամ առանց իրավասու մարմնին անհապաղ ծանուցելու նախագծվող աշխատանքների մասին ծայրահեղ անհրաժեշտության դեպքում իրականացնում է ժամանակավոր աշխատանքներ, որոնք անհրաժեշտ են սույն Դիրեկտիվի 10-րդ հոդվածով սահմանված արժեքների էական վնասից խուսափելու համար, կարող է ենթարկվել ազատագրկման վեց ամսից մինչև մեկ փարի ժամկետով կամ 775-ից մինչև 38.734.50 եվրոյի չափով փուզանքի: Այս պարժամիջոցները կարող են կիրառվել այն դեպքում, երբ պարամաշակութային արժեքների նկատմամբ ապօրինի իրականացվող աշխատանքները դադարեցնելու մասին իրավասու մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով ընդունված հրահանգը սպանալուց հետո այդ աշխատանքները չեն դադարեցվում:⁹⁹

Ավելին, օրենսդիրը պարասխանաբարություն է նախատեսում նաև այն դեպքում, երբ թիվ 42 Դիրեկտիվի 10-րդ հոդվածում նշված մշակութային արժեքները օգտագործվում են դրանց պարամական կամ գեղագիտական բնույթի հետ անհամարեղելի նպատակներով, կամ որը սպառնալիք է ստեղծում դրանց պահպանության և ամբողջականության համար: Նշված դեպքում նախատեսվում է ազատագրկում վեց ամսից մինչև մեկ փարի ժամկետով կամ 775-ից մինչև 38.734.50 եվրոյի չափով փուզանք:¹⁰⁰

Թիվ 42 Դիրեկտիվով պարասխանաբարություն է սահմանվում

⁹⁹ St'u article 169 of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 100:

¹⁰⁰ St'u article 170 of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 24:

նան պեքորոթյանը պարկանող պարմամշակութային արժեքների անօրինական գավթման համար: Այս դեպքում անձը կարող է ենթարկվել մինչև 3 (երեք) տարի ժամկետով ազատագրկման կամ 31-ից (երեսունմեկ) մինչև 516.50 (հինգ հարյուր տասնվեց և հիսուն) եվրոյի չափով տուգանքի:

Ինչպես ցանկացած երկրում, այնպես էլ Իտալիայում գոյություն ունեն համապարասխան պեքական իրավասու մարմիններ, որոնք կոչված են ապահովելու պարմամշակութային ժառանգության պաշտպանության և պահպանության պեքական քաղաքականության իրականացումը: Նախ պեք է նշել, որ 1972թ.-ին Իտալիան վարչական միավորների բաժանվելուց հետո երկրում գոյություն ունի պարմամշակութային քաղաքականության ոլորտում իրավասությունների երկու մակարդակ: Առաջինը Իտալիայի վարչական միավորների իրավասությունն է կամ տեղական իրավասությունը, իսկ երկրորդը՝ կենտրոնական կամ հանրապեքական իրավասությունը: Քննարկվող ոլորտում վարչական միավորներին փոխանցվել է իրավասությունների շար սահմանափակ շրջանակ: Տիմնական իրավասությունը կենտրոնացված է հանրապեքական մակարդակում, որը առավելապես իրականացվում է Իտալիայի Մշակութային ժառանգության և գործառնությունների նախարարության կողմից: Այն հիմնադրվել է 1974թ., իսկ 1998թ. ընդունված թիվ 368 դիրեկտիվով տեղի է ունեցել նրա գործունեության վերակազմավորում 10 ուղղություններով:¹⁰¹ Նախարարության իրավական վիճակը որոշակիորեն սահմանվում է նաև թիվ 42 Դիրեկտիվով: Նշված դիրեկտիվների համաձայն, Նախարարության գործառնությունն են հանդիսանում մշակութային սեփականության և պարմամշակութային ժառանգության պաշտպանությունը, կառավարումը, հաշվեգրումը, վերահսկողությունը,

¹⁰¹ St'u Legislative decree 20 October 1998, n. 368 (http://audit2.clio.it/legaldocs/italie/Italia%20web/DLvo368_98_inglese.htm), available at 10.06.2010:

սպորտումը և այլն:¹⁰² Իտալիայում պապմամշակութային ժառանգության պահպանությունը իրականացվում է ուսումնասիրության, նախականխման, պաշտպանության և վերականգման միջոցներով:¹⁰³

Նախարարությունը կարող է իրեն պարկանող գործառնությունը համաճայնագրի կամ համակարգման միջոցով պարվիրակել շրջաններին: Պապմամշակութային ժառանգության պաշտպանության ոլորտում իրենց մասնակցությունն են ունենում շրջանները:

Նախարարությանն իր գործառնությունների իրականացման ընթացքում օժանդակում է Մշակութային ժառանգության հարցերով խորհուրդը, որը հիմնադրվել է 1998թ.:¹⁰⁴ Այն խորհրդարավական հարցերով մարմին է և կոչված է աջակցելու Նախարարությանը պապմամշակութային ոլորտում քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս:

Այսպիսով, ընդանրացնելով վերոգրյալը՝ պետք է արձանագրենք, որ Իտալիայում պապմամշակութային ժառանգության պաշտպանության ոլորտում գոյություն ունի ձևավորված հարուստ օրենսդրական բազա, որի ազդեցության ոլորտից անմասն չի մնում նաև հայկական պապմամշակութային ժառանգությունը: Իտալիայում ձևավորված օրենսդրական բազան հայկական պապմամշակութային ժառանգությունը ամուր հանգույցներով կապում է իտալական պետության և ժողովրդի հետ՝ նվազագույնի հասցնելով նրանց միջև այդ կապի խզումը: Այդ փոխկապվածությունը առաջին հերթին արբահայրվում է Իտալիայում «պապմամշակութային ժառանգու-

¹⁰² Stn articles 17, 18,19 of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, pages 22, 23 and article 2 of the Legislative decree 20 October 1998, n. 368 (http://audit2.clio.it/legaldocs/italie/Italia%20web/DLvo368_98_inglese.htm#art4), available at 10.06.2010:

¹⁰³ Stn article 29 of the Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, page 27:

¹⁰⁴ Stn article 4 of the Legislative decree 20 October 1998, n. 368 (http://audit2.clio.it/legaldocs/italie/Italia%20web/DLvo368_98_inglese.htm#art4), available at 10.06.2010:

թյուն» հասկացությունը օրենսդրորեն լայն մեկնաբանելով և դրա մեջ ամենաբազմապիսի պարամամշակութային արժեքներ ներառելով: Բացի այդ, հիշյալ փոխկապվածությունը ամրապնդում է նաև այն հանգամանքը, որ հայկական պարամամշակութային արժեքները Իրալիայից արտահանելու, դրանք օտարելու, տեղաշարժելու և այլ հարաբերությունների կապակցությամբ գործում են խիստ օրենսդրական կարգավորումներ, և առկա է ուժեղ պետական վերահսկողություն: Մակայն միևնույն ժամանակ պետք է արձանագրենք, որ Իրալիայում առկա է հայկական պարամամշակութային ժառանգության պաշտպանության բավականին բարենպաստ օրենսդրական միջավայր, որը ամենաարթեր պարասխանարվության տեսակների առաջացման սպառնալիքով և պետական վերահսկողական մեխանիզմների սահմանման միջոցով միավաճ է կանխելու ինչպես ընդհանուր, այնպես էլ հայկական պարամամշակութային ժառանգության դեմ իրականացվող ապօրինի ոտնձգությունները:

2.2. Նայկական պարամամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը Ֆրանսիայում

Նայկական պարամամշակութային ժառանգության ինքնարիպ և հարուստ օրրան է Ֆրանսիան: Այդ մասին են վկայում Ֆրանսիայում առկա բազմաթիվ հայկական պարամամշակութային հուշարձանները: Մասնավորապես, Ֆրանսիայում են գտնվում այնպիսի հայկական պարամամշակութային արժեքներ, ինչպիսիք են Փարիզի Սուրբ Նովիաննես Մկրտիչ եկեղեցին (1902թ.), Փարիզի Սուրբ Ժան Բապտիստի առաքելական տաճարը (1904թ.), Վալենսիայի Գրիգոր Լուսավորիչ առաքելական եկեղեցին (1953թ.), Մարսելի Սուրբ Քևորգ (1929թ.) և Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ (1933թ.)

առաքելական եկեղեցիները, Սևրի Մամուել Մուրաբ վարժարանը (1846թ.) և այլն: Ֆրանսիայում հայկական պարամամշակութային հուշարձանների թիվը հասնում է մի քանի տասնյակի: Նանդիսանալով պարմական իրողությունների անշարժ վկայություններ և իրենց վրա կրելով հայկական մշակույթի դրոշմը՝ այդ հուշարձանները հարուստ են նաև շարժական պարամամշակութային արժեքներով:

Նաշվի առնելով վերոգրյալը՝ չպետք է սույն հետազոտության շրջանակներում անտարբեր անցնել Ֆրանսիայի պարամամշակութային ժառանգությանը վերաբերող օրենսդրության ուսումնասիրումից՝ այդ ժառանգության ընդհանուր իրավական ռեժիմին ծանոթանալու և հայկական պարամամշակութային ժառանգության իրավական ռեժիմի մասին պարկերացում կազմելու նպատակով:

Ֆրանսիան առաջին եվրոպական երկիրն է, որտեղ պետական մակարդակով սկսեցին իրականացնել պարամամշակութային արժեքների ուսումնասիրման և պաշտպանության հարցերը: Դեռևս 1830թ. Ֆրանսիայում հիմնադրվեց հուշարձանների պաշտպանության Գլխավոր վերահսկողական մարմին, իսկ 1983թ. պարամամշակութային ժառանգության պահպանման համար պարասիսանալությունը փոխանցվեց Կոմունաներին: Ֆրանսիայում պարամամշակութային քաղաքականության ոլորտին վերաբերող առաջին օրենքները ընդունվեցին 1900-ական թթ. սկզբներին: Մասնավորապես, այդպիսի օրենքներ հանդիսացան 1913թ. դեկտեմբերի 31-ին ընդունված «Պարմական հուշարձանների մասին» օրենքը, 1930թ. մայիսի 2-ին ընդունված «Գեղագիտական, պարմական, գիտական, լեզենդար և գեղանկարչական բնույթ ունեցող բնական հուշարձանների և լանդշաֆտների մասին» օրենքը, 1941թ. սեպտեմբերի 27-ին ընդունված «Ննեաբանական պեղումների կարգավորման մասին» օրենքը, 1979 թ. հունվարի 3-ին ընդունված «Արխիվների մասին» օրենքը, 1968թ. դեկտեմբերի 31-ին ընդունված «Ազգային գեղագիտական հարստությունների պահպանությունը խրախուսելու մասին» օրենքը, 1983թ.

հուվարի 7-ին ընդունված «Կոմունաների, դեպարտամենտների, շրջանների և պետության միջև իրավասությունները բաշխելու մասին» օրենքը, «Ապրանքների տեղաշարժման սահմանափակումների և ուտիլիանության, ժանդարմերիայի և մաքսային մարմինների լրացուցիչ պատասխանատվության մասին» 1992թ. դեկտեմբերի 31-ին ընդունված թիվ 92-1477 օրենքը, «Ազգային հարստությունները պաշտպանելու» մասին 2000թ. հուլիսի 10-ին ընդունված թիվ 2000-643 օրենքը, «Ֆրանսիական պարկերասրահներին» մասին 2002թ. հունվարի 4-ին ընդունված թիվ 2002-5 օրենքը, ինչպես նաև ի կարգումն նշված օրենքների՝ ընդունված մի շարք օրենսդրական ակտերը: Ներկայումս այս օրենքներից շարքը համախմբվել են «Ժառանգության մասին» օրենսգրքում, որը կյանքի է կոչվել 2004թ. փետրվարի 20-ին ընդունված թիվ 2004-178 հրամանագրով:¹⁰⁵ Մասնավորապես, այն միավորել է «Ֆրանսիական պարկերասրահներին» մասին 2002թ. հունվարի 4-ին ընդունված թիվ 2002-5 օրենքը, 1979 հունվարի 3-ին ընդունված «Արխիվների մասին» օրենքը, 1913թ. դեկտեմբերի 31-ին ընդունված «Պատմական հուշարձանների մասին» օրենքը, 1941թ. սեպտեմբերի 27-ին ընդունված «Նւեաբանական պեղումների կարգավորման մասին» օրենքը և այլն: «Ժառանգության մասին» օրենսգիրքը բաղկացած է 7 թեմատիկ գլուխներից: Առաջին գլուխը սահմանում է մշակութային ժառանգության վերաբերյալ ընդհանուր բնույթի դրույթներ, երկրորդ գլուխը վերաբերում է արխիվներին, երրորդը՝ գրադարաններին, չորրորդը՝ թանգարաններին, հինգերորդը՝ հնէաբանությանը, վեցերորդը՝ պատմական հուշարձաններին, յոթերորդը՝ փարածքներին վերաբերող դրույթներ: «Ժառանգության մասին» օրենսգիրքը ներկայումս այն հիմնական օրենսդրական ակտն է, որով Ֆրանսիայում սահմանվում է պատմամշակութային ժառանգության իրավական վիճակը: Այդ օրենսդրական ակտով կարգա-

¹⁰⁵ Stn Ordonnance n° 2004-178 du 20 février 2004 relative à la partie législative du code du patrimoine:

վորվում են այնպիսի բազմաբնույթ հարցեր, ինչպիսիք են պարամամշակութային ժառանգություն հասկացությունը, պարամամշակութային արժեքների արտահանումը, օտարումը, դրանք քանդելու, վնասելու, ոչնչացնելու համար առաջացող պարասխանարվությունը, պարության կողմից դրանց գնման նախապարվության ինստիտուտը և այլն:

«Ժառանգության մասին» օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն, այդ օրենքի իմաստով ժառանգություն ասելով պետք է հասկանալ մասնավոր և հանրային իրավունքի սուբյեկտներին պարկանող շարժական և անշարժ առարկաների ամբողջություն, որոնք իրենցից պարմական, հնէաբանական, գեղագիտական, գիտական հետաքրքրություն են ներկայացնում:¹⁰⁶ Այս սահմանումից պետք է նկատենք, որ, ինչպես և Իտալիայում, Ֆրանսիայում ևս փրվում է պարմամշակութային ժառանգություն հասկացության շար լայն սահմանում:

«Ժառանգության մասին» օրենսգրքի դրույթների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այն փարբերակում է երկու փեսակի պարմամշակութային արժեքներ: Առաջին կարգախմբում պարմամշակութային արժեքներն են, իսկ երկրորդում՝ ազգային հարսությունները: Ազգային հարսությունները ևս պարմամշակութային արժեքներ են, սակայն դրանք պարության համար ունեն համընդհանրական նշանակություն և արժանանում են հարուկ ուշադրության:

«Ժառանգության մասին» օրենսգրքի L111-1 հոդվածի համաձայն, Ֆրանսիայում ազգային հարսություններ են համարվում հանրային հավաքածուների և Ֆրանսիայի թանգարանների մաս կազմող առարկաները, որպես պարմական հուշարձաններ և արիսիվ համարվող առարկաները, և այն առարկաները, որոնք պարմության, արվեստի և հնէագիտության փեսանկյունից կարևոր նշանակություն ունեն

¹⁰⁶ See article 1 of the Code de Patrimoine, with amendments and modification, (<http://perlpot.net/cod/patrimoine.pdf>):

Ֆրանսիայի ազգային ժառանգության համար: Փաստորեն, Ֆրանսիայում ազգային հարստությունները կարող են պարկանել ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր իրավունքի սուբյեկտներին:

2004թ. «Ժառանգության մասին» օրենսգիրքը մանրամասն կարգավորման է ենթարկում նաև Ֆրանսիայի տարածքից պարամաշակութային արժեքների արտահանման հետ կապված հարցերը: Այս հարցում հայկական պարամաշակութային ժառանգության իրավական վիճակը պետք է համարել ավելի նպաստավոր՝ ի տարբերություն Իտալիայում պարամաշակութային արժեքների մշտական արտահանման հետ կապված գործող կոշտ իրավական կարգավորումների, որոնք ընդհանրապես արգելում են մի խումբ շարժական պարամաշակութային արժեքների ինչպես մշտապես, այնպես էլ ընդհանրապես արտահանումը երկրից: Ֆրանսիայում գործող օրենսդրությունը այս հարցում ավելի ազգայական մոտեցում է դրսևորում, քանի որ այն չի արգելում պարամաշակութային արժեքների ոչ ժամանակավոր, ոչ էլ մշտական արտահանումը: Արտահանման միակ սահմանափակումը վերաբերում է ազգային հարստություն հանդիսացող պարամաշակութային արժեքներին: Վերջիններս չեն կարող արտահանվել Ֆրանսիայից ոչ մշտական, ոչ էլ ժամանակավոր հիմունքներով: Այլ պարամաշակութային արժեքների ժամանակավոր կամ մշտական արտահանման համար Ֆրանսիայում գործող միակ պայմանը պետական իրավասու մարմնից այդ նպատակով համապատասխան վկայագրի ձեռքբերումն է: Այդ վկայագրերը փրվում են Մշակույթի և հաղորդակցության նախարարության կողմից, որը հանդիսանում է պարամաշակութային քաղաքականության ոլորտում հիմնական պատասխանատու մարմինը: Վկայագրերը վկայում են այն մասին, որ դրանցում նշված պարամաշակութային արժեքները չեն հանդիսանում ազգային հարստություն և կարող են ազատորեն ու մշտապես լքել երկիրը:

Այն պարամաշակութային արժեքների վկայագրերը, որոնց վաղե-

մուտքունը չի գերազանցում 100 փարին, փրվում են 20 փարի ժամկետով՝ թարմացման հնարավորությամբ: Վկայագրերի ձեռքբերում չի պահանջվում այն պարամամշակութային արժեքների դեպքում, որոնք հանդիսանում են նախկինում Ֆրանսիա ժամանակավոր ներմուծված պարամամշակութային արժեքներ: Վկայագրերի ներկայացում չի պահանջվում նաև այն պարամամշակութային արժեքների դեպքում, որոնք արտահանվում են վերականգնման, փորձագիտական գնահատման կամ ցուցահանդեսներին ներկայացնելու նպատակով: Նշված նպատակներով, ինչպես նաև հանրային հավաքածուի մեջ պահելու նպատակով թույլատրվում է նաև ազգային հարստություն հանդիսացող պարամամշակութային արժեքների արտահանումը: Վերջիններս արտահանվում են արտահանման նպատակին համաչափ ժամկետով: Արտահանման ժամկետը լրանալուց հետո, ազգային հարստությունները արտահանող սուբյեկտը կամ սուբյեկտները պարտավոր են դրանք ներկայացնել պետության կողմից նշանակված հարուկ գործակալներին:

Արտահանման վկայագրի փրման դիմումը կարող է մերժվել միայն այն դեպքում, երբ արտահանումը վերաբերում է ազգային հարստություններին: Մերժման դեպքում այն կրկին անգամ կարող է ներկայացվել միայն դիմումը մերժելուց 30 ամիս հետո:¹⁰⁷ Ընդ որում, այդ ժամանակահատվածում պետությունը իրավունք ունի, հանրային հավաքածուների համալրման շահերից ելնելով, հարուցմամբ ձեռք բերել այդ պարամամշակութային արժեքը: Նման ցանկության առկայության դեպքում պետությունը պարամամշակութային արժեքի սեփականատիրոջը գնային առաջարկ է ներկայացնում այն ձեռք բերելու վերաբերյալ՝ հաշվի առնելով միջազգային ասպարեզում ձևավորված շուկայական արժեքները: Եթե պարամամշակութային արժեքի սեփականատերը երեք ամսվա ընթացքում չի համաձայն-

¹⁰⁷ *St'n*u articles L111-4, L111-6 of the Code de Patrimoine, with amendments and modification, page 4, (<http://perlpot.net/cod/patrimoine.pdf>):

վում առաջարկված գնին, ապա պատմամշակութային արժեքի գնի որոշման իրավունքը տրվում է փորձագետներին: Պետությունը իր հերթին, իսկ պատմամշակութային արժեքի սեփականատերն էլ իր հերթին սեփական միջոցներով նշանակում են մեկական փորձագետ: Փորձագետները երեք ամսվա ընթացքում համարել էզրակացություն են տալիս պատմամշակութային արժեքի գնի վերաբերյալ: Փորձագետների կարծիքների միջև տարբերությունների առկայության դեպքում պատմամշակութային արժեքի գինը որոշվում է պետության և պատմամշակութային արժեքի սեփականատիրոջ կողմից համարել նշանակված փորձագետի կողմից: Այդ փորձագետը իր եզրակացությունը տալիս է երեք ամսվա ընթացքում: Փորձագետի կողմից եզրակացությունը ներկայացնելուց հետո, երեք ամսվա ընթացքում պետությունը, հաշվի առնելով փորձագիտական եզրակացությունը, գնային առաջարկ է ներկայացնում պատմամշակութային արժեքի սեփականատիրոջը: Նման եզրակացությամբ երեք ամսվա ընթացքում հանդես չգալու դեպքում պետությունը այլևս չի կարող մերժել խնդրո առարկա պատմամշակութային արժեքի վերաբերյալ արքահանանան վկայագրի քրամադրումը: Եթե պատմամշակութային արժեքի սեփականատերը երկու ամսվա ընթացքում չի ընդունում կամ չի հայտնում պետությանը նրա գնային առաջարկը ընդունելու մասին, ապա վկայագրի մերժման ժամկետը թարմացվում է, և պատմամշակութային արժեքը պետության կողմից հատուցմամբ ձեռք բերելու ընթացակարգը կարող է կիրառվել կրկին, իսկ եթե վերը նշված ժամկետում ընդունում է գնային առաջարկը, ապա պետությունը պարտավոր է համաձայնություն կայացնելուց հետո, 6 ամսվա ընթացքում պատմամշակութային արժեքի սեփականատիրոջը վճարել առաջարկված գումարը:¹⁰⁸

Պետության կողմից մասնավոր իրավունքի սուբյեկտին պատկա-

¹⁰⁸ Տե՛ս articles L111-4, L111-6 of the Code de Patrimoine, with amendments and modification, page 4, (<http://perlpot.net/cod/patrimoine.pdf>):

նող ազգային հարստություն հանդիսացող պարմամշակութային արժեքը ձեռք բերելու վերը բերված օրենսդրական կարգավորումը պետք է բավականին խիստ համարել, քանի որ այն պարմամշակութային արժեքի սեփականատիրոջը, թույլ չտալով թեկուզև ժամանակավոր արտահանել ազգային հարստություն համարվող պարմամշակութային արժեքը, ընտրության հնարավորություն չի թողնում՝ ստիպելով վաճառել այն պետությանը: Օրենսդրական կարգավորումը խիստ է նաև այն պարզ պարճառով, որ չի նախատեսում ազգային հարստություն համարվող պարմամշակութային արժեքը, հանրային հավաքածուների համալրման շահերից ելնելով, պետության կողմից վերցնելու որոշման դատարանական վերանայման հնարավորություն, ոչ էլ նախատեսում է գնի փոխհատուցման դատարանական վիճարկման հնարավորություն:

Բացի այդ, պարմամշակութային արժեքի սեփականատիրոջ համար ոչ միշտ է, որ դրամական փոխհատուցումը կարող է ունենալ այն նույն նշանակությունը, ինչ որ պարմամշակութային արժեքը: Պարմամշակութային արժեքների ոլորտում մասնավոր իրավունքի սուբյեկտների իրավական վիճակը այս առումով պետք է համարել խոցելի: Մա վերաբերում է նաև հայկական պարմամշակութային ժառանգության սեփականատեր հանդիսացող մասնավոր իրավունքի սուբյեկտներին:

Ֆրանսիայի օրենսդրությամբ խիստ կանոններ են սահմանված պարմամշակութային արժեքների արտահանման կանոնները խախտելու հետ կապված: Մասնավորապես, «Ժառանգության մասին» օրենսգրքի L114-1 հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք, ով արտահանում կամ փորձում է մշտապես արտահանել սույն օրենսգրքի L111-1 հոդվածով սահմանված պարմամշակութային արժեքները, ժամանակավորապես արտահանել սույն օրենսգրքի L111-1 հոդվածով սահմանված պարմամշակութային արժեքները առանց նույն օրենսգրքի L111-7 հոդվածով սահմանված թույլտվությունը ստա-

նալու կամ սահմանված կանոնները պահպանելու, մշտապես արտահանել սույն օրենսգրքի L111-2 հոդվածով սահմանված պարամամշակութային արժեքները՝ առանց այդ հոդվածով նախատեսված վկայագիրը ձեռք բերելու, ժամանակավորապես արտահանել սույն օրենսգրքի L111-2 հոդվածով սահմանված պարամամշակութային արժեքները՝ առանց այդ հոդվածով նախատեսված վկայագիրը կամ դուրս հանման ժամանակավոր թույլտվությունը ձեռք բերելու, ենթակա է պարասխանարվության՝ ազաբազրկման երկու տարի ժամկետով կամ՝ տուգանքի՝ 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) եվրոյի չափով:

Ինչպես տեսնում ենք, պարամամշակութային արժեքները արտահանելու հետ կապված կանոնները խախտելու համար առաջացող ֆինանսական պարասխանարվությունը Ֆրանսիայում ավելի խիստ է, քան Իտալիայում, որտեղ այդ կանոնները խախտելու համար առաջացող պարասխանարվությունը կարող է տարանվել 258-ից (երկու հարյուր հիսունութից) մինչև 5.165.00 (հինգ հազար հարյուր վաթսուհինգ) եվրոյի սահմաններում: Մինևս ժամանակ պետք է նկատենք, որ արտահանման կանոնները խախտելու համար ազաբազրկման ձևով Ֆրանսիայում նախատեսվող պարժի առավելագույն չափը ավելի փոքր է, քան Իտալիայում, որտեղ այն կարող է հասնել մինչև 4 (չորս) տարվա:

Ֆրանսիայում պարամամշակութային արժեքների հետ կապված ապօրինի գործողություններ կատարելու համար առաջացող պարասխանարվությունը չի սահմանափակվում միայն դրանց արտահանման կանոնները խախտելու համար առաջացող պարասխանարվությամբ: Ֆրանսիայում խիստ պարասխանարվություն է սահմանված նաև պարամամշակութային արժեքները քանդելու, ոչնչացնելու կամ վնասելու համար: Նշված գործողություններից որևէ մեկը կատարելու դեպքում առաջացող պարասխանարվությունը կարող է կրել ինչպես ֆիզիկական, այնպես էլ ֆինանսական բնույթ:

Առաջացող հնարավոր պարասխանաբնույթները ամրագրված է Ֆրանսիայի քրեական օրենսգրքում: Մասնավորապես, այդ օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պարամամշակութային արժեքները քանդելու, ոչնչացնելու կամ վնասելու դեպքում անձը ենթակա է պարասխանաբնույթյան երկու տարի ժամկետով ազատազրկման կամ 30 000 (երեսուն հազար) եվրոյի չափով փուզանքի, եթե առաջացրած վնասը թեթև բնույթ է կրում: Եթե առաջացրած վնասը ծանր բնույթ է կրում, ապա անձը կարող է ենթարկվել պարասխանաբնույթյան երեք տարի ժամկետով ազատազրկման կամ 40 000 (քառասուն հազար) եվրոյի չափով փուզանքի:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ պետք է արձանագրենք, որ Ֆրանսիական պետությունը խիստ օրենսդրական կանոնների սահմանման միջոցով ամրագրում է այդ արժեքներն իրեն: Այդ փոխկապակցումը արտահայտվում է այդ արժեքները պետության կողմից գնման նախապատվության իրավունքի առկայության, դրանք արտահանելու հետ կապված հարցերում կոշտ օրենսդրական կարգավորումներ սահմանելում: Չնայած այն հանգամանքին, որ Ֆրանսիայի օրենսդրությամբ թույլատրվում է պարամամշակութային արժեքների ինչպես ժամանակավոր, այնպես էլ մշտական արտահանումը, այնուամենայնիվ, պետությունը պահպանում է այդ արժեքները՝ ազգային հարստություն համարելու հիմնավորմամբ և կարող է բացառել դրանց արտաքին շրջանառությունը:

Միևնույն ժամանակ պետք է նկատենք, որ Ֆրանսիայում պարամամշակութային արժեքների պաշտպանության ու պահպանության համար նպաստավոր են այդ արժեքները ապօրինի արտահանելու, քանդելու, ոչնչացնելու կամ վնասելու համար սահմանված խիստ պարասխանաբնույթյան միջոցները:

2.3. Նայկական պարամաճակության ժառանգության իրավական կարգավիճակը Կիպրոսում

Կիպրոսը աշխարհում ամենահին մշակույթ և պարմություն ունեցող պետություններից մեկն է, որտեղ քաղաքակրթության զոյության մասին վկայող հնագիտական առաջին գրածոները պարկանում են Ք.ա. 7-րդ հազարամյակին: Լինելով երեք աշխարհամասերի (Եվրոպա, Ասիա, Աֆրիկա) խաչմերուկում՝ Կիպրոսի բնակչությունը կարողացել է կերտել և պահպանել իր սեփական մշակության ձեռագիրը, որը նման է հունական մշակույթին՝ համեմված հելլենիստական, հռոմեական, բյուզանդական, հայկական, ֆրանսիական, վենետիկյան, օսմանյան և բրիտանական մշակույթների ազդեցությամբ:

Մշակության հարուստ լանդշաֆտ ունեցող այս պետության փարածքում պահպանվել է հազարավոր փարիների ընթացքում կղզում գործունեություն ծավալած փարեր ազգերի մշակության ժառանգությունը: Ի թիվս այլ պետություններում կուրակած պարամաճակության հուշարձանների՝ հայ մշակության գործունեության ժառանգություն է պահպանվել նաև Կիպրոսում: Այսօր այդ պետությունում գրվող հայկական պարամաճակության արժեքներ են հանդիսանում Նիկոսիայի Ս. Ասրվաձաձին եկեղեցի - Առաջնորդանիսարը (1116թ.), Նիկոսիայի սուրբ Պողոս մարտիր (1892թ.), Սուրբ Մակարի վանքը (560թ.), Լևկոսիա քաղաքի Սուրբ Մարիամ Ասրվաձաձին եկեղեցին (1509թ.), Մելքոնյան կրթական հաստատության շենքը:

Պարամաճակության քաղաքականությունը Կիպրոսում հանդիսանում է առաջնային ուղղություն, ինչի մասին է վկայում այն համագամանքը, որ դեռևս 1935թ.-ից սկսած, մշակության ժառանգության պահպանման և կառավարման համար Կիպրոսում սրելով է հարույկ մարմին՝ կառավարության Ննեագիտական արժեքների վարչությունը, և ձևավորվել է համապարասխան օրենսդրություն:

Պատմամշակութային արժեքների պահպանության համար օրենսդրական դաշտը Կիպրոսի Նանրապետությունում կարգավորվում է 1935թ. ընդունված և բազմաթիվ անգամ փոփոխությունների և լրացումների ենթարկված «Նություններին մասին» օրենքով:¹⁰⁹ Վերոնշյալ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պատմամշակութային արժեք է համարվում անշարժ և շարժական այն գույքը, որը հանդիսանում է մարդկային սփռվածագործության արդյունք (ճարտարապետական աշխատանք, քանդակ, կտավ, արվեստի ցանկացած գործ և այլն), պատրաստվել կամ ստեղծվել է Կիպրոսում, պեղումների արդյունքում հայտնաբերվել է Կիպրոսում կամ հայտնաբերվել է Կիպրոսի ջրային փարածքում և պատկանում է 1850թ.-ին նախորդող ժամանակաշրջանին:¹¹⁰ Սակայն նույն օրենքում առանձնացվում են հոգևոր և ժողովրդական արվեստի գործերը, և, հաշվի առնելով դրանց հնագիտական, գեղարվեստական և պատմական մեծ արժեքը, դրանց համար 1850թ.-ի փոխարեն որպես ելակետային փարեթիվ համարվում է 1940թ.-ը:¹¹¹

Ըստ «Նություններին մասին» օրենքի՝ ցանկացած պատմամշակութային արժեք, որի գոյությունը անհայտ է մինչ այս օրենքի գործողության մեջ մտնելը, հանդիսանում է Կիպրոսի կառավարության սեփականությունը: Նույն օրենքի համաձայն, ցանկացած ոք, ով հանկարծակի իրեն կամ այլ անձի կամ կառավարությանը սփականության իրավունքով պատկանող հողում, առանց պեղումներ իրականացնելու հարուկ թույլտվության, գտնում է պատմամշակութային արժեք, պեղք է դրա մասին անմիջապես տեղեկացնի մտրակա գյուղապետարանին կամ ոստիկանական հաստատու-

¹⁰⁹ Տե՛ս Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

¹¹⁰ Տե՛ս article 2 of Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

¹¹¹ Տե՛ս հղում 66:

թյանը և բավարար չափով նկարագրի այն վայրը, որտեղ գտել է այդ պարմամշակութային արժեքը:¹¹²

«Նություններին մասին» օրենքը որպես պահպանության ենթակա ինքնուրույն պարմամշակութային արժեք առանձնացնում է հուշարձանները: Այս օրենքի համաձայն՝ պարմական հուշարձանները բաժանվում են «A» և «B» դասերի: Այն հուշարձանները, որոնք պարկանում են առաջին դասին, ընդգրկված են «A» կարալոգում և հանդիսանում են Կիպրոսի կառավարության սեփականությունը, և, հերևաբար, փնտրվում են Նեադալիտիկան արժեքների վարչության կողմից: «B» կարալոգում ընդգրկված հուշարձանները հանդիսանում են մասնավոր սեփականություն: Այն հուշարձանները, որոնք գտնվում են Թուրքիայի կողմից գրավված տարածքներում, Նեադալիտիկան արժեքների վարչության կողմից փաստացի վերահսկելի չեն: Այսպես, «A» կարալոգում ընդգրկված 197 պարմական հուշարձաններից 76-ը գտնվում են գրավյալ տարածքներում, իսկ «B» կարալոգում հաշվառված 974 հուշարձաններից թուրքական վերահսկողության ներքո են գտնվում 130-ը: Ներկաբար, 206 պարմամշակութային հուշարձան այսօր գտնվում է Թուրքիայի կողմից օկուպացված տարածքում, և այդ հուշարձանների մեծ մասը կամ ունի անհայտ ճակատագիր, կամ էլ թալանվել, պղծվել և ավիրվել է:

1974թ.-ի թուրքական ներխուժման հերևանքով մեծ վնաս է հասցվել ինչպես Կիպրոսի, այնպես էլ այնտեղ գտնվող հայկական պարմամշակութային ժառանգությանը: Մասնավորապես, այդ ժամանակաշրջանում Կիպրոսի գրավյալ շրջաններում գոյություն ունեին ավելի քան 520 հայկական եկեղեցիներ: Այսօր փրկվածություն են հասնում այդ եկեղեցիներից միայն 244-ի մասին, որից 100-ը թալանվել կամ պղծվել են, 68-ը վերածվել են սգկիթների, 14-ը օգտագործվում են թուրքական զինվորականության կողմից, իսկ

¹¹² Տե՛ս articles 3 and 4 of Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/A11/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/A11/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

11-ն էլ ծառայում են որպես ախոռ և գոմ: Դժբախտաբար, հայկական մշակութային ժառանգություն հանդիսացող և Կիպրոսի օրենսդրության համաձայն մշակութային արժեք համարվող 560թ. Մուրբ Մակար վանքը այն եկեղեցիների շարքում է, որոնք օգտագործվում են այլ նպատակով: Նույնիսկ Վարիկանի սուր քննադատությունը վանքը պղծողների հասցեին, չկարողացավ խանգարել վանքը զվարճանքի կենտրոն վերափոխելուն:

Հարկ է նշել նաև այն, որ մի շարք եկեղեցիներ պարզապես հողին են հավասարեցվել: Իսկ եկեղեցիներում ժամանակին պահվող արժեքավոր իրերի բնագավառում կրած կորուստները հասնում են անասելի ծավալների:

Նուշարձանը Կիպրոսում պարմամշակութային արժեք ճանաչվում է Նախարարների խորհրդի կողմից՝ Ննէագիպական արժեքների վարչության ղեկավարի առաջարկությամբ: Այդ խորհուրդը, հիմք ընդունելով առարկայի, շինության կամ փվյալ հողամասի պարմական, ճարտարապետական, հնավանդ, գեղարվեստական և/կամ հնագիպական կարևորությունը, ինչպես նաև փվյալ առարկայի նկատմամբ հանրային հետաքրքրությունը, կարող է ճանաչել այն պարմական հուշարձան և ընդգրկել «A» կամ «B» դասի մեջ: Այդ խորհուրդը իրավասու է նաև հանել հուշարձանը «A» կամ «B» կատարյալից և վերընդգրկել, համապարասխանաբար, մյուս կատարյալում:

Ինչպես արդեն նշեցինք, «B» դասում ընդգրկված հուշարձանները հանդիսանում են մասնավոր սեփականություն: Սակայն, սեփականատերերը իրավունք չունի իր հայեցողությամբ վերանորոգել, վերականգնել, փոխափոխել կամ այլ փոփոխության ենթարկել հուշարձանը՝ առանց գրավոր հատուկ թույլտվության: Պահպանության են ենթակա նաև հուշարձանը շրջապատող տարածքը և բուսականությունը: Ննէագիպական արժեքների վարչության ղեկավարը, նախարարների խորհրդի համաձայնությամբ, կարող է հուշարձանի սեփական-

նապիտոքը փրամադրել համապատասխան միջոցներ՝ հուշարձանի պահպանության և վերականգնման համար:

Անհրաժեշտ է նշել, որ եթե հուշարձանի սեփականատերը խախտում է վերոհիշյալ պայմաններից որևէ մեկը, ապա նա հանդիսանում է մեղավոր և ենթակա է փուզանքի, իսկ նրա հոգաժողության ներքո գտնվող հուշարձանը կարող է առգրավվել և, համապատասխանաբար, ընդգրկվել կառավարությանը պատկանող հուշարձանների դասում:

Այն դեպքերում, երբ անձի սեփականությունը իրավասու մարմնի կողմից ճանաչվում է պատմական հուշարձան, կամ այդպիսին ճանաչված հուշարձանը առգրավվում և «B» դասից վերընդգրկվում է «A» դասում, ապա փվյալ ժամանակահատվածում գործող օրենքի սահմաններում սեփականապիտոքը փրամադրվում է փոխհատուցում: Փոխհատուցման չափը սահմանվում է ըստ հուշարձանի պատմական, ճարտարապետական, հնավանդ, գեղարվեստական և/կամ հնագիտական արժեքի, եթե սեփականատերը չի ապացուցում, որ ինքը ավելի բարձր գին է վճարել փվյալ հուշարձանի ձեռքբերման համար:

Մեկ փարվա ազատագրվում կամ գումարային փուզանք է սահմանված այն անձի համար, ով մեղավոր է հուշարձանը կամ այլ պատմամշակութային արժեքները ոչնչացնելու, փչացնելու կամ եղծանելու, ինչպես նաև դրանց վրա գրելու, նկարելու կամ փորագրելու համար: Ազատագրվում կամ գումարային փուզանքներ են նախատեսվում նաև «A» դասում ընդգրկված հուշարձանները կեղտոտող կենդանիների փերերի համար, այդ հուշարձանների շրջակայքը կեղտոտելու և ցանկացած այլ անհարգալից վերաբերմունք դրսևորողների նկատմամբ:

Նամաձայն հուշարձանների պահպանության մասին օրենքի, պահպանության է ենթակա նույնիսկ հուշարձանի շրջակայքը: Սա նշանակում է, որ արգելվում է հուշարձաններին կից և մոտակա շինու-

թյունների կառուցումը, գովազդային ցուցանակների տեղադրումը և, անգամ՝ ծառայությունը, որը կարող է փչացնել հուշարձանի տեսքը:

Ուորթը կարգավորող օրենքում հարուկ ուշադրություն է դարձվում պարամաշակութային հուշարձանների պահպանության համար իրականացվող գործողությունները հարկերից ազատելու դրույթներին: Այսպես, «B» կարավորում ընդգրկված հուշարձանների սեփականատերերը հուշարձանի պահպանության համար կարարած ծախսերի մասով ազատվում են եկամտահարկ վճարելուց:¹¹³ Սա նշանակում է, որ սեփականատիրոջ եկամտի այն մասը, որը ծախսվել է հուշարձանի պահպանության նպատակով, չի հարկվում: Նարկման ենթակա չէ հուշարձանից սրացվող եկամուտը, եթե սեփականատերը, Ննեագիտական արժեքների վարչության ղեկավարի հավաստմամբ, հոգում է հուշարձանի պահպանության խնդիրները,¹¹⁴ ինչպես նաև գույքահարկ չի գանձվում անշարժ գույք հանդիսացող պարամաշակութային հուշարձանների սեփականատերերից:¹¹⁵

Եթե սեփականատերը որոշել է վաճառել հուշարձանը, ապա Ննեագիտական արժեքների վարչության ղեկավարն ունի հուշարձանի ձեռքբերման առաջնային իրավունք: Ցանկացած մասնավոր հավաքածուի սեփականատեր, որևէ գործարք կնքելուց առաջ պարտավոր է տեղեկացնել Ննեագիտական արժեքների վարչության ղեկավարին, իսկ եթե վերջինս գտնում է, որ հավաքածուն ունի պարամական և/կամ հնագիտական կարևոր արժեք, ապա վաճառքն ընդհանրապես արգելվում է:¹¹⁶ Կիսրոսում հնություններ ձեռք բերելու իրավունք ունեն.

¹¹³ Տե՛ս article 23C of Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

¹¹⁴ Տե՛ս article 23D of Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

¹¹⁵ Տե՛ս article 23F of Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

¹¹⁶ Տե՛ս article 26 of Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

ա) Կիպրոսի թանգարանը, բ) հուշարձան ունենալու իրավունք ունեցող անձը (իրավունքը պրամադրվում է Ննեագիտական արժեքների վարչության ղեկավարի կողմից), գ) հնությունը օրենքով սահմանված կարգով ձեռք բերած անձը:¹¹⁷

Կիպրոսից պարմամշակութային արժեքի արտահանման համար անհրաժեշտ է ունենալ Ննեագիտական արժեքների վարչության ղեկավարի, Ննեագիտական թանգարանների հովանավորի և Հուշարձանների հովանավորի մասնակցությամբ ձևավորված կոմիտեի համապարասխան արտոնագիրը: Նման արտոնագիր պրամադրվում է ժամանակավոր ցուցահանդեսի համար արտահանվող հուշարձաններին, երկարաժամկետ ցուցահանդեսներին ներկայացվող հուշարձանների արտահանման, ինչպես նաև հուշարձանի ուսումնասիրության և գիտական հետազոտությունների համար, իսկ մասնավոր հավաքածուի արտահանման համար արտոնագիր ընդհանրապես չի պրամադրվում:¹¹⁸ Կիպրոսում պարմամշակութային արժեքների արտահանման կանոնները խախտելու դեպքում կարող է առաջանալ պարասխանավորություն ազատագրված ձևով մինչև 3 (երեք) տարի ժամկետով կամ փուզանք՝ երկու հազար ֆունտի չափով, ինչպես նաև՝ երկու պարիժն էլ միաժամանակ:¹¹⁹

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ պետք է արձանագրենք, որ Կիպրոսում դեռևս 1930-ական թթ.-ից գոյություն ունի պարմամշակութային ժառանգության պահպանության և պաշտպանության նպատակաուղղված քաղաքականություն: Վայկական պարմամշակութային ժառանգությունը, անմասն չնմալով այդ քաղաքականությունից՝ ենթարկվել և շարունակում է ենթարկվել այդ քաղաքականության իրա-

¹¹⁷ Տե՛ս article 26(6) of Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

¹¹⁸ Տե՛ս article 27 of Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

¹¹⁹ Տե՛ս article 27(4) of Law on Antiquities, ([http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/\\$file/law-en-1.pdf](http://www.mcw.gov.cy/mcw/da/da.nsf/All/A2ABFCFE258EFD71C22571A2003A2B9D/$file/law-en-1.pdf)):

կանացման իրավական բովանդակությունն արտահայտող օրենսդրական կարգավորումներին: Չնայած այդ օրենսդրական կարգավորումները ընդունում են պարամաձակությային արժեքների կապակցությամբ մասնավոր սեփականության գոյությունը, այնուամենայնիվ, դրանք խիստ օրենսդրական կանոնների և պետական վերահսկողության սահմանման միջոցով սահմանափակում են պարամաձակությային արժեքի նկատմամբ սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող փրապետման, փնտրիման և օգտագործման իրավագործությունների ամբողջ ծավալով իրականացումը: Որպես սահմանափակումներ նախատեսված են պարամաձակությային արժեքները օտարելիս պետության կողմից այն ձեռք բերելու նախապատվության իրավունքը, դրանց օտարումը պետության կողմից ընդհանրապես արգելելու իրավունքը, դրանց արտահանման հնարավորությունը միայն խիստ որոշակի նպատակներով և պետական իրավասու մարմնի կողմից փրված համապատասխան թույլտվության առկայության դեպքում և այլն:

Մինևույն ժամանակ պետք է նկատենք, որ Կիպրոսում պարամաձակությային ժառանգության պաշտպանությանն են նպաստում պարամաձակությային արժեքները և հուշարձանները ոչնչացնելու, փչացնելու կամ եղծանելու, ինչպես նաև դրանց վրա գրելու, նկարելու, փորագրելու կամ ապօրինի արտահանելու համար սահմանված խիստ պատասխանատվության միջոցները:

2.4. Նայկական պատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը Ավստրիայում

Ավստրիան պարկանում է այն երկրների թվին, որոնց ինքնությունը էականորեն սահմանվում է սեփական մշակույթով: Բազմաբովանդակ իրադարձություններով լի իր պատմության մեջ մշակույթը և մշակութային քաղաքականությունը միշտ էլ կարևոր դեր են խաղացել ավստրիական ժողովրդի ազգային ինքնության ձևավորման գործում: Ավելին, Ավստրիան կանգնած է գերակշռող փոփոխական և լեզվական շրջանի սահմանին, որը իր մշակութային քաղաքականությունը դարձնում է ինքնության քաղաքականություն: «Փոքր երկիր՝ մեծ մշակույթով» կարգախոսը համընդհանուր ձևով ընդունվում է բնակչության և որոշվում՝ ընդունողների կողմից: Ավստրիան պետություն է բազմազան և հարուստ մշակույթով: Այն նաև հայկական պատմամշակութային ժառանգության մի մասի կրողն է: Այնտեղ են գտնվում այնպիսի պատմամշակութային արժեքներ, ինչպիսիք են Վիեննայի Մխիթարյանների միաբանությունը /Վիեննա/՝ իր հարուստ և անկրկնելի ժառանգությամբ և Սուրբ Նովիսիմե հայկական առաքելական եկեղեցին /Վիեննա/: Ներագոյության այս հարվածում կուսումնասիրենք հայկական պաշտամշակութային ժառանգության իրավական վիճակը Ավստրիայում, բայց միանգամից նշենք, որ Ավստրիայում, ինչպես նաև բոլոր եվրոպական երկրներում հայկական պատմամշակութային արժեքների վերաբերյալ հարույկ իրավական ռեժիմ գոյություն չունի, այդ պատճառով դրանց իրավական կարգավիճակի մասին պարկերացում կազմելու համար պետք է ուսումնասիրենք Ավստրիայում գործող պատմամշակութային արժեքների ընդհանուր իրավական ռեժիմը, որը տարածվում է նաև հայկական պատմամշակութային արժեքների վրա:

Ավստրիան իրենից ներկայացնում է այնպիսի խորհրդարանական երկիր, ինչպիսիք Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասն են:

Տիմնական օրենքը Սահմանադրությունն է, որում ամրագրված են պաշտոնական քաղաքական հասարակարգը և պետությունը ղեկավարող մարմինների իրավասությունները: Ներկայումս Ավստրիան դասվում է Եվրոպական միության ամենաբարձր զարգացում ունեցող երկրների շարքին, որն էլ պայմանավորված է հեղափոխական ժամանակահատվածում երկրի քաղաքական և փոփոխական կայուն ընթացքով: Ավստրիան ժողովրդավարական հանրապետություն է՝ դաշնային պետական կառուցվածքով: Դաշնության կազմի մեջ ընդգրկված են 9 փարածքներ՝ Բուրգենլանդը, Կարինտիան, Ստորին Ավստրիան, Վերին Ավստրիան, Ջալցբուրգը, Շտիրիան, Տիրոլը, Ֆորարլբերգը, Վիեննան: Առաջին Ավստրիական Նանրապետությունը հռչակվել է 1919թ. հոկտեմբերին: 1920թ. մշակվել է Դաշնային սահմանադրական օրենքը այն ժամանակների խոշորագույն իրավաբան-փեսաբանի՝ Նանս Կելզենի կողմից, որն ուժի մեջ է մտել հոկտեմբերի 1-ին: Դաշնային սահմանադրական օրենքի համաձայն՝ Ավստրիան հռչակվում էր խորհրդարանական հանրապետություն: 1920թ. Դաշնային սահմանադրական օրենքի հետ մեկտեղ գործում են մի շարք այլ սահմանադրական օրենքներ: Բացի դրանից, սահմանադրական դրույթներն ընդգրկված են շատ այլ սովորական օրենքներում: Սահմանադրական օրենքների դրույթները հեղափոխում ուղղակիորեն ընդգրկվեցին 1920թ. Դաշնային սահմանադրական օրենքի փոփոխում: Սակայն այսօր ևս Ավստրիայի գործող Սահմանադրությունը իրենից ներկայացնում է ոչ թե միասնական ակտ, այլ սովորական օրենքների մեջ ընդգրկված սահմանադրական ակտերի և սահմանադրական դրույթների շարք: Քանի որ Ավստրիան հանդիսանում է դաշնային հանրապետություն, ապա նրա կազմի մեջ մտնող փարածքներն ունեն ինքնուրույնության և փեդական ինքնակառավարման իրավունքի որոշակի չափաբաժին: Սահմանադրությունը բոլոր փարածքների համար սահմանում է ընդհանուր միօրինակ կանոններ, որոնց շրջանակներում դրանք իրա-

վունք ունեն ընդունել սեփական օրենքները: Ավստրիան դասվում է այն երկրների թվին, որոնց անհապականությունը շար դեպքերում որոշվում է մշակույթով: Բացի դրանից, այն կանգնած է գերիշխող փոփոխական և լեզվական ասպարեզի եզրին, որն ազգային ինքնագիտակցման սահմանման մեջ նրա մշակութային քաղաքականությունը դարձնում է կենտրոնական գործոն:¹²⁰

Մշակույթը և գիտությունը ընդհանուր առմամբ հասարակության կյանքի, նրա առաջընթացի, զարգացման ուղղությունների և հեռանկարների կարևոր ցուցանիշ են հանդիսանում: Խոսելով պեպական քաղաքականության մասին՝ անհնար է չդիտարկել միապետի դիրքը պեպական միջամտության, աջակցության և փվյալ բնագավառի կարգավորման հարցերում: Եվրոպական պեպությունները XVII-XVIII դարերում մշակույթի և գիտության բնագավառների որևէ ակտիվ գործողությամբ աչքի չեն ընկել: Ինչպես Եվրոպայի շար երկրներում, Ավստրիայի հասարակական կյանքի այս բնագավառը գործնականորեն եկեղեցու մենաշնորհն էր:

Ավստրիայում հուշարձանների պեպական պահպանությունը սկիզբ է առել XIX հարյուրամյակում՝ կայգերական «Կենտրոնական հանձնաժողովից»: 1923թ. ընդունվեց մինչ օրս գործող N533/1923 Դաշնային ակտը «Մշակութային հուշարձանների պահպանության մասին», որը համալրվեց N 170-1999թ. փոփոխությամբ: Միաժամանակ, պապական հուշարձանների ուսումնասիրման և պահպանման համար սպեղծվեց Կայսերական հանձնաժողովը: Այն կազմված էր մի քանի գիտնականներից և նկարիչներից և ուներ միայն խորհրդարկական գործառույթ:¹²¹

Ակտի 3.1 կետում ազգային մշակութային արժեքները սահմանվում են որպես մարդկային սպեղծագործական գործունեության շար-

¹²⁰ Տե՛ս Johnson, Lonnie (1989), *“Introducing Austria: a short history”*. Riverside, Calif.: Ariadne Press, pages 15-30:

¹²¹ Տե՛ս The history of protection of archival material, (<http://www.iias-trieste-maribor.eu/fileadmin/atti/2007/Schoggl.pdf>), available at 30.09.2010:

ժական կամ անշարժ գույք, որոնք պատմական, գեղարվեստական կամ այլ մշակութային արժեք են ներկայացնում և պետք է պահպանվեն՝ ելնելով հասարակական /ազգային/ շահերից: Տվյալ ակտով սահմանված էր նաև, որ հուշարձանների պահպանությունը մասամբ գրնվում է պետության պարասխանարվության փակ: Արգելվում է նաև մշակութային, պատմական, գեղարվեստական արժեքների արտահանումը և վաճառքը, բացառությամբ այն դեպքերի, երբ սրեղծողը դեռ կենդանի է կամ մահացել է վերջին 20 փարվա ընթացքում: Մշակութային արժեքի արտահանման համար անհրաժեշտ է նաև հարուկ թույլություն, եթե անգամ այն արտահանվում է ժամանակավորապես, և այդ թույլությունը փրամադրում է պետության համապարասխան գերատեսչությունը: Ավստրիական օրենսդրությունը սահմանում է նաև, որ մշակութային հուշարձանի ձևափոխումը, վնասումը կամ արտահանումը արգելված է առանց դաշնային գրասենյակի թույլության: Այս դրույթը փարածվում է նաև մասնավոր սեփականության հուշարձանների վրա: Այդ հուշարձանների սեփականատերերը չեն կարող վերականգնել կամ պահպանման աշխատանքներ իրականացնել իրենց միջոցներով, այդ ամենի մասին հոգում է համապարասխան գեչարեսչությունը: Պետությունը փարեկան մոք 13մլն. եվրո է հարկացնում համապարասխան աշխատանքներ իրականացնելու համար: Նամաձայն Ավստրիայի քրեական օրենսդրության, պատմամշակութային հուշարձանների կանխամրածված արտահանումը համարվում է քրեական հանցանք, և որպես պարժամիջոց կիրառվում է փուգանք:

Ավստրիայում հուշարձանների պաշտպանությունը դաշնային փարածքի պարտականությունն է դառնում այն ժամանակ, երբ շինարարության կարգավորումը /հողակտորների փրամադրումը, կառուցապատման, պահպանական գոքիները և այլն/ գրնվում է փրեղական ինքնակառավարման և փարածքների իրավասության շրջանում: Ներկայումս պահպանության փակ վերցնելու, վերականգնման և

Ֆինանսավորման հարցերը որոշող կենտրոնական հաստատությունը Նուշարձանների պահպանության դաշնային գրասենյակն է:

Ըստ հեղափոխությունների և հարթակների, մի շարք միավորումներ հոգում են օրենքի պահպանման և ճարտարապետական մշակութային հուշարձանների պահպանության համար: Դրանք են՝

- Նուշարձանների պահպանության գծով ինտերնետային հարթակների ցանցը,
- Մշակութային հուշարձանների պահպանության գծով ավստրիական բաժանմունքը,
- Մշակութային ժառանգության պահպանման ավստրիական ընկերությունը,
- Ավստրիայի վերականգնիչների (ռեստավրատորների) միությունը:¹²²

Միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդհանուր քաղաքականացման և ռադիկալիզացիայի (արմատակալացման) հետ մեկտեղ սկսեց փոխվել մշակույթի հանդեպ վերաբերմունքը: Մշակույթի շար ներկայացուցիչներ և գործիչներ լքեցին Ավստրիան, և հերպատերազմական ավստրիական մշակույթը առաջին հերթին կողմնորոշված էր հեղինակության գաղափարին: Այն ուղղված էր դաշնային թարրոնների և փառապոռնների աջակցմանը և գործնականապես անպետում էր արվեստի, գրականության և երաժշտական սրեղծագործությունները: Եվ միայն 1970-ական թթ. սկիզբ դրվեց մշակութային քաղաքականությանը: Մշակութային քաղաքականությունը այդ ժամանակ դիրարկվում էր որպես սոցիալական քաղաքականության բաղկացուցիչ մաս: 1975թ. կրթության և մշակույթի Դաշնային նախարարության կողմից հաստատվեց մշակութային քաղաքականության միջոցների փաթեթը: Դրա հիմնական նպատակն էր հասարակական կրթության և մշակույթի մակարդակի

¹²² St'iu Historical perspective: cultural policies and instruments,(www.culturalpolicies.net), available at 30.10.2010:

բարձրացումը, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակչության միջև զարգացման ճեղքվածքի կրճատումը: Նախարարության հովանու ներքո և նրա անմիջական վերահսկողությամբ սպեղծվեցին հարուկ «մշակութային ծառայություններ» /OKS/, ինչն էլ նշանավորվեց մշակութային քաղաքականության մեջ շրջադարձով, և սկիզբ դրվեց իշխանության և մշակույթի միջև երկխոսությանը:¹²³

Ավստրիան իրենից ներկայացնում է դասական եվրոպական երկրի մոդելի օրինակ, որը ենթադրում է մշակույթի վրա պետության որոշակի ազդեցություն: Աշխարհի րնպեսապես ամենակայուն երկրներից մեկի կառավարությունը մշակույթը և մշակութային ժառանգությունը դիտարկում է որպես րնպեսության և զարգացման կարևոր ռեսուրս, և աջակցությունը մշակույթին ավանդապես բարձր է մնում, չնայած վերջին քաղաքական փոփոխություններին: Ավստրիայում մշակույթի բնագավառում գերակշռող իրավական նորմերը հանրագումարի բերելու փորձին խոչընդոտում են 2 գործոն.

- Ավստրիան հանդիսանում է դաշնային պետություն՝ հարաբերականորեն անկախ դաշնային հողերով, որն իր արտացոլումն է գտնում մշակույթի հարցերով պարտականությունների բաշխման մեջ:
- Ավստրիական Դաշնային Սահմանադրության մեջ ուղղակիորեն չի հիշարակվում արվեստի կամ մշակույթի մասին, և դաշնային մակարդակով մշակութային օրենսդրություն գոյություն չունի:

Օրինակ՝ մշակույթի ոլորտի քաղաքականության պարտականությունների մասին դրույթները ընդգրկված են Ավստրիայի Դաշնային Սահմանադրության 15 հոդվածում: Ընդհանուր դրույթներում նախատեսված է, որ մշակույթի հետ կապված բոլոր հարցերը, ոչ առանձնահատուկ բացառված, գտնվում են գավառների իրավասության րակ: Բացառություն է կազմում հուշարձանների, դաշնային թատր-

¹²³ Stü Cultural Policy Database, (<http://www.culturelink.org/culpol/at.html>), available at 30.10.2010:

րոնների և թանգարանների պահպանությունը: Սահմանադրության հոդված 10-ը ասում է, որ «Դաշնության ղեկավարմանը վերաբերում են օրենսդրությունը և կարարողական գործունեությունը հեղինակ հարցերով. Դաշնային թափրոններին վերաբերող հարցերը՝ բացառությամբ դրանց շինարարության հարցերը, հուշարձանների պահպանությունը, պաշտամունքների երկրպագմանը վերաբերող հարցերը, մարդահամարները, ներդրումները և հիմնադրամները: Նրանց նպատակները դուրս չեն գալիս առանձին երկրի շահերի սահմաններից և եթե նախկինում դրանք չեն գտնվել երկրների ինքնավար կառավարման փակ»:¹²⁴

Ընդհանուր առմամբ Ավստրիայի մշակութային քաղաքականությունը կարելի է բնորոշել որպես պետությունից կախված համակարգ: Չնայած այսպիսի համակարգը թվում է խիստ, այնուամենայնիվ, դրա վրա ազդեցություն է թողել Կարաձառքսանային և Կրեդական իշխանությունների միջև մրցակցությունը: Նույնը մշակույթի հարվածին կարելի է գտնել հեղինակ նորմատիվա-իրավական ակտերում՝ Դաշնային Սահմանադրական Ակտում, Քաղաքացիական իրավունքների մասին հիմնական օրենքում, /1867թ/, Դաշնային թանգարանների մասին օրենքում/1998թ/, որպետ թանգարանները դիտարկվում են որպես հանրային իրավունքի գիտական հիմնարկություններ և գտնվում են կրթության, մշակույթի և արվեստի Դաշնային նախարարության իրավասության փակ: Արվեստի խրախուսման Դաշնային օրենքում, Արվեստի զարգացման օրենքում /1988թ/, որն ընդգրկում է դրույթներ՝ դաշնային բյուջեում արվեստի խրախուսման և նկարիչների սոցիալական վիճակի բարելավման համար անհրաժեշտ միջոցներ ներառելու մասին: Պաշտպանության մասին ավստրիական օրենքի հատուկ հրահանգում /Austrian Protection Law/ ասվում է, որ պետության, երկրի

¹²⁴ St'iu Austria Constitution, (http://www.servat.unibe.ch/icl/au00000_.html), available at 01.10.2010:

կամ պաշտոնական կրոնական միությունների փիրապետման փակ գրնվող շինությունները պահպանվում են որպես /ex lege/¹²⁵

Դաշնային Սահմանադրության Ակտի 15-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը նշում է, որ այն հարցերով, որոնք ներառված չեն ազգային կառավարության շրջանակներում, պետք է զբաղվեն Բունդեսլենդերները, ներառյալ մշակութային հարցերը: Ինչևէ, 10-րդ հոդվածում նշվում է, որ պարասխանարվությունը «սուվերեն» հարցերի նկատմամբ, ինչպիսիք են գիտական և տեխնիկական արխիվները և գրադարանները, արտիստական և գիտական խմբերը և դաշնային ծառայությունները (դաշնային թանգարաններ, Ազգային գրադարանը), դաշնային թափրոնները, պարմական հուշարձանները, կրոնական հիմնարկությունները, դրանց ֆոնդերը սահմանվում են ազգային կառավարության կողմից: Բունդեսլենդերը պարասխանարտ է քաղաքների և գյուղերի համար, նրանց սեփականություն հանդիսացող հիմնարկների և ֆոնդերի, կինոթատրոնների, թատրոնների, իրադարձությունների, ժառանգության, ավանդույթների և Ֆոլկ արվեստի համար: Համաձայն Դաշնային Սահմանադրական Ակտի 17-րդ հոդվածի, ազգային կառավարությունը և Բունդեսլենդերը, որպես քաղաքացիական օրենքի կողմնակից, կապված չեն իրար վերը նշված պարտականությունների բաշխման հարցում:¹²⁶

Դաշնային արվեստի խթանման Ակտը, որը ընդունվել է 1988թ.-ին (բարելավվել է 1997 և 2000), ներառում է դրույթ այն մասին, որ Դաշնային բյուջեն պետք է ներառի բոլոր անհրաժեշտ ֆոնդերը հանրային արվեստի խթանման և արվեստագետների սոցիալական դրության բարելավման համար, նաև պետք է բարելավվի մասնավոր հովանավորման շրջանակը: Օրենքը նշում է, որ խթանումը պետք է գլխավորապես ուղղված լինի «ժամանակակից արվեստին, նրա

¹²⁵ Ռևու Austria, (<http://www.culturalpolicies.net/web/austria.php>), available at 01.10.2010:

¹²⁶ Տևու Legislation Aistria, (<http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/eur/txweeos.htmEGI>), available at 02.10.2010:

հոգևոր փոփոխություններին և նրա զանազանությամբ», և թվարկում է այն բնագավառները, որոնք պետք է պահպանվեն արտադրության, ներկայացման, փորձաման և աշխատանքների ու փաստաթղթերի ներկայացման միջոցով: Միջոցները, որոնք ծառայում են այս նպատակին, պետք է հավասարապես պաշտպանվեն: Օրենքը նաև նշում է անհատական միջոցների մասին (հիմնադրամներ, դրամաշնորհներ, վարկեր, պարգևներ և այլն):¹²⁷

Բացառությամբ Վիեննայի, յուրաքանչյուր Բունդեսլենդ ունի իր՝ Մշակույթի խթանման ակտը, որոնցից շարերը իմպլեմենտացվել են 1980-ական թվականների ընթացքում: Օրինակ՝ համաձայն Ավստրիայի «Նեղինակային իրավունքի պահպանման մասին» ակտի, հեղինակային իրավունքը առաջանում է ստեղծագործության ծնվելուց հետո: Ոչ մի օրինական ակտ չի պահանջվում հեղինակային իրավունքի պահպանման համար: Նամաձայն Ակտի պարագրաֆ 1-ի, այսպիսի աշխատանքները պետք է լինեն «անհատական մտավոր ստեղծագործություններ գրականության, երաժշտության, վիզուալ արվեստի և ֆիլմերի մասին»:¹²⁸

2000թ.-ի «Փաստաթղթերի պահպանման մասին» ակտը կարգավորում է տեղեկատվության հավաքագրման բոլոր իրավունքներն ու պարտականությունները և վերաբերում է և՛ պետական-իրավական, և՛ մասնավոր-իրավական խմբերին: Ավստրիայում փաստաթղթերի պահպանությունը իրավական է մինչև 20 տարի:

Նախուկ դաշնային կանոնակարգերը ներառում են հետևյալ ակտերը.

«Պետական սուբսիդիաների փրամադրման մասին ակտը» (1997)թ.,

¹²⁷ Տե՛ս հղում 126:

¹²⁸ Տե՛ս Legislation Austria, (<http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/eur/lxweeos.htmEGl>), available at 02.10.2010:

«Դաշնային արվեստը խթանող ակտը» (1988թ.), փոփոխված 2000թ.,

«Նանրային ռադիոյի մասին ակտը» (1984թ.), վերջին փոփոխությունը՝ 2007թ.,

«Նեղինակային իրավունքի պահպանման մասին ակտը» (1996թ.), վերջին փոփոխությունը՝ 2006թ.,

«Կինոնկարների խթանման ակտը» (1980թ.), փոփ.՝ 2004թ.,

«Դաշնային թատրոնի կազմակերպության ակտը» (1998թ.), վերջին փոփ.՝ 2009թ.,

«Դաշնային թանգարանների մասին, ակտը» (1998թ.), փոփ.՝ 2002թ., նոր փոփոխությունը ընթացքի մեջ է,

«Նուշարձանների պահպանման մասին ակտը», փոփ.՝ 1999թ.:¹²⁹

Մշակույթի խթանման մասին ակտերը նույնպես ընդունվել են բոլոր Բունդեպեյներների կողմից՝ բացառությամբ Վիեննայի:

Ի լրումն պեդական ուղղակի օգնությանը արվեստին և մշակույթին՝ Ավստրիայի օրենսդրությունը նախատեսում է նաև մի շարք անուղղակի աջակցության ձևեր: Սա վերաբերվում է սոցիալական և դրամավարկային քաղաքականության փոփոխության իրավական դրույթների, որոնցից են արվեստագետների համար սոցիալական ապահովագրության համակարգը, աշխատաշուկայի կառավարման համար նախատեսված միջոցառումները, հեղինակային իրավունքի մասին օրենսդրությունը և այլն:

«Դաշնային թանգարանների մասին» 1998թ.-ի Ակտը թանգարաններին շնորհում է լիիրավ իրավական կարգավիճակ և նրանց դասում է պեդական օրենքի փակ գրքովող պարամական ինստիտուտների շարքին, որը ինքնիշխանության կարևոր քայլ էր: Դաշնային թանգարանները դեռևս գրքովում են Կրթության, արվեստի և մշակույթի դաշնային նախարարության հովանու ներքո և հիմնա-

¹²⁹ Տե՛ս հղում 63:

կան ֆինանսական աջակցությունը ստանում են Նախարարությունից:

Ինչպես վերը նշվեց, «Նուշարձանների պահպանման մասին ակտի» համաձայն, հուշարձան են համարվում մարդու կողմից ստեղծված պատմության, արվեստի, մշակույթի շարժական կամ անշարժ մշակութային նշանակություն ունեցող օբյեկտները:

«Նուշարձանների պահպանման մասին ակտի» փոփոխմամբ 1999թ.-ին նշվում է, որ հուշարձանները պետք է 2010թ.-ից հաշվառվեն հատուկ նոր ցուցակում:

Ավստրիայում գործում են նաև մշակութային ինստիտուտներ, որոնք նույնպես զբաղվում են պատմամշակութային հուշարձանների պահպանության հարցերով: Դրանցից նշանավորներն են.

Ավստրիական արվեստի հետազոտման բաժինը (Abteilung für Denkmalforschung), որը հետազոտություններ է կատարում վերոհիշյալ ոլորտում և զբաղվում է Ավստրիայի արվեստի գործերին վերաբերվող թղթաբանությամբ.

Արվեստի և գիտության ասոցիացիաների լիգան (Arbeitsgemeinschaft für Kunst und Wissenschaft), որը կենտրոնանում է արվեստի, գիտության և կրթության մշակութային քաղաքականության վրա.

Նուշարձանների դաշնային գրասենյակը (Bundesdenkmalamt), որի նպատակն է պահպանել և վերականգնել պատմական, արվեստաբանական և մշակութային հուշարձանները.

Մեդիակուլտրը՝ աուդի-վիզուալ հաղորդակցության և մշակութային զարգացման միջազգային ինստիտուտը, որը հետազոտություններ է կատարում և ապահովում է թղթաբանական ծառայություններ: Այն գլխավորապես կենտրոնացած է աուդի-վիզուալ ոլորտում:¹³⁰

Մշակութային հարցերի կառավարման համար Ավստրիան հիմնվում է դաշնային քաղաքական կառույցների վրա: Ինչ վերա-

¹³⁰ Տե՛ս Austria, (<http://www.culturalpolicies.net/web/austria.php>), available at 01.10.2010:

բերում է մշակույթի ոլորտի համաավստրիական քաղաքականությանը, ապա Դաշնային կառավարությունը չունի իրավասություններ այդ ոլորտում: Բացառություն են կազմում միայն դաշնային թարրոնները, որոնք գտնվում են Կրթության, գիտության և մշակույթի Դաշնային նախարարության իրավասության տակ: Մշակութային կառավարման կազմակերպությունը դիտարկվում է «Դաշնային նախարարությունների մասին» օրենքում: 2007թ. Ավստրիայում ստեղծվեց Կրթության, մշակույթի և արվեստի դաշնային նախարարություն /BMUKK/: Եվ սկսած այս ժամանակահատվածից, արվեստի, մշակույթի և մշակութային ժառանգությանը ու կրթությանը վերաբերող հարցերի համար պատասխանատու է տվյալ նախարարությունը: Նախարարության ծրագրերը բաշխված են 2 բաժինների միջև՝ մշակույթի բաժին և արվեստի հարցերով զբաղվող բաժին: Մշակույթի բաժինը պատասխանատվություն է կրում մշակութային ժառանգության, մշակութային ֆինանսավորման, մշակութային գործի խրախուսման, մշակութային հարցերի մասին տեղեկատվության, նացիստական ռեժիմի մշակութային արժեքների վերադարձի, ԵՄ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության, միջազգային համագործակցության համար:¹³¹ Մշակույթի և մշակութային ժառանգության հարցերով զբաղվում են նաև դաշնային այլ կառույցներ: Մշակույթի ոլորտում միջազգային քաղաքականության համակարգման, պլանավորման և ֆինանսավորման հարցերի համար պատասխանատու է եվրոպական և միջազգային գործերի Դաշնային նախարարությունը /Bmei A/, որը նույնպես համակարգում է երկկողմանի մշակութային հարցեր, բազմակողմանի մշակութային գործեր ԵՄ-ի, Եվրոպայի խորհրդի, ԵԱՏԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ և պատասխանատու է բազմակողմանի գիտատեխնիկական համագործակցության համար: Տնտեսության, ընտանիքի և երիտասարդության դաշնային նախարար-

¹³¹ Տե՛ս BMUKK-Federal Ministry for Education, Arts and Culture, (http://www.bmukk.gv.at/enfr/min_en/index.xml), available at 01.10.2010:

րությունը պատասխանատվություն է կրում պատմական շինությունների, մշակութային զբոսաշրջության, մշակույթի արդյունաբերության բնագավառում պարզևների համար: Քաղաքային և բնության գոտիները, որպես պատմական կենտրոններ, նույնպես գտնվում են տեղական իշխանությունների վերահսկողության տակ: Միայն 6 քաղաքային գոտիներ պահպանվում են Նուշարձանների պաշտպանության դաշնային գրասենյակի կողմից:¹³²

Ավստրիան մշակույթի ոլորտում սերտորեն համագործակցում է շատ երկրների հետ, և մշակույթի բնագավառի քաղաքականության բազմակողմանի հարցերը դիտարկվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի և ԵԱՏԿ-ի շրջանակներում: Ավստրիան հանդիսանում է մշակույթի գործերով զբաղվող փարբեր կազմակերպությունների անդամ՝ մշակութային քաղաքականության հարցերով զբաղվող միջազգային ցանցի, Եվրոպական միության մշակույթի Ազգային ինստիտուտի /EUNIC/ և այլն: Ավստրիան ստորագրել է մշակութային համագործակցության մասին Կոնվենցիան, որին մասնակցում էին ընդհանուր առմամբ 25 պետություն, այդ թվում՝ ԵՄ-ի ութ անդամներ: Ներագայում, որպես փվյալ մշակութային Կոնվենցիաների լրացում, 12 պետությունների կողմից ստորագրվեցին գիտահետազոտական բնագավառում համագործակցության մասին կոնվենցիաներ:

Մշակույթի բնագավառի Կոնվենցիաներին Ավստրիայի կողմից փրվող նշանակությունը արտահայտվում է նրանով, որ դրանք հանդիսանում են այնպիսի գործիք, որը թույլ է տալիս ավստրիական դաշնային կառավարությանը ազդել մշակութային համագործակցության բովանդակության և ոլորտի վրա: Մշակութային հարաբերությունները, որոնք կարգավորվում են մշակույթի բնագավառի Կոնվենցիայով, անհրաժեշտ է դիտարկել որպես լրացում կամ քաղա-

¹³² St'u Cultural Policy Database, (<http://www.culturelink.org/culpol/at.html>), available at 03.10.2010:

քական հարաբերությունների մի մաս:

Ուսումնասիրելով Ավստրիայի պարամամշակութային օրենսդրությունը և փարվող մշակութային քաղաքականությունը, պարզ է դառնում, որ հայկական պարամամշակութային հուշարձանները կազմում են Ավստրիայի պարամամշակութային ժառանգության մի մասը, և կարգավորվում են փվյալ երկրի օրենսդրության համաձայն: Տայկական հուշարձանները իրենց հարստությամբ դեռ հաշվառված չեն և դեռ ընգրկված չեն հաշվառման հարուկ ցուցակում: Վիեննայի Մխիթարյանների միաբանությունը բավականին մեծ նշանակություն և արժեք ունի Ավստրիայի իշխանությունների համար: 1990-ական թվականների սկզբին Ավստրիայի կառավարությունը խոշոր գումար է հատկացրել Վիեննայի Մխիթարյանների միաբանության թանգարանի վերանորոգման համար: Ներկայումս Մխիթարյանները Ավստրիայի իշխանությունների կողմից թույլտվություն են ստացել կառուցելու նոր գրադարան, սակայն նյութական սուղ հնարավորությունները թույլ չեն փալիս իրականացնելու այս ձեռնարկը: Նշենք նաև, որ Մխիթարյանների միաբանությունը դիմել է Եվրոպական միություն՝ Սուրբ Ղազար կղզում և Վիեննայի վանքում պահվող ավելի քան 8000 ձեռագրերի և 80000 արխիվային էջերի թվայնացման ծրագիր իրականացնելու համար: Միաբանությունն արդեն իսկ ստացել է Եվրոպական միության նախնական համաձայնությունը:

2.3 Նայկական պատրմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը Պորտուգալիայում

Պորտուգալիան հարուստ պատրմություն ունեցող, Եվրոպայի ամենահին երկրներից մեկն է: Վերապրելով Լուզիտանիայի գավթումը, հռոմեացիաների կողմից կարթագենական ուժերի պարությունը, ժոմանական քաղաքակրթության ձևավորումը և մայրամուտը՝ Պորտուգալիան առանց ազգային ինքնագիտակցման նշանների մնում էր Իսպանիայի անբաժան մասը: Պորտուգալիայի պատմությունը սկսում է XII դարից, երբ առաջացավ Բուրգունդների դինաստիան: 1143թ. պորտուգալական ասպետները Ալֆոնսո Էնրիկեշին հռչակեցին Պորտուգալիայի թագավոր: 1179թ. Պորտուգալիայի անկախությունը ճանաչվեց Նոմի պապի կողմից, իսկ թագավորությունը վերցվեց Պապի գահի հովանու տակ: 1910թ. հեղափոխության արդյունքում Պորտուգալիան հռչակվեց հանրապետություն: 1976թ. ապրիլի 2-ին ընդունվեց Սահմանադրությունը, որում հռչակվում էր սոցիալիզմի փարբերով ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված պետական հասարակարգը: 1986թ. Պորտուգալիան մուտք է գործում Եվրոպական միություն, ինչն էլ կայունացնող գործոն հանդիսացավ փնտեսության համար: 1989թ. հաստատվեցին Սահմանադրության ուղղումները, որոնցում հայտարարվում է «մերձավորների մասին հոգ փանող ազգային և արդար հասարակության» կազմավորման մասին: 1999թ. Պորտուգալիան մուտք գործեց Եվրոպական արտարժույթային միություն և եվրոյի գոփի:¹³³

Որպես պետություն, Պորտուգալիայի մասին արժե ավելացնել, որ այն խորհրդարանական հանրապետություն է, նախագահը ընտրվում է համընդհանուր քվեարկությամբ, 5 փարի ժամկետով: Կա-

¹³³ Տե՛ս D.Birmingham, "A concise history of Portugal", Cambridge University Press, 2003:

ռավարությունը գլխավորում է վարչապետը, որը, որպես կանոն, լինում է խորհրդարանական ընտրություններում հաղթած կուսակցության առաջնորդը: Վարչապարածքային բաժանման մասին պետք է ավելացնել նաև, որ մինչև 1976թ. Պորտուգալիայի փարածքը բաժանված էր գավառների: Վարչական բարեփոխումներից հետո մայրցամաքային Պորտուգալիայի փարածքը բաժանված է 18 շրջանի, որոնք իրենց հերթին բաժանվում են եկեղեցական համայնքների՝ կազմված 308 մունիցիպալ շրջաններից: Երկրի կղզիական փարածքները՝ Ազորյան կղզիները և Մադեյրան, ունեն ինքնավար փարածաշրջանների կարգավիճակ:

Պորտուգալիան հարուստ և բազմազան մշակույթ ունեցող երկիր է: Պորտուգալիայի պետության պարմության ողջ ընթացքում երկրի մշակութային պատկերը ձևավորել են փարբեր ժողովուրդները: Հռոմեացիները, գերմանական ցեղերը, արաբները և մավրերը, իսպանացիները և իրենք՝ պորտուգալացիները, որոնք թողել են հրաշալի ճարտարապետական կերպվածքներ և մշակութային ավանդույթներ: Պորտուգալացիները շարք հպարտ են իրենց պարմամշակութային ժառանգությամբ և սրբությամբ պահպանում են այն: Երկրի շարք քաղաքներ իրենցից ներկայացնում են թանգարաններ բաց երկնքի փակ:

Պորտուգալիայում մշակութային ժառանգության պահպանության բնագավառի առաջին հիշատակումները վերաբերում են XIII դարին, երբ առաջին փորձերն արվեցին պահպանել շինությունները՝ որպես երկրի անցյալի հիշատակ: Երկրի մշակութային ժառանգության պահպանության ամենավաղ ակտերի շարքում կարելի է նշել 1721թ. օգոստոսի 20-ի հրամանագիրը, որն ընդունվեց պարմության Թագավորական ակադեմիայի նախաձեռնությամբ: Դրանում թվարկված էին այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեին Պորտուգալիայի փարածքում գտնվող փարբեր պարմական և մշակութային հուշարձանների անվտանգության ապահովման համար: Պորտուգալիայի հուշարձանների մասին առաջին ցանկը վերաբերում

է 1880թ., չնայած պաշտոնապես այս ցանկը, որպես ստանդարտ, այդպես էլ չօգտագործվեց: Ազգային հուշարձանների առաջին պաշտոնական ցանկը հայտնվեց միայն 1904թ: Այդ ժամանակներից ի վեր կառավարությունն արդեն ուներ ազգային հուշարձանների վերականգնման և ֆինանսավորման համար առաջնությունների ցանկ:¹³⁴

Մշակութային քաղաքականության բնագավառում Պորտուգալիան խիստ կենտրոնացված չէր ոչ միայն վարչական տեսանկյունից, այլ նաև գյոբալ վերակազմավորման տեսանկյունից: Տարիների ընթացքում մոտեցումը փոխվում էր, և ավելի շար ջանքեր էին գործադրվում մշակութային ժառանգության պահպանության հավասարակշռված և ապակենտրոնացված համակարգի ձևավորման համար: Ժամանակակից իրավական հիմքը բնութագրվում է նրանով, որ Պորտուգալիայում, ի տարբերություն շար այլ եվրոպական պետությունների, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության հետ կապված հարցերը կարգավորվում են նաև սահմանադրական մակարդակով:¹³⁵

Այսպիսով, 1976թ. ապրիլի 2-ի Սահմանադրության մեջ կան հետևյալ ցուցումները՝ «Պորտուգալիայի ժողովրդի մշակութային ժառանգության արժեքի բարձրացման պաշտպանությունը հանդիսանում է նրա գործունեության ուղղվածություններից մեկը: Պորտուգալիայի ժողովրդի անկապտելի իրավունքների թվում՝ մշակութային ժառանգության իրավունքն է: Պետությունը պարտավոր է իր մարմինների միջոցով, ինչպես նաև հիմնվելով ժողովրդի նախաձեռնությանը և աջակցությանը, դասակարգել և պահպանել բնության տեսարժան վայրերը, օժանդակել իշխանությանը տեղական մարմինների հետ պատմական գործիքների պահպանության հարցում»:¹³⁶

¹³⁴ Տե՛ս հղում 133:

¹³⁵ Տե՛ս Portugal, (<http://www.culturelink.org/culpol/portugal.html>), available at 04.10.2010:

¹³⁶ Տե՛ս Portugal - Constitution, (http://www.servat.unibe.ch/icl/po00000_.html), available at, 04.10.2010:

Պորտուգալիայի Սահմանադրության 3-րդ գլխի 73-79-րդ հոդվածները նվիրված են մշակութային իրավունքներին և պարտականություններին, որտեղ խոսվում է պետության պարտականությունների և բոլոր մշակութային հաստատությունների հետ նրա համագործակցության մասին: Պետության պարտականությունների մեջ մտնում են բոլոր քաղաքացիների մշակութային գործունեության խրախուսումը և հասանելիության ապահովումը, անհատական կամ կոլեկտիվ ստեղծագործության արտահայտմանը ուղղված նախաձեռնությունների աջակցումը, մշակութային ժառանգության պահպանության և հարգանքի ապահովումը, այլ պետությունների հետ մշակութային հարաբերությունների զարգացումը, արտասահմանում պորտուգալական մշակույթի պաշտպանության ապահովումը: Բոլոր այս դրույթները սահմանադրության մեջ մանրամասնեցված են:¹³⁷

Պորտուգալիայի մշակութային ժառանգության պահպանության գծով գլխավոր օրենսդրությունը 2001թ. սեպտեմբերի 21-ի N 107 օրենքն է «Մշակութային ժառանգության պահպանության և հաշվառման մասին», որում սահմանված են պետական քաղաքականության հիմքերը փյույս քննազավառում:¹³⁸

Նամընդհանուր մշակութային ժառանգության սահմանումը շարադրված է հոդած 2-ի 1-ին և 2-րդ կետերում, որտեղ ասվում է, որ բոլոր այն առարկաները, որոնք վկայում են քաղաքակրթության և մշակույթի զարգացման մասին, ենթակա են հատուկ պաշտպանության: Դրանց են վերաբերում, մասնավորապես՝ պալեոնթոլոգիական, պարմական, հնէաբանական հայտնաբերումները, ճարտարապետական, լեզվական, փաստաթղթային, գեղարվեստական, ազգագրական, գիտական, կենցաղային առարկաները, որոնք արժեք են

¹³⁷ Տե՛ս Portugal - Constitution, (http://www.servat.unibe.ch/icl/po00000_.html), available at, 04.10.2010:

¹³⁸ Տե՛ս National legislation for the protection of the cultural heritage, (http://ec.europa.eu/taxation_customs/resources/documents/cgoods_pt_en.pdf), available at 08.10.2010:

ներկայացնում պարմության ու հնության, ինչպես նաև երկրի մշակութային ժառանգության համար: Անշարժ օբյեկտների մեջ մտնում են նաև մարդու և բնության համապեղ կերպվածքները /պեսարժան վայրեր/:

Նոդված 17-ը ներառում է չափանիշներ, որոնք պետք է կիրառվեն պարմության հուշարձանների պաշտպանության կամ դասակարգման սահմանման համար:¹³⁹

Նոդված 55-ը սահմանում է շարժական օբյեկտների դասակարգումը: Օրենքի համաձայն, դրանք Պորտուգալիայի փարաձքում ստեղծված կամ արտադրված, պորտուգալացի վարպետների աշխատանքներն են կամ արվեստի այն օբյեկտները, որոնք արտահայտում են կամ հանդիսանում են պորտուգալական մշակույթի մի մասը, և որոնք գտնվում են Պորտուգալիայի փարաձքում 50 փարի շարունակ, և, բացի վերը նշված չափանիշներից, իրենցից ներկայացնում են հեղափոխություն պորտուգալական քաղաքակրթությունը կամ մշակույթը ուսունմասիրելու կամ հասկանալու համար:

Նոդված 55-ում թվարկված շարժական մշակութային օբյեկտները՝ հոդված 64-ի համապարասխան, չեն կարող արտահանվել Պորտուգալիայի փարաձքից առանց փորձագիտական լիցենզիայի:¹⁴⁰ Անկախ այն բանից՝ մշակութային օբյեկտները կարգավորվում են որևէ ինստիտուտի կողմից, թե՛ ոչ, դրանք ուղարկելու կամ արտահանելու համար պահանջվում է Մշակույթի նախարարության նախնական թույլտվությունը: Պաշտպանությունը փրամադրվում է բոլոր մշակութային օբյեկտներին՝ անկախ դրանց արժեքից: Պետությունը, ի դեմս իրավասու մարմինների, հետևում է հուշարձանների վիճակին, առաջին հերթին՝ դրանց դասակարգման և հաշվառման ընթացակարգում: Գործող օրենսդրությանը համապարասխան՝ դասա-

¹³⁹ St'u Portugal cultural heritage, ([//F:/kult/Culture/Law13-85.htm](http://F:/kult/Culture/Law13-85.htm)), available at 10.10.2010:

¹⁴⁰ St'u Portugal cultural heritage, ([//F:/kult/Culture/Law13-85.htm](http://F:/kult/Culture/Law13-85.htm)), available at 10.10.2010:

կարգման և հաշվառման ենթակա են պարամության և մշակույթի հուշարձանները, որոնց սեփականատերերը հանդիսանում են ինչպես պեբությունը, այնպես էլ անհատներ:¹⁴¹

Պարամության և մշակույթի օբյեկտների դասակարգման չափանիշները սահմանվում են Մշակույթի նախարարության կողմից: Մշակութային ժառանգության հարցերով պորպուզալական ինստիտուտը իրականացնում է օբյեկտի հետագա՝ ցուցակում ընդգրկելու նույնականացման հետ կապված բոլոր ընթացակարգերը, ինչպես նաև վարում է հուշարձանների կանոնավոր ցուցակ:

Օրենսդրության մեջ մշակութային հարստության պահպանության հարուկ միջոցներ են նախատեսված՝ հաշվի առնելով, թե որ կարեգործիաներին են վերաբերվում նրա բաղկացուցիչները, իսկ կոնկրետ՝ արդյո՞ք դրանք հանդիսանում են ազգային հեղաքրքրություն ներկայացնող, հանրային հեղաքրքրություն ունեցող, կամ քաղաքապետարանների համար հարուկ կարևորության օբյեկտներ: Օրենքը սահմանում է հնէաբանական, արխիվային, տեսալսողական, մատենագիտական, ֆոնոգրաֆիկ և լուսանկարչական ժառանգությունը կարգավորող հարուկ կանոններ: Այս բնագավառներից յուրաքանչյուրը կարգավորվում է առանձին ինստիտուտների կողմից, իսկ արտահանելու լիցենզիան տալիս է Պորպուզալական թանգարանների ինստիտուտը: Այս ինստիտուտը պարասխանատու է վարչական ընթացակարգերի համար, իսկ վերջնական որոշումը կայացնում է Մշակույթի նախարարը: Օրենքի 15 հոդվածի 4-րդ և 18 հոդվածի 1-ին կետերը տալիս են այն օբյեկտների սահմանումները, որոնք անգնահատելի մշակութային արժեք են ներկայացնում և ունեն պետական կարևորություն: Նմանատիպ ազգային գանձերը չեն կարող արտահանվել:¹⁴² Օրենքի 15 հոդվածի 2-րդ կետը դասակարգում է շարժա-

¹⁴¹ Տե՛ս Portugal, (<http://www.culturalpolicies.net/web/portugal.php?aid=23>), available at 10.10.2010:

¹⁴² Տե՛ս հղում 139:

կան գույքը ազգայինի, պետականի և մունիցիպալի:

ա/ “Monumento Nacional” /ազգային հուշարձան/. եզակի շինություն. ներկայացնում է ազգային հետաքրքրություն, որի դասակարգումը և պաշտպանությունը գտնվում են Ազգային ինստիտուտի փնտրիչության փակ/ IPPAR/: Նուշարձանը դառնում է երկրի ազգային հուշարձանի/հարստության/ նշանակության օբյեկտ Կառավարության դիրեկտիվի հիման վրա:

բ/ “Imòvel de Interesse Pùblico” /պետական նշանակության շինություններ/, ազգային հետաքրքրություն ներկայացնող այլ կարևոր շենքեր, որոնց դասակարգումը և պաշտպանությունը գտնվում են Պորտուգալիայի ճարտարապետական ժառանգության ինստիտուտի փնտրիչության փակ /IPPAR/: Նուշարձանը համարվում է հանրային հետաքրքրության կարգավիճակ ունեցող օբյեկտ՝ Մշակույթի նախարարության ակտի հիման վրա:

գ/ “Imòvel de Interesse” /Մունիցիպալ, տեղական նշանակության շենքեր/. դասակարգումը և պաշտպանությունը գտնվում է տեղական մարմինների /քաղաքապետարանների/ փնտրիչության փակ: Ինչ վերաբերում է քաղաքապետարանների համար հատուկ նշանակություն ունեցող օբյեկտներին, ապա դրանց դիրքը ամրագրվում է տվյալ մակարդակի համապատասխան ակտերով:¹⁴³

Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ մշակութային արժեքների իրավական պաշտպանությունը իրականացվում է դասակարգման և ցանկագրման միջոցով: Դա նշանակում է, որ հուշարձանների պաշտպանության ձևը կախված է գրանցման կամ դասակարգման համապատասխան մակարդակից: Օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է, որ դասակարգումը վարչական ընթացակարգերի եզրակացությունն է, որով որոշվում է տվյալ առարկայի մշակութային արժեքի աստիճանը: Ներկայումս դասակարգման գործընթացում են գտնվում 9 ազգային հուշարձաններ, պետական նշանակության 155

¹⁴³ Տե՛ս հղում 139:

հուշարձաններ և Կրեդական նշանակության 57 հուշարձաններ:

Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ կետը ճշգրտում է, որ դասակարգված ժառանգության առարկաների /հուշարձանների/ կամ ազգային նշանակություն ունեցող հուշարձանների ժամանակավոր արտահանումը իրականացվում է մշակութային ժառանգությամբ զբաղվող պետական հիմնարկությունների թույլտվությամբ:¹⁴⁴

Նորվաձ 65-ի 3-րդ կետը նախատեսում է, որ պետությանը պատկանող ազգային նշանակության հուշարձանների ժամանակավոր արտահանման թույլտվությունը բացառության կարգով Կալիս է Նախարարների խորհուրդը՝ երկրի մշակութային ժառանգության համար բացառիկ հերաքթրություն ներկայացնող առարկայի հետ փոխանակելու համար: Մշակութային ժառանգության պաշտպանության վերահսկողությունը իրականացնում են արտահանման հսկողության համար պատասխանատու մաքսային մարմինը և պաշտպանության համար պատասխանատու ոստիկանական իշխանությունները: Մշակութային արժեքների հետ կապված հանցագործությունները կարգավորվում են ինչպես Կոլյալ օրենքի, այնպես էլ Քրեական օրենսգրքի դրույթների համաձայն:

Օրենքի 100-րդ հոդվածի համաձայն, մշակութային արժեքների հետ կապված հանցագործությունները կարգավորվում են Քրեական օրենսգրքի դրույթներին համապատասխան:

Նորվաձ 102-ում դիտարկվում են անօրինական արտահանման հարցերը: Նորվաձը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ, որը արտահանում է պետական կամ ազգային նշանակության առարկա, ենթակա է մինչև 5 տարի բանտարկության կամ պետք է տուգանվի 600 օրվա ընթացքում:

Անփույթ լինելու դեպքում իրավախախտը ենթակա է մինչև 1 տարի բանտարկության կամ պետք է տուգանվի 120 օրվա ընթացքում:¹⁴⁵

¹⁴⁴ Стів PORTUGAL, (<http://www.culturelink.org/culpol/portugal.html>), available at 12.10.2010:

¹⁴⁵ Стів հղում 138:

Օրենքի 104-րդ և 105-րդ հոդվածները նախատեսում են խախտման համար հետևյալ քրուզանքները: Նամաձայն 104 հոդվածի գ կետի, առարկաների արտահանումը 65-րդ հոդվածի խախտումով հանդիսանում է լուրջ խախտում և ենթակա է 2500-500000 եվրո քրուզանքի: Հոդված 105-ը նախատեսում է, որ մշակութային արժեքները ԵՄ-ի փարաձքից արտահանելու համար լիցենզիաների փրամադրման կանոնների խախտումը կարգավորվում է Խորհրդի 1992թ. դեկտեմբերի 9-ի N 3911/92 Կանոնակարգով, հանդիսանում է լուրջ խախտում և ենթակա է քրուզանքի: Մշակութային ժառանգության առարկաների վաճառքի համար գերակշռող իրավունքները Պորտուգալիան իրականացնում է բացառապես Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, որտեղ սսվում է, որ վաճառքի նպատակով առարկաների արտահանման հայտի ներկայացումը կարող է իրականացվել պետության թույլտվությամբ: Իսկ հարկումը կարգավորվում է Օրենքի 99-րդ հոդվածով, որի համաձայն, մշակութային արժեքների պահպանման և պաշտպանության համար հարկային արտոնությունները և խթանները կարգավորվում են փոխալ վարչական շրջանի օրենքով:¹⁴⁶

Պետությունը մասնակցում է Պորտուգալիայի մշակութային ժառանգության պահպանության գործին՝ հատուկ հարկային արտոնություններ ներմուծելով այն անձանց համար, որոնք հանդիսանում են դասակարգման ընթացակարգն անցած օբյեկտների տերեր կամ սեփականատերեր: Դրանք են՝ անշարժ գույքի համար սահմանված հարկից ազատումը, հարկային բեռի կրճատումը, այն դեպքում, եթե ցուցակում ընդգրկված օբյեկտի սեփականատերերը իրականացնում են պահպանման և վերականգման հետ կապված աշխատանքներ: Բացի հարկային արտոնություններից, օրենսդիր մարմինը նախատեսում է նաև ֆինանսական բնույթի այլ խթաններ, որոնք սահման-

¹⁴⁶ Տե՛ս հղում 144:

վում են Կոմիտասի հարցի գծով հատուկ օրենսդրությամբ:

Դիտարկենք Պորպուգալիայի պետության մշակութային քաղաքականության նպատակներն ու սկզբունքները: Դրանք հիմնականում ուղղված են սպասկենսապայմանները, միջազգայնացմանը, պորպուգալական մշակույթի միջազգային տարածմանը և աջակցմանը մշակույթի տարբեր ձևերին: Մշակութային քաղաքականության առաջնությունները կենտրոնացված են հիմնականում պատմամշակութային ժառանգության պահպանության, մշակույթի զարգացման և մշակույթի ֆինանսական հարցերի շուրջ: Պորպուգալիայում մշակույթի գործերի կառավարումը բաժանված է կենտրոնական պետական հիմնարկությունների և իշխանության տարածաշրջանային մարմինների միջև: Պորպուգալիայում Մշակույթի նախարարությունը /մշակույթի հարցերով Պետական քարտուղարությունը/ ընդհանուր պատասխանատվություն է կրում երկրի մշակութային ժառանգության համար: Այն ունի 4 հիմնական ուղղվածություն՝ մշակույթի կառավարում, կազմակերպում և զարգացում, աջակցություն մշակութային միջոցառումներին, միջազգային մշակութային կապերի հաստատում: Նախարարությունը սահմանել է նաև Լիսաբոնի սահմաններից դուրս մշակույթի հարցերով զբաղվող 4 տարածաշրջանային ինստիտուտներ, որոնք պատասխանատու են իրենց տարածքներում գտնվող մշակութային արժեքների համար:¹⁴⁷

Մշակույթի պետական քարտուղարը սահմանում է հատուկ արգելոցային գոտիներ հուշարձանների և մշակութային նշանակության օբյեկտների համար: Տարածաշրջանային բաժանմունքները դասակարգման համար Պետական քարտուղարությանը տեղական նշանակության անշարժ օբյեկտներ են ներկայացնում: Վամաձայն Մշակույթի պետական քարտուղարության պաշտոնական հրատարակության /IPPAR/ ընդհանուր առմամբ 2712 անշարժ օբյեկտներ դասակարգ-

¹⁴⁷ Տե՛ս հղում 141:

վեցին ազգային մակարդակով և 2610 առաջարկ քննարկվեց:¹⁴⁸ Գոյություն ունեն նաև այլ պերական հաստատություններ, որոնք մասնակցում են մշակութային քաղաքականությանը՝ Ազգային շենքերի և հուշարձանների գլխավոր վարչությունը, Զբոսաշրջության պերական քարտուղարությունը, Ազգային պաշտպանության նախարարությունը, Ներքին վարչության նախարարությունը, որը պատասխանատու է տեղական մարմինների գործունեության համակարգման համար: Արտաքին գործերի նախարարությունը պատասխանատու է արտաքին մշակութային քաղաքականության և ամբողջ աշխարհում պորտուգալական մշակութային ժառանգության պահպանման համար, ինչպես նաև արտասահմանյան երկրներում պորտուգալերենի դասավանդման քաղաքականության համար: Պորտուգալիայի ճարտարապետության և հնէաբանության ինստիտուտը, համակարգում է մշակութային ժառանգության պահպանման ու բազմապարկման ուղղությամբ կառավարչական գործողությունները: Բացի պերական հաստատություններից, գոյություն ունեն նաև ազգային ֆոնդեր և խորհուրդներ, որոնք սկսվել մասնակցություն ունեն Պորտուգալիայի մշակութային քաղաքականության մեջ: Օրինակ՝ 1945թ. հիմնված Պորտուգալիայի մշակույթի ազգային կենտրոնի հիմնական գործունեությունը նվիրված է պորտուգալական մշակութային ժառանգության պահպանմանն ու պաշտպանությանը, պորտուգալական մշակույթի դերի պարզաբանմանը և դրա մասսայականացմանը:

Գյուլբենկյանի հիմնադրամը այն մասնավոր կազմակերպություններից մեկն է, որը հսկայական ներդրում կատարեց Պորտուգալիայում մշակույթի զարգացման համար: Այն, հիմնվելով 1956թ., վճռական դեր խաղաց մշակութային միջոցառումների կազմակերպման

¹⁴⁸ Stúo Ministério da Cultura, (<http://www.portaldacultura.gov.pt/Pages/Inicio.aspx>), available at 15.10.10.

գործում: 1988թ. սրեղծվեց Արևելքի հիմնադրամը, որի նպատակը արևելքի երկրների՝ հատկապես Նդկաստանի հետ, պարմական և մշակութային կապերի ամրապնդումն էր:¹⁴⁹ Պորտուգալիայում գոյություն ունեն նաև ազգային մասշտաբային հիմնարկություններ, որոնք զբաղվում են կոնկրետ մշակութային ժառանգությամբ, օրինակ, Ազգային շենքերի և հուշարձանների գլխավոր վարչությունը /DGEMN/: Այն հանդիսանում է Սոցիալական ապահովության նախարարության հասարակական մարմին, որը սրեղծվել է 1929թ. որոշակի գործառնությունով, ինչպիսիք են հասարակական շենքերի պեղական հարվածի շինարարությունը, վերակառուցմանը և պահպանմանը փանող գործունեության կոնցեպցիայի, պլանավորման և համակարգման պարասխանավորությունը, ճարտարապետական ժառանգության պաշտպանությունը և ամրապնդումը:¹⁵⁰

Մշակութային աջակցությունը փարաձառջանային մակարդակով ապահովում են համապարասխան փարաձառջանների 5 փեղական հանձնաժողովներ: Իշխանության փեղական մարմինները իրականացնում են մունիցիպալ մշակութային ժառանգության պահպանման իրենց մանդատները: Պորտուգալիայում հսկայական քանակությամբ թանգարանների հայտնվելու հետ մեկտեղ, առաջ եկան դրանց պահպանության, ֆինանսավորման, գործունեության հետ կապված խնդիրներ: Պորտուգալական թանգարանների սրեղծման, գործունեության և կառավարման կարգավորման անհրաժեշտություն առաջացավ:

2004թ. Պորտուգալիայի Խորհրդարանի կողմից հաստատվեց «Պորտուգալական թանգարանների պահպանության մասին օրենքը» /47/2004 Օրենքը /Leo Quardo Museus Portugueses/, որը սահմանում է թանգարանների համար ազգային քաղաքականության

¹⁴⁹ Տե՛ս C. Gulbenkian foundation, (<http://www.gulbenkian.org.uk/innovation-fund>), available at 16.10.10:

¹⁵⁰ Տե՛ս Portugal, (<http://www.culturalpolicies.net/web/portugal.php?aid=1>), available at 16.10.10:

սկզբունքները: Այս իրավական փաստաթուղթը հաստատում է թանգարանների ճանաչման, ժողովների հաճախման համար ղեկավար սկզբունքները և սահմանում է թանգարանների լիցենզավորման համար չափանիշներ: Այն նաև պաշտոնապես սահմանում և զարգացնում է պորտուգալական թանգարանների ցանցը /RPM/: Օրենքը սահմանում է թանգարանների կոնցեպցիան, կարգավորում է պարտականությունները, սահմանում է որակավորված անձնակազմի, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների հետ կապված հարցերը:

Օրենքը նախատեսում է թանգարանների հավաքարմագրման համակարգի իրականացում, որն ուղղված է մշակույթի հասանելիության խրախուսմանը և մշակութային ժառանգության գնահատմանը այնպիսի որակի սրանդարտների ներդրման միջոցով, որոնք ամրագրված են Կոլյալ օրենքում: Նավարարմագրման դեպքում թանգարանը կհամարվի պորտուգալական թանգարանների ցանցի անդամ և, հետևաբար, իրավունք կունենա հավակնել պեդական ֆինանսական աջակցության՝ մշակութային ժառանգության մասին օրենքին համապատասխան:¹⁵¹

Թանգարանների գործունեության մասին հարցերը կարգավորվում են Պորտուգալական թանգարանների ինստիտուտի կողմից, որը հանդիսանում է թանգարանների ազգային ինստիտուտ և ենթարկվում է Մշակույթի նախարարությանը: Նախարարությունը անմիջական պատասխանատվություն է կրում 29 թանգարանների, այդ թվում՝ 9 ազգային թանգարանների համար: Ինստիտուտի խնդիրը պորտուգալական թանգարանների ոլորտում ազգային մշակութային քաղաքականության իրականացումն է: Պորտուգալիայում պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունը իրենից ներկայացնում է պեդական և հասարակական միջոցառումների համակարգ՝ ուղղված յուրաքանչյուրի՝ մշակութային արժեքներին հասա-

¹⁵¹ Տե՛ս LAW/REGULATION FOR MUSEUMS (<http://www.ne-mo.org/index.php?id=64>), available at 15.10.10:

նելիության սահմանադրական իրավունքին և պարմական ու մշակութային ժառանգության պահպանության մասին հոգալու, պարմության և մշակույթի հուշարձանների պաշտպանության յուրաքանչյուրի պարտականությանը: Հուշարձանների պահպանման գործունեությունը պետական օրենսդիր ակտերի նախապարաստումն ու հրապարակումն է, գիտահետազոտական, պահպանման և վերականգնողական աշխատանքների անցկացումը, հուշարձանների՝ որպես պարմական հարստության, մասսայականացումը: Մշակութային ժառանգության օբյեկտների պետական պահպանման, պաշտպանության, օգտագործման և մասսայականացման շրջանում հարաբերությունները կարգավորվում են Պորտուգալիայի Սահմանադրությամբ, մշակութային ժառանգության բնագավառում միջազգային իրավունքի փաստաթղթերով, «Մշակութային ժառանգության պահպանության մասին» Պորտուգալիայի օրենսդրության հիմունքներով:

Միջազգային իրավունքի նորմերին և պորտուգալական օրենսդրությանը համապատասխան, մշակութային ժառանգության յուրաքանչյուր օբյեկտ իրենից ներկայացնում է Պորտուգալիայի ժողովրդի համար բացառիկ արժեք և հանդիսանում է համաշխարհային մշակութային ժառանգության անբաժանելի մաս: Մշակութային ժառանգության օբյեկտը օժտված է առանձնահատկություններով, որոնք հիմք են ծառայում մշակութային ժառանգության օբյեկտների շարքին այն դասելու համար, ենթակա են պարտադիր պահպանության և հանդիսանում են անշարժ գույքի հատուկ տեսակ, որի վերաբերյալ սահմանվում են տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի իրականացման առանձնահատկություններ:

Մշակութային ժառանգության օբյեկտների անվտանգության ապահովումը համալիր խնդիր է, որը պահանջում է մշակութային ժառանգության օբյեկտների, որպես անշարժ գույքի հատուկ տեսակի, նախնական բազմակողմանի գնահատում՝ հաշվի առնելով

պաշտպանության առարկայի առկայությունը, փարածությունը, դրանց օգտագործման սահմանափակումներն ու ծանրաբեռնվածությունը և հուշարձանների այլ առանձնահատկություններ: Պորտուգալիան մշակութային ժառանգության պահպանության հարցերով հանդիսանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպական համագործակցության շրջանակներում բոլոր հիմնական կոնվենցիաների մասնակից:

2.4. Նայկական պատմամշակութային ժառանգության հրավական կարգավիճակը Նունասպանում

Նունասպանը փարբեր մշակույթների և մեծ հեղափոխությունների երկիր է: Հին Նունասպանի մշակույթը արևմտյան ճարտարապետության, գրականության, փիլիսոփայության և ժողովրդավարության օրրանն է: Այս փոքր երկիրը հսկայական դեր է խաղացել Եվրոպայի պատմության մեջ: Արևմտյան քաղաքական ինստիտուտները, արվեստը, գիտությունն այսպեղից են ծնունդ առել: Ժամանակակից հունական մշակութային քաղաքականության և պրակտիկայի կենտրոնական փարբերը կարող են հասկացվել նրա ժառանգության, ինչպես նաև նորագույն պատմության լույսի ներքո: Նունասպանի փարածքում են գտնվում փարբեր մշակույթների և ազգերի մշակութային հուշարձաններ, նաև հայկական պատմամշակութային ժառանգության հուշարձաններ, իսկ ավելի կոնկրետ՝ հայ ուղղափառ եկեղեցիներ: Նունասպանում հայ ուղղափառ եկեղեցու հիմնումը վերաբերում է 16-րդ դարին: 1908թ. Նունասպանի թագավորը Աթենքում բնակվող հայկական համայնքների ձևավորման և եկեղեցու կառուցման պաշտոնական թույլտվության մասին հրաման արձակեց: Նյուսիսային Նունասպանի մի շարք քաղաքներում, ինչպիսիք են՝ Սալոնիկը, Կավալան, Քսանթին, Կոմոսինին, Ալեքսանդրապոլիսը, հայկական հա-

մայնքները ձևավորվել են դեռևս XVIII դարում: Նայկական համայնքը, իր ներկա կառուցվածքով, ստեղծվել է 1920-ական թվականներին: Նունաստանում հայ ուղղափառ եկեղեցին հունական իշխանությունների կողմից ճանաչվում է որպես կրոնական փոքրամասնություն և հարգված համայնք: Նայկական եկեղեցին գտնվում է Մեծին Տանն Կիլիկիո կաթողիկոսի իրավասության ներքո: Այսօր Նունաստանի տարածքում կա փասը եկեղեցի, որից չորսը գտնվում են Աթենքում, իսկ մյուս վեցը՝ Նյուսիսային Նունաստանում /Սալոնիկ, Կավալա, Քսանթի, Կոմոտինի, Ալեքսանդրապոլիս/: Դրանք են Տիպիմոթիխոյի Սուրբ Գևորգ եկեղեցին /1735թ./, Սալոնիկի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին /1903թ./, Ալեքսանդրապոլիսի Սուրբ Կարապետ եկեղեցին/1886թ./, Իրակլիոնի Ս.Նովիաննես եկեղեցին/17-րդ դար/, Կոմոտինիի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին/1834թ./ և այլն: Նշած հաստատությունները ոչ միայն իրենք են հանդիսանում անգնահատելի պատմամշակութային նշանակություն ունեցող օջախներ, այլ նաև դրանցում գերեզմանավայրեր են հանդիսանում մեծ արժեք ներկայացնող առարկաները: Այդ ամենը իր ամբողջության մեջ կազմում է Նունաստանի հայկական պատմամշակութային ժառանգությունը և նաև Նունաստանի պատմամշակութային ժառանգության անբաժանելի մասն է, որի իրավական վիճակը այժմ կուսումնասիրենք:

Նունաստանը ազգային պետություն դարձավ միայն XIX դարի սկզբին՝ իր հսկայական մշակութային ժառանգությամբ և ուղղափառ քրիստոնեական ավանդույթների վրա հիմնված հասարակությամբ: Օսմանյան կայսրության դեմ անկախության համար պայքարազմելուց հետո, 1827թ. հռչակվեց Նունաստանի անկախությունը: Նունաստանը 1830թ.-ից հանդիսանում է անկախ պետություն: 1864թ. Գեորգ I օրոք նոր սահմանադրություն ընդունվեց, որը երկրում սահմանեց ժողովրդավարություն, իսկ թագավորի դերը դարձավ երկրորդային:¹⁵²

Լուսավորության զարգացման աննախընթաց պայմաններում

¹⁵² Стів Історії Греції, (<http://greece-info.ru/historygreece>) available at 20.09.2010:

XIX դարի ընթացքում և մինչև XX դարի սկիզբ Նունաստանը ակտիվ կերպով սկսեց զբաղվել մշակութային քաղաքականությամբ, մշակութային և հնէաբանական ժառանգության պահպանմամբ: 1926թ. Նունաստանում, ֆրանսիականի օրինակով, հիմնվեցին Աթենքի ակադեմիան, Ազգային գրադարանը և Պատգամավորների պալատի գրադարանը, որոնք գտնվում են Աթենքում, և դրանց փնօրինության փակ են գտնվում խոշորագույն գրքային ֆոնդերը: Աթենքում նաև բացվեց Ազգային հնէաբանական թանգարանը, որտեղ պահվում են Նին Նունաստանի պատմության բոլոր ժամանակաշրջանները ընդգրկող արվեստի ինքնատիպ սրտեղծագործություններ, Բյուզանդական թանգարանը՝ վաղ քրիստոնեական սրտեղծագործությունների և բյուզանդական արվեստի եզակի հավաքածուով: XX դարի 50-ական թվականներից սկսած, նկատվում էր կյանքի մակարդակի աստիճանական բարձրացում, ինչը բերեց մշակութային կյանքի արշալույսին:¹⁵³ 1960-ական թվականների ընթացքում զգալի թվով հնէաբանական թանգարաններ բացվեցին Նունաստանի խոշոր քաղաքներում: Բացվեց Ազգային պատկերասրահը, որտեղ ներկայացված են հույն գեղանկարիչների և քանդակագործների աշխատանքները: Սկզբնապես մշակութային քաղաքականության պատասխանատվությունը բաժանված էր փարբեր նախարարությունների միջև:¹⁵⁴ Միայն 1971թ. սրտեղծվեց Մշակույթի և գիտության նախարարություն, և արդեն իսկ մշակույթի ոլորտի քաղաքականության պատասխանատվությունը ընկավ նրա վրա:

Սահմանադրական հիմունքներով հունական խորհրդարանը մշակույթի բնագավառում խաղում է առանցքային դեր, մասնավորապես՝ մշակութային ժառանգության և արվեստի հարցերի գծով

¹⁵³ Տե՛ս History of modern Greece, (<http://www.mlhanas.de/Greece/History/ModernHistory.html>), available at 20.09.2010:

¹⁵⁴ Տե՛ս Historical perspective: cultural policies and instruments, (<http://www.culturalpolicies.net/web/greece.php?aid=533>), available at 20.09.2010:

օրենսդրական ակտերի ընդունման գործում: Բացի դրանից, մշակույթի և կրթության գործերով Մշտական հանձնաժողովը իրականացնում է Մշակույթի նախարարության և նրա հիմնարկությունների քաղաքականության և ծրագրերի հսկողությունը: Մի շարք նախարարություններ նույնպես մասնակցում են մշակույթի ոլորտի քաղաքականությանը և ծրագրերի իրականացմանն ու մշակմանը: Դրանք են՝ Մամուլի նախարարությունը, Շրջակա միջավայրի նախարարությունը, Արտաքին գործերի նախարարությունը, Կրթության նախարարությունը և այլն: Մշակույթի նախարարությունը պատասխանատու է մշակութային ժառանգության բնագավառում օրենսդրությունների նախապարաստման և իրականացման, նորմատիվային հիմունքների սահմանման և ներդրման, ծրագրերի ռազմավարական պլանավորման և ֆինանսավորման համար: Նախարարությունը նաև ստեղծել է հարուկ բաժիններ, որոնք պատասխանատու են մշակութային ժառանգության՝ սպորտըրյա հնությունների, մասնավոր հավաքածուների պահպանման համար: Բացի դրանից, նախարարությունը նաև պատասխանատու է կրում մշակութային ժառանգության պահպանման բնագավառում քաղաքականության իրականացման համար:¹⁵⁵

Նունաստանի կառավարության քաղաքական փաստաթղթերում մշակույթի պաշտոնական սահմանում գոյություն չունի: Նունաստանի սահմանադրությունը, սակայն, անուղղակի հղումներ է կատարում մշակույթի վերաբերյալ: Սահմանադրության հոդված 16-ը նախատեսում է յուրաքանչյուրի համար արվեստի և մշակույթի հանդեպ իրավունքը, և դրան խրախուսելու պետության պատասխանատվությունը: Բացի դրանից, հոդված 24-ի 1-ին կետը նախատեսում է, որ երկրի մշակութային ժառանգության պաշտպանությունը չի կարող վստահվել մասնավոր նախաձեռնության, այն հան-

¹⁵⁵ *Strong Competence, decision-making and administration*, (<http://www.culturalpolicies.net/web/greece.php?aid=533>), available at 20.09.2010:

դիսանում է պետության իրավունք և պարպականություն: Մակայն դա պարասխանապվությունը չի դարձնում անդեմ, քանի որ Նունասպանի սահմանադրության հողված 24-ի համաձայն, յուրաքանչ-յուր քաղաքացի իրավունք ունի և պարպավոր է պահպանել իր հայրենիքի մշակութային ժառանգությունը:¹⁵⁶

Մշակութային ժառանգությանը վերաբերող օրենսդրությունը սկզբնապես՝ սկսած XIX և XX դարի սկզբից, կազմված էր օրենքների ուղղման ազլումերացիայից: Նունասպանի հին օրենսդրությունը՝ 1932թ. «Նությունների մասին օրենքը» և 1950թ. «1830թ. հերո հուշարձանների մասին» օրենքը շար առավելություններ ուներ, և Նունասպանի մշակութային ժառանգության մեծամասնության պահպանությունն այդ օրենսդրության իրագործման հերևանքն էր: 1834թ. ընդունվեց օրենք /1834թ. մայիս, 10/22/, որը հոչակում էր, որ «Նունասպանում բոլոր հնությունները համարվում են ազգային հարսություն և պարկանում են հույներին» և ապա հայարարում՝ որ «բոլոր ավերակները կամ այլ հնությունները, որոնք գրնվում են ազգային հողի վրա կամ հողի րակ, կամ ծովի հարակին, հանդիսանում են պետության սեփականություն»:¹⁵⁷ Այս ժամանակահարվածում միաժամանակ հիմնվեց Նունական հնէարանական ծառայությունը, և բացվեցին մի քանի պերական թանգարաններ: 1914թ. օրենք ընդունվեց, որը իրավական պաշարպանություն էր րրամադրում բյուզանդական և հերբյուզանդական պարմական արժեք ունեցող արվեստի սրեղծագործություններին: Վերը նշված բոլոր օրենսդրությունները ամրագրվեցին 1932 /5351/32/ օրենքում, որը գործում էր մինչև 2002թ., այսինքն՝ մինչև նոր օրենքի ընդունումը:

Նունասպանի պարմամշակութային արժեքների համակարգը էա-

¹⁵⁶ Տե՛ս The Constitution of Greece, (<http://www.cecl.gr/RigasNetwork/databank/Constitutions/Greece.html>), available at 20.09.2010:

¹⁵⁷ Տե՛ս Outline of archaeology and archaeological profession in Greece, (<http://www.law-archaeology.gr>), available at 20.09.2010:

կան թերություններ ուներ: Տիմնական ուշադրությունն ուղղված էր գլխավորապես հնություններին, պահպանության միջոցները հանգում էին արգելքներին, փուզանքներին և սահմանափակումներին, հուշարձանների սպահովագրման համակարգը մշակված չէր: Հակասություններ կային նաև մի շարք այլ հարցերում: Կապված հուշարձանների պահպանության օրենսդրական ակտերի ժամանակավոր և թեմատիկ բազմազանությանը՝ քաղաքացիների և վարչական մարմինների մոտ այնպիսի խնդիրներ առաջացան, որոնք նրանց դժվար դրության մեջ էին դնում: Այդ իսկ պատճառով ամբողջական և համակարգված օրենսդրության սրեղծման մասին որոշում կայացվեց՝ նորարարական որոշումների օգնությամբ բարելավելու մշակութային ժառանգության պահպանությունը:

1974թ.-ից հետո, և հատկապես 1980-ական թվականներին, օրենսդրությունն արդիականացնելու, միավորելու և համակարգելու փորձեր արվեցին, և բազմաթիվ ուղղումներից և լրացումներից հետո հունական խորհրդարանը իր հավանությունը փոխեց ծավալուն և մանրամասն փաստաթղթին /մոտ 100 էջ/, և 2002թ. հունիսին ուժի մեջ մտավ «Մշակութային ժառանգության պահպանության մասին» Հունաստանի Հանրապետության 3028/2002 օրենքը: Տվյալ օրենքը սպահովում է Հունաստանի տարածքում գտնվող հույն և ոչ հույն մշակութային ժառանգության ամբողջական պաշտպանությունն ու պահպանումը:¹⁵⁸

Հունաստանի Հանրապետության օրենքը կազմված է ներածականից, 9 գլխից, 75 հոդվածից և եզրափակիչ մասից: Հունաստանի օրենքի գլուխ 1-ում փրվում են տերմինների սահմանումները, մշակութային ժառանգության օբյեկտների դասակարգումը: Հունական օրենքը այն սահմանում է ոչ թե որպես օբյեկտների թվաքանակային հանրագումար, այլ որպես մշակութային արժեքներ, որոնք գտնվում

¹⁵⁸ Տե՛ս Hellenic society for law and archaeology, (<http://www.law-archaeology.gr>), available at 23.09.2010:

են հունական պեպրության փարածքում /h.1/:¹⁵⁹ Այս փարածքը միշտ եղել է փարբեր ժողովուրդների մշակութային համագոյության վայր, և նրանց կողմից թողնված ժառանգության պաշտպանությունը պեպրության պարտականությունն է: Մշակութային ժառանգությունը բաղկացած է մշակութային արժեքներից, որոնք հանդիսանում են անձանց գոյության և գործունեության, ինչպես նաև նրանց հասարակական միավորումների վկայություն: Մշակութային ժառանգության փարբերակիչ հատկանիշն այն է, որ հուշարձանները պեղելություններ են կրում մարդու կյանքի բոլոր դրսևորումների մասին՝ մշակութային, քաղաքական, հոգևոր: Օրենքի կիրառման դաշտը ընդգրկում է բոլոր մշակութային արժեքները՝ հին ժամանակներից մինչև այսօր: Այնուհետև, օրենքի հոդված 2-ում փրվում է հուշարձանների փիպաբանությունը և բաժանումը: Հուշարձանների բաժանումը կատարվում է փիպաբանորեն, այսինքն՝ դրանք բաժանված են շարժականի ու անշարժի և փարբերվում են ըստ պաշտպանվածության աստիճանի՝ կախված այն ժամանակաշրջանից, որին դրանք դասվում են:

Մշակութային ժառանգության բոլոր օբյեկտները՝ շարժական կամ անշարժ /բարիքներ՝ ըստ հունական պերմինաբանության/, մինչև 1830թ. վերաբերում են հնության հուշարձաններին և գտնվում են օրենքի պաշտպանության փակ: 1830թ.-ից հետո թվարկվող մշակութային ժառանգության բոլոր օբյեկտները ընկնում են օրենքի ներգործության փակ միայն այն պատճառով, որ դրանք իրենցից ներկայացնում են պատմա-գեղարվեստական կամ մշակութային արժեք, և եթե, ելնելով վերոհիշյալից, դրանք դասվել են հուշարձանների շարքին: Այս դրույթներով ապահովվող պաշտպանությունը փարածվում է և՛ եզակի բարիքների, և՛ /հավաքածուների/ շարքի վրա,

¹⁵⁹ Տե՛ս LAW 3028/2002 On the Protection of Antiquities and Cultural Heritage, (http://www.wipo.int/clea/docs_new/pdf/en/gr/228en.pdf), available at 23.09.2010:

որոնք և՛ առանձին գոյություն ունեն, և՛ համալիրի մի մասն են:¹⁶⁰

Օրենքի երկրորդ բաժինը նվիրված է մշակութային ժառանգության պահպանության կառավարմանը: Նույնաստիճանում, ինչպես արդեն ասվեց, մշակութային ժառանգության պահպանության կառավարումը իրականացվում է Մշակույթի նախարարության կողմից: Նրան կից գործում է Խորհուրդը, որի մեջ մտնում են գիտնականներ, թանգարանագետներ, հասարակության ներկայացուցիչներ: Այս Խորհրդի որոշումները ունեն կարևոր նշանակություն և կարող են ազդել շատ օրենսդրական նախաձեռնությունների և գործողությունների վրա՝ մշակութային ժառանգության պահպանության բնագավառում: Կառավարման տեղական մարմինները կոչվում են Էֆորիա: Դրանց փարածքների մեջ մտնում են մի քանի նոր վարչական միավորներ: Դրանք իրականացնում են պեղումներ և տալիս են համաձայնության թույլտվություն շինարարական ու հողային աշխատանքներ իրականացնելու համար: Թանգարանները ենթարկվում են Մշակույթի նախարարությանը կից թանգարանների Խորհրդին:¹⁶¹

Օրենքի 4-րդ հոդվածում խոսվում է մշակութային ժառանգության օբյեկտների պեղական գրանցման մասին: Դրանով զբաղվում է Մշակույթի նախարարությանը կից հուշարձանների Ազգային արխիվը, որն էլ սահմանում է դրա վարման և նոր հուշարձանների մուտքագրման կարգը: Տվյալ օրենքում բոլորովին մանրամասնեցված չի շարժական հուշարձանների սեփականության իրավունքի խնդիրը՝ չնայած դրա գոյությանը: Այս խնդիրը հոդված 3-ում քննարկվում է երկու անգամ՝ կապված անշարժ օբյեկտների հետ, և հոդված 23-ում՝ կապված շարժական օբյեկտների հետ: Պեղումների ժամանակ հայտնաբերված, մինչև 1453թ.և ավելի ուշ շրջանին պատկանող

¹⁶⁰ Տե՛ս LAW 3028/2002 On the Protection of Antiquities and Cultural Heritage, ([http://www.underwaterarchaeology.gr/Framework/AntiquitiesLaw\(english\).pdf](http://www.underwaterarchaeology.gr/Framework/AntiquitiesLaw(english).pdf)), available at 23.09.2010:

¹⁶¹ Տե՛ս հղում 160:

անշարժ հուշարձանները պարկանում են պեպոթյանը, մյուսները՝ հապուկ վճռով, որոշմամբ կարող են փոխանցվել մասնավոր փիրապեպման: Նույնիսկ հինավուրց շարժական հուշարձանները /մինչև 1453թ./ կարող են փոխանցվել մասնավոր փիրապեպման՝ բացառությամբ կարևոր պարմական կամ այլ արժեք ունեցողների: Դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ է Կառավարության թույլտվությունը: Գնորդի անձի նկարմամբ ներկայացվում են խիստ պահանջներ: Օրինակ՝ նա չպեպք է դարված լինի, պեպք է ունակ լինի ապահովել անվտանգությունը և այլն: Տվյալ օրենքում առանձին դիրարկվում են շարժական /հողվածներ 27-30/ և անշարժ /հողվածներ 9-11 և 40-42/ հուշարձանների պահպանման բոլոր միջոցները: Բացի դրանից, օրենքի 31-րդ և 32-րդ հողվածները առանձին դիրարկում են հավաքորդների և հնությունների առևտրով զբաղվողների իրավական կարգավիճակը: Նրանց ժողովները և գործունեությունը վերահսկվում են պեպոթյան կողմից, նրանք իրավունք չունեն գնել կամ վաճառել անօրինական պեղումներից հայրնաբերված առարկաներ /հողված 31-ի 3-րդ կեպ և հողված 32, 6-րդ կեպ/¹⁶²

Օրենքի հողված 46 և 47 հողվածները դիրարկում են մշակութային ժառանգության պահպանության ֆինանսավորման խնդիրները: Այն վերաբերում է մշակութային ժառանգության պահպանության ֆինանսավորման հարկային և այլ աղբյուրներին: Պահպանության հեպ կապված ծախսերը իրականացնում է ինչպես սեփականապեր պեպությունը, այնպես էլ մասնավոր սեփականապերը:

Օրենքի գլուխ 8-ում, 52-71 հողվածներում շար մանրամասնորեն դիրարկվում են խախտումների բոլոր պեսակները՝ և՛ գողությունը, և՛ անօրինական պեղումները, և՛ անօրինական արպահանումն ու ներմուծումը, ինչպես նաև խախտողի պարասխանապվությունը: 2002թ. ընդունված օրենքը կարգավորում է մշակութային ժառան-

162

Տե՛ս LAW 3028/2002 On the Protection of Antiquities and Cultural Heritage, (http://www.wipo.int/clea/docs_new/pdf/en/gr/gr228en.pdf), available at 23.09.2010:

գության պահպանության և կառավարման գրեթե բոլոր կողմերը: Օրենքում նաև հատուկ պայմաններ են սահմանված պարզևսպրումների համար, երբ պետությանն են հանձնում պետության ուշադրությունից դուրս մնացած արժեքավոր մշակութային արժեքները: Հատուկ իրավական պաշտպանության միջոցառումների համակարգ է նախատեսված արքայազաններից երկիր ներմուծված մշակութային արժեքների համար, ինչպես նաև երկրից ժամանակավոր դուրս բերվող մշակութային օբյեկտների համար, որոնք տարվում են ցուցահանդեսների կամ գիտական հետազոտությունների: Անձնակազմի վարձատրության հետ կապված հարցերը նույնպես իրենց լուծումն են գտնում Կրթության օրենքի շրջանակներում: Բոլոր պետական և ոչ պետական թանգարանները ճանաչվում են պետության կողմից և պետք է համապատասխանեն ցուցադրության հատուկ չափանիշների՝ հնարավորություն տալով հասարակության համար մատչելի լինելուն, իսկ մասնավոր թանգարանները նաև պետության կողմից օժանդակություն ստանալու հնարավորություն ունեն:¹⁶³

2008թ. ընդունվեց Մշակույթի նախարարության շրջանակներում ստեղծված նոր օրենքը /3658/2008/ և այն բացառապես նվիրված է մշակութային արժեքների պաշտպանությանը անօրինական առևտրից: Օրենքը նաև նախատեսում է շարժական հուշարձանների սեփականության և փրակպետման իրավունքներին վերաբերող հարցերի հունական դատական հիմնարկների միջազգային իրավասությանը, ինչպես նախատեսված է մշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ ԵՄ օրենսդրություններում, միջազգային և եվրոպական կոնվենցիաներում, որտեղ Հունաստանը հանդիսանում է մասնակից երկիր:¹⁶⁴

Հունաստանը հանդիսանում է քրիստոնեության վերամիավորման և

¹⁶³ Տե՛ս հղում 162:

¹⁶⁴ Տե՛ս Main Antiquities Law: Law No. 3658/2008, (<http://www.law-archaeology.gr/Index.asp?C=136>), available at 26.09.2010:

գարգացման պսակ, և նրա փարածքում, ինչպես արդեն նշեցինք, գրնվում են շար ազգերի կրոնական ժառանգության հուշարձաններ, և հաշվի առնելով այն, որ եկեղեցին ներկա է քաղաքական և հասարակական կյանքի ամենափարբեր ասպեկտներում, զարմանալի չէ, որ կրոնական ժառանգությամբ զբաղվում է նաև Նունաստանի եկեղեցին: Եկեղեցին սրելոժել է քրիստոնեական հուշարձանների համար Նաբուկ Մինոդալ կոմիտե: Կոմիտեի նպատակը պահպանված քրիստոնեական հուշարձանների ընդգրկումն է գրացուցակի մեջ և դասակարգումը Մուրբ Մեթրոպոլիայից մինչև Նունական եկեղեցի: Կոմիտեն նաև ակտիվ կերպով համագործակցում է Մշակույթի նախարարության բյուզանդական և հեթոքոյանդական հնությունների վարչության հետ:¹⁶⁵

Ինչպես արդեն նշվել է, մշակույթի ու արվեստի ոլորտներում ընդհանուր քաղաքականության պատասխանատվությունը ընկած է Մշակույթի նախարարության վրա: Մշակույթի նախարարության պարտականությունների կանոնադրությունը ներառում է նաև մշակութային ժառանգության պաշտպանությունը և արժեքների բարձրացումը: Նախարարության պարտավորությունները սահմանվում են կազմակերպչական ստատուսներում՝ ներառելով մշակութային պաշտպանությունն ու պահպանումը /ներառյալ հնագիտություն ու ժողովրդական մշակույթ/, օրենսդրության պատրաստումը, պատմական արժեքների հեղինակային իրավունքի պաշտպանությունը, միջազգային մշակութային համագործակցությունը և մշակութային կրթությունը:¹⁶⁶ Այն իր քաղաքականությունը իրականացնում է բազմաթիվ ռեզիոնալ կառույցների հետ համատեղ: Նունաստանի Մշակույթի նախարարությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային արտահայտման բազմազանության պաշտպանության կոնվենցիայի

¹⁶⁵ Տե՛ս (<http://exchanges.state.gov/media/office-of-policy-and-evaluation/chc/pdfs/grpubsum0810.pdf>), available at 28.09.2010:

¹⁶⁶ Տե՛ս Ministry of Culture and Tourism, (http://www.culture.gr/war/index_en.jsp), available at 28.09.2010:

պաշտոնական պարասխանատուն է:

Բազմաթիվ այլ նախարարություններ և կառավարական մարմիններ ևս զբաղվում են մշակութային ժառանգության պահպանության փարբեր հարցերով: Օրինակ՝ Ղունասարանի Ղասարակական կարգի նախարարությունը պայքարում է հնությունների անօրինական ներմուծման, առևտրի դեմ, ի օգուտ Ղունասարանի մշակութային ժառանգության պահպանության: Այն զբաղվում է նաև այլ պետությունների մշակութային ժառանգության և մշակութային արժեքների պահպանությամբ, որոնք գտնվում են Ղունասարանի տարածքում կամ ներմուծված են Ղունասարան անօրինական ճանապարհով:

Ղունասարանի մոտեցումը միջազգային համագործակցությանը բխում է երկրի պարմության ու ժառանգության, նրա աշխարհագրական դիրքի ու աշխարհաքաղաքական և տարածաշրջանային հարաբերություններից: Ղունասարանը սերտորեն համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ: Այն հանդիսանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության անդամ և մշակութային ոլորտի բազմաթիվ համաձայնագրերի և հռչակագրերի մասնակից: Ղունասարանը նաև ֆրանկոֆոնիայի կազմակերպության անդամ է: Ըստ Ֆրանսիայի և Ղունասարանի միջև հաստատված սերտ մշակութային կապի՝ XIX դարի վերջից Ղունասարանը սկսել է կերպով մասնակցում է մշակութային համագործակցության ծրագրերին և վերջին տասնամյակների ընթացքում միջազգային մշակութային համագործակցության քաղաքականության մեջ սկսել է խաղում, քանի որ հանդիսանում է մշակութային քաղաքականության հարցերի գծով միջկառավարական Միջազգային ցանցի հիմնադիրներից մեկը /INJEP/:

Ղունասարանը հետևում է խառը մշակութային քաղաքականության ձևաչափին և անում է ամեն ինչ մշակութային ժառանգության պահպանման, նորարարության և մշակույթի զարգացման համար:

ՎԵՐՋԱԲԱՆ

Անփոփելիով վերը նշված հեղափոխությունը, կարելի է եզրակացնել, որ պարմամշակութային արժեքների իրավական պաշտպանությունը կարևոր բնույթ է կրում ամբողջ աշխարհում: Այսօր մշակութային արժեքների իրավական պաշտպանությանը նվիրված են բազմաթիվ նորմատիվ իրավական ակտեր՝ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական բնույթի: Միջազգային իրավունքում պաշտպանության օբյեկտ են հանդիսանում բոլոր մշակութային արժեքներն՝ այս բառի ամենալայն իմաստով: Ինչպես տեսանք, ամեն մի իրավական փաստաթուղթ, ելնելով իր կարգավորման առարկայից, փալիս է «պարմամշակութային արժեքների» իր սահմանումը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային իրավական ակտերի վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ «մշակութային արժեքներ» և «պարմամշակութային ժառանգություն» հասկացությունները միանշանակ են և համափոխարինելի՝ ընդհանուր առմամբ միջազգային իրավունքի շրջանակներում: Միջազգային ակտերից մի քանիսում խոսվում է համաշխարհային մշակութային ժառանգության մասին, իսկ մյուսներում՝ ժողովուրդների մշակութային ժառանգության մասին: Գործող միջազգային իրավական փաստաթղթերում «միջազգային ժառանգության» տակ հասկացվում են մշակույթի այն օբյեկտները, որոնք հարույլ արժեք ունեն հնէաբանության, պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից: Իսկ «մշակութային արժեքների» տակ հասկացվում են այն շարժական և անշարժ օբյեկտները, որոնք ունեն կարևոր նշանակություն յուրաքանչյուր երկրի մշակութային հարստության համար /արվեստի, ճարտարապետության ստեղծագործություններ, ձեռագրեր, գրքեր, արվեստի, պարմության, հնէաբա-

նության Կրեանկյունից արժեք ներկայացնող այլ առարկաներ, գիտական հավաքածուներ և այլն/։ Ընդհանուր առմամբ, վերը նշված հասկացությունները պետք է համարել օրինակելի, գործնական բնույթ ունեցող։ Այսպիսի մեկնաբանությամբ, երկու հասկացությունն էլ շար ընդհանրություններ ունեն, որը թույլ է տալիս խոսել դրանց՝ որպես նույն հասկացությունների մասին։

Դիտարկելով մշակութային արժեքների պաշտպանության ազգային և միջազգային համակարգերը որպես նորմերի հարաբերականորեն ամբողջական համակցություն՝ պետք է նկատենք, որ խոսքը միևնույն օբյեկտների մասին է, սակայն՝ տարբեր Կրեանկյուններից։ Առաջին դեպքում միջազգային իրավունքի Կրեանկյունից կիզակետում է գտնվում ընդհանուր մարդկային ժառանգության ըմբռնումը, իսկ երկրորդ դեպքում, ելնելով ազգային իրավունքի Կրեանկյունից՝ ժողովուրդների մշակութային ժառանգությունն է։ Մեջբերված բոլոր միջազգային իրավական աղբյուրները բխում են պետությունների ինքնիշխանության սկզբունքից։ Դրանք բոլորը այս կամ այն կերպ վերաբերում են պետության այն չափանիշների սահմանման իրավասությանը, որոնցով նա իր տարածքում գտնվող մշակութային արժեքները դասում է համաշխարհային մշակութային ժառանգությանը։ Ընդ որում, պետք է համաձայնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի այն կարծիքին, որ յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում որևէ օբյեկտի՝ իր մշակութային արժեքների խմբին դասելու չափանիշները։ Անդրադառնալով հետազոտությունում վերը նշված պատմամշակութային ժառանգության մասին տարբեր Կոմվենցիաների և Արձանագրությունների կիրառման արդյունավետությանը, կարելի է ասել, որ այն կախված է պետությունների մշակութային արժեքների պաշտպանության ոլորտին ուղղված միջազգային համագործակցությունից։ Մշակութային արժեքների պաշտպանությունը հիմնված է երկու հիմնարար սկզբունքների վրա։ Առաջինը՝ յուրաքանչյուր ազգի մշակութային արժեքներին հասցրած վնասը վնաս է ամբողջ մարդ-

կության մշակութային ժառանգությանը, քանի որ յուրաքանչյուր ազգ իր ներդրումն է կատարում համաշխարհային մշակույթի մեջ, և երկրորդը՝ մշակութային արժեքների պաշտպանությունը պետք է կազմակերպվի ոչ միայն պատերազմական շրջանում, այլ նաև խաղաղ ժամանակաշրջանում՝ ազգային և միջազգային համապատասխան միջոցներ ձեռնարկելով: Նամաձայն միջազգային իրավական փաստաթղթերի՝ մշակութային արժեքների պաշտպանությունը կարելի է փարանջարել երկու հիմնական տեսակների: Առաջինը՝ ընդհանուր պաշտպանությունը, որը փարածվում է բոլոր արժեքների վրա, և երկրորդը՝ հատուկ պաշտպանությունը, որը վերաբերում է հատուկ նշանակություն ունեցող շարժական և անշարժ մշակութային արժեքներին: Ընդհանուր պաշտպանությունը իր հերթին կարելի է բաժանել երկու հիմնական տեսակների՝ պահպանություն և հարգանք: Տարբերությունն այն է, որ մշակութային արժեքների պահպանությունը իրականացվում է դեռ խաղաղ ժամանակաշրջանում, իսկ դրանց հանդեպ հարգանքը տեղ է գտնում նաև պատերազմի ժամանակ: Ավելին, պահպանությունը ենթադրում է գործողություն /միջոցների ձեռնարկում/, իսկ հարգանքը՝ գործողությունների զգալում: Իսկ հատուկ պաշտպանությունը պաշտպանության բարձր մակարդակն է, որը փարածվում է հակառակորդ կողմերի ունեցած անձեռնմխելի մշակութային արժեքների վրա: Միջազգային մշակութային արժեքների պաշտպանության գծով կարևոր նշանակություն է փրվում նաև միջազգային համագործակցությանը, քանի որ այն անհրաժեշտ է փորձի փոխանակման, անհրաժեշտ օգնության հարկացման, մշակութային արժեքների ոչնչացման կանխարգելման և բռնագրավման դեմ պայքարի համար:

Մշակութային արժեքների պահպանությունը միջազգային մակարդակով իրականացվում է ժամանակակից միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների հիման վրա: Միջազգային իրավունքի համաձայն, ցանկացած ինքնիշխան պետություն հանդի-

սանում է հրապարակային իշխանության կրող: Այս հատկության ուժով այդ պետությունն ընդունում է պարպադիր բնույթի վարքագծի կանոններ՝ ամենապարբեր ոլորտներում ձևավորելով համապարասխան իրավական ռեժիմ: Բացառություն չի կազմում նաև պարամաշակութային ժառանգության պաշտպանության ոլորտը: Պետությունների մեծամասնությանը բնորոշ է պարամաշակութային արժեքների պաշտպանության ոլորտը կարգավորող արդյունավետ օրենսդրության առկայությունը: Գործում են պաշտամաշակութային ժառանգության մասին հիմնական օրենքներ, իրականացվում են պարամաշակութային ժառանգության պահպանման դաշնային, քարածաշրջանային և տեղական ծրագրեր:

Ուսումնասիրելով եվրոպական մի շարք երկրների օրենսդրությունները, կարելի է ընդգծել «պարմության և մշակույթի հուշարձան» հասկացությունը սահմանելու երկու հիմնական մոտեցում: Մի շարք երկրներում առարկան «պարմության և մշակույթի հուշարձան» ճանաչելու համար բավական է հատուկ պարմական, մշակութային, գիտական կամ այլ որակների առկայությունը, որոնք թույլ են տալիս այն դիտարկել որպես ազգային ժառանգության հատուկ մաս /Իտալիա, Գերմանիա/: Այլ երկրներում /Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ավստրիա/ «պարմության և մշակույթի հուշարձան» հասկացությունը ինքնին չունի հատուկ պահպանության իմաստ, և մինչև պահպանվող օբյեկտները ցանկի մեջ ընդգրկելը չի ենթադրվում դրանց վրա յուրահատուկ պետական պաշտպանության փարածում: Ներկաբար, այս կամ այն առարկայի «պարմության և մշակույթի հուշարձան» խմբի իրավական պաշտպանության համար որոշիչ գործոն է դրա ընդգրկումը հատուկ ռեեստրում/ցուցակում/ ձեռնահաս մարմինների որոշմամբ: Պարմության և մշակույթի հուշարձանների համակարգման ռեեստրների, գրացուցակների վարումը իրականացվում է բոլոր երկրներում: Նաջող կերպով լուծվում են նաև հնէագիտական հուշարձանների պահպանության հարցերը,

որի պայմաններից մեկը մասնավոր սեփականության զարգացած ինստիտուտն է: Շատ երկրներում պայմանաշակութային ժառանգության պաշտպանության հիմնախնդիրը բարձրացված է նաև Սահմանադրության մակարդակի: Կան նաև երկրներ, որոնք ընդունել են մի շարք օրենսդրական ակտեր՝ ուղղված պայմանաշակութային արժեքների իրավական պաշտպանությանը:

Եվրոպայում պայմանաշակութային ժառանգության իրավական կարգավորումը իրականացվում է ոչ միայն ներպետական, այսինքն՝ առանձին պետությունների մակարդակում, այլ նաև վերպետական մակարդակում: Որպես եվրոպական պետությունների վերպետական համագործակցության մակարդակ հանդիսանում է Եվրոպական միությունը, որին անդամակցող պետությունները, ամենաբազմաբնույթ ոլորտներում իրավասությունների փոխանցմանը զուգահեռ, իրավասություններ են փոխանցել նաև պայմանաշակութային ժառանգության ոլորտում: Այդ իրավասությունները վերաբերում են Եվրոպական միության փորձից պայմանաշակութային արժեքների արտահանման և այդ փորձից անօրինական կերպով դուրս բերված պայմանաշակութային արժեքները Եվրոպական միության փորձը վերադարձնելու հետ կապված հարաբերությունների կարգավորմանը: Դրանք կարգավորելու նպատակով Եվրոպական միության մակարդակում ձևավորվել է համապատասխան օրենսդրական բազա, որի հետևանքով Եվրոպական միության փորձից պայմանաշակութային արժեքների արտահանման և այդ փորձից անօրինական կերպով դուրս բերված պայմանաշակութային արժեքները Եվրոպական միության փորձը վերադարձնելու հարցերի վերաբերյալ Եվրոպական միությանն անդամակցող բոլոր 27 պետություններում սահմանվել է միևնույն իրավական ռեժիմը: Սա նշանակում է, որ ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ հայկական պայմանաշակութային ժառանգությանն առնչվող վերը նշված հարցերի կարգավորման հետ կապված, գործում են նույն օրենսդրական կարգավորումները: Այդ

կարգավորումները բավականին խիստ են և միավաճ են պաշտպանելու Երոպական միության փարածքում գտնվող պարամաշակութային արժեքների ամբողջականությունն ու նվազագույնի հասցնելու դրանց ներքին և արտաքին փեղաշարժի հնարավորությունը:

Պեքը է արձանագրենք, որ սույն հեփազոփոթյան շրջանակներում, որպես ուսումնասիրության առարկա դարձած բոլոր երկրներում հայկական պարամաշակութային ժառանգության վերաբերյալ հարուկ իրավական ռեժիմ գոյություն չունի: Տայկական պարամաշակութային ժառանգության իրավական վիճակի վրա փարածվում է յուրաքանչյուր երկրում պարամաշակութային ժառանգության վերաբերյալ առկա ընդհանուր իրավական ռեժիմը:

Իփալիայում պարամաշակութային ժառանգության իրավական կարգավորման հեփ կապված հարցերը գտնվում են բարձր հիմքերի վրա: Այդ մասին են վկայում Իփալիայում առկա բազմաթիվ օրենսդրական ակտերը՝ ուղղված պարամաշակութային ժառանգության իրավական վիճակի սահմանմանը: Իփալիայում ինչպես ընդհանուր, այնպես էլ հայկական պարամաշակութային ժառանգության վերաբերյալ դրսևորվում է բավականին խիստ մոփեցում, քանի որ գործող օրենսդրությունն այդ ժառանգությունը ամուր հանգույցներով կապում է իփալական պեփոթյան և ժողովրդի հեփ՝ նվազագույնի հասցնելով նրանց միջև այդ կապի խզումը: Այդ փոխկապվածությունը առաջին հերթին արփահայրվում է Իփալիայում «պարամաշակութային ժառանգություն» հասկացությունը օրենսդրորեն լայն մեկնաբանելու և դրանում ամենաբազմապիսի պարամաշակութային արժեքներ ներառելու մեջ:

Բացի այդ, հիշյալ փոխկապվածությունն ամրապնդող լրացուցիչ գործոն է նաև այն հանգամանքը, որ հայկական պարամաշակութային արժեքները Իփալիայից արփահանելու, դրանք օփարելու, փեղաշարժելու և այլ հարաբերությունների կապակցությամբ գոր-

ծում են խիստ օրենսդրական կարգավորումներ և առկա է ուժեղ պե-
րական վերահսկողություն:

Սակայն միևնույն ժամանակ պետք է արձանագրենք, որ Իտալի-
այում առկա է հայկական պարամամշակութային ժառանգության
պաշտպանության բավականին բարենպաստ օրենսդրական միջա-
վայր, որը ամենապարբեր պարասխանարվության րեսակների
առաջացման սպառնալիքով և պերական վերահսկողական մեխա-
նիզմների սահմանման միջոցով միտված է կանխել ինչպես ընդհա-
նուր, այնպես էլ հայկական պարամամշակութային ժառանգության
դեմ իրականացվող ապօրինի ուրնձգությունները:

Նայկական պարամամշակութային ժառանգության ինքնարիպ
իրավական կարգավորում գոյություն ունի Ֆրանսիայում: Այս երկ-
րում հայկական պարամամշակութային ժառանգության իրավական
վիճակը աչքի է ընկնում մի շարք առանձնահատկություններով: Նախ
այդ առանձնահատկություններից մեկն այն է, որ Ֆրանսիայում
առավել բարենպաստ են այդ ժառանգության բաղադրարար հան-
դիսացող պարամամշակութային արժեքների արտահանման հե-
ր կապված գոյություն ունեցող օրենսդրական կարգավորումները:
Ֆրանսիայի օրենսդրությունը, ի տարբերություն մի շարք երկրների,
չի արգելում պարամամշակութային արժեքների ոչ ժամանակավոր, ոչ
էլ մշտական արտահանումը: Արտահանման հե-ր կապված հիմնա-
կան պահանջը վերաբերում է այն բանին, որ արտահանվող պար-
մամշակութային արժեքը չլինի ազգային հարստություն:

Ֆրանսիայում հայկական պարամամշակութային ժառանգության
իրավական վիճակի մյուս առանձնահատկությունը ազգային հարս-
տություն համարվող պարամամշակութային արժեքների արտահան-
ման դիմումը մերժելու դեպքում մինչև նոր դիմում ներկայացնելու
իրավունքի առաջացման համար սահմանված ժամկետի լրանալը
ընկած ժամանակահատվածում պերության կողմից այն գնելու
նախապարվության իրավունքի առկայությունն է: Այսպիսի

օրենսդրական կարգավորումը հակասում է սեփականության իրավունքին, քանի որ այն պարտադրում է պարամամշակութային արժեքի սեփականությունը իր կամքին հակառակ օտարել պարամամշակութային արժեքը: Ընդ որում, Ֆրանսիայի օրենսդրությունը չի նախատեսում ոչ ազգային հարստություն համարվող պարամամշակութային արժեքը վերցնելու մասին պետության որոշման, ոչ էլ փոխհատուցման գնի դարական վերանայման հնարավորություն: Նման օրենսդրական կարգավորումը կարելի էր ընդունելի համարել միայն այն դեպքում, երբ պետության կողմից գնման նախապարվության իրավունքը իրականացվեր ոչ թե արտահանվող, այլ օտարվող պարամամշակութային արժեքի նկատմամբ, ինչպես դա կարարվում է Իտալիայում:

Նայկական պարամամշակութային ժառանգության իրավական վիճակը առանձնահատուկ է նաև պարամամշակութային արժեքները քանդելու, ոչնչացնելու, վնասելու, արտահանման կանոնները խախտելու համար առաջացող պարասխանաբարվությամբ: Այդ առանձնահատկությունը արտահայտվում է այն բանում, որ վերը նշված իրավախախտումները կարարելու համար Ֆրանսիայում առաջացող ֆինանսական պարասխանաբարվությունը, որոշ երկրների հետ համեմատած (օրինակ՝ Իտալիա), ավելի խիստ է, իսկ իրավախախտի ֆիզիկական պարասխանաբարվության առումով՝ ավելի մեղմ:

Պարամամշակութային հարուստ ժառանգության օրրան է հանդիսանում նաև Կիպրոսը: Այս պետությունում դեռևս 1930-ական թթ.-ից գոյություն ունի պարամամշակութային ժառանգության պահպանության և պաշտպանության նպարակառուղված քաղաքականություն: Նայկական պարամամշակութային ժառանգությունը, անմասն չմնալով այդ քաղաքականությունից՝ ենթարկվել և շարունակում է ենթարկվել այդ քաղաքականության իրականացման իրավական բովանդակությունն արտահայտող օրենսդրական կարգավորումներին: Չնայած այդ օրենսդրական կարգավորումները ընդունում

են պարամաշակութային արժեքների կապակցությամբ մասնավոր սեփականության գոյությունը, այնուամենայնիվ, դրանք խիստ օրենսդրական կանոնների և պերական վերահսկողության սահմանման միջոցով սահմանափակում են պարամաշակութային արժեքի նկարմամբ սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող փիրապերման, փնօրինման և օգրագործման իրավունքների ամբողջ ծավալով իրականացումը: Որպես սահմանափակումներ, նախադեսված են պարամաշակութային արժեքը օրարելիս պերության կողմից այն ձեռք բերելու նախապարվության իրավունքը, դրանց օրարումը պերության կողմից ընդհանրապես արգելելու իրավունքը, դրանց արփահանման հնարավորությունը միայն խիստ որոշակի նպարակներով և պերական իրավասու մարմնի կողմից փրված համապարասխան թույլփության առկայության դեպքում և այլն:

Միննուն ժամանակ պերք է նկարենք, որի Կիպոոսում պարմաշակութային ժառանգության պաշարպանությանն են նպասարում պարմաշակութային արժեքները և հուշարձանները ոչնչացնելու, փչացնելու կամ եղձանելու, ինչպես նաև դրանց վրա գրելու, նկարելու, փորագրելու կամ ապօրինի արփահանելու համար սահմանված պարասխանարվության խիստ միջոցները:

Մշակույթի բազմազան և հարուստ օջախ է հանդիսանում Ավսարրիան: Այնփեղ առկա է նաև հայկական պարմաշակութային հարուստ ժառանգություն: Ավսարրիայում են գրնվում այնպիսի հայկական պարմաշակութային արժեքներ, ինչպիսիք են Վիեննայի Միսիթարյանների միաբանությունը /Վիեննա/ իր հարուստ և անկրկնելի ժառանգությամբ և Մուրբ Ղոփսիմն հայկական առաքելական եկեղեցին /Վիեննա/: Ինչպես և Ղունասփանում, Ավսարրիայում էլ առանձին մոփեցում չկա հայկական պարմաշակութային արժեքներին, դրանք նույնպես ընդհանուր օրենսդրության կարգավորման առարկա են հանդիսանում: Ամփոփելով Ավսարրիայի պարմաշա-

կութային արժեքների իրավական ռեժիմը՝ կարելի է հանգել հետևյալ հետևությունների՝

- հայկական ժառանգությունը միջազգային նշանակության հարստություն է, որը մեծ նշանակություն և արժեք ունի Ավստրիայի իշխանությունների համար,
- հայկական պարամամշակութային ժառանգությունը դիտարկվում է որպես Ավստրիայի ազգային մշակութային հարստություն,
- ըստ «Մշակութային հուշարձանների պահպանության մասին դաշնային ակտի», մշակութային արժեքները սահմանվում են որպես մարդու սրբազորական գործունեության շարժական կամ անշարժ գույք, որոնք պարամական, գեղարվեստական կամ այլ մշակութային արժեք են ներկայացնում, և որոնք պետք է պահպանվեն՝ ելնելով հասարակական /ազգային/ շահերից,
- հուշարձանների պահպանությունը մասամբ գրնվում է պետության պարասխանավության ներքո: Վերը նշված Ակտով արգելվում է նաև մշակութային, պարամական, գեղարվեստական արժեքների արտահանումը և վաճառքը, բացառությամբ այն դեպքերի, երբ սրբազորը դեռ կենդանի է կամ մահացել է վերջին 20 փարվա ընթացքում: Մշակութային արժեքի արտահանման համար անհրաժեշտ է նաև հարուկ թույլություն, եթե անգամ այն արտահանվում է ժամանակավորապես, և այդ թույլությունը փրամադրում է պետության համապարասխան գերապեսչությունը:
- ավստրիական օրենսդրությունը սահմանում է նաև, որ մշակութային հուշարձանի ձևափոխումը, վնասումը կամ արտահանումը արգելված է առանց դաշնային գրասենյակի թույլություն: Այս դրույթը փարածվում է նաև մասնավոր սեփականության հուշարձանների վրա.

- 1999թ.-ին «Նուշարձանների պահպանման մասին» ակտի փոփոխությունների համաձայն, հուշարձանները պետք է 2010թ.-ից հաշվառվեն հատուկ նոր ցուցակում, սակայն հայկական պարամամշակութային արժեքները դեռ հաշվառված չեն այդ ցուցակում:

- հաշվառումից և գրանցումից հետո հայկական պարամամշակութային արժեքները նոր միայն կհամարվեն Ավստրիայի ազգային հարստության մի մաս, սակայն Ավստրիայի իշխանությունները այսօր էլ բավականին մեծ ուշադրություն և գումար են հատկացնում դրանց պահպանման համար:

Ուսումնասիրելով Նունասպանի և Ավստրիայի պարամամշակութային օրենսդրությունը և փարվող մշակութային քաղաքականությունը՝ պարզ է դառնում, որ հայկական պարամամշակութային հուշարձանները կազմում են այդ երկրների պարամամշակութային ժառանգության մի մասը, և դրանց հետ կապված իրավական հարցերը կարգավորվում են փոխադրված երկրի օրենսդրությամբ:

Ինչպես արդեն նշվել է, Պորտուգալիան հարուստ և բազմազան մշակույթ ունեցող երկիր է, որի մշակութային պատկերը ձևավորել են փարբեր ժողովուրդներ: Պորտուգալիան, ի փարբերություն շար եվրոպական պետությունների, պարմության և մշակույթի հուշարձանների պահպանության հետ կապված հարցերը կարգավորում է նաև սահմանադրական մակարդակով: Մակայն գոյություն ունի նաև Պորտուգալիայի մշակութային ժառանգության պաշտպանության մասին գլխավոր օրենսդրությունը՝ օրենք «Մշակութային ժառանգության պահպանման և հաշվառման մասին»: Ամփոփելով փոխադրված երկրի դրոյթները, կարելի է կարարել հետևություններ.

- բոլոր այն առարկանները, որոնք վկայում են քաղաքակրթության և մշակույթի զարգացման մասին, ենթակա են հատուկ պաշտպանության.

- պաշտմամշակութային հուշարձանները չեն կարող արտահանվել Պորտուգալիայի փարածքից առանց փորձագիտական թույլտվության, որը փալիս է Մշակույթի նախարարությունը.
- պաշտպանություն փրամադրվում է բոլոր մշակութային օբյեկտներին, անկախ դրանց արժեքից.
- մշակութային արժեքների իրավական պաշտպանությունը իրականացվում է դասակարգման և հաշվառման միջոցով: Դասակարգման և հաշվառման ենթակա են պաշտպանության և մշակույթի հուշարձանները, որոնց սեփականատերերը հանդիսանում են ինչպես պետությունը, այնպես էլ անհատները.
- դասակարգված պաշտմամշակութային հուշարձանների արտահանումը իրականացվում է միայն մշակութային ժառանգությանը զբաղվող պետական հիմնարկությունների թույլտվությամբ.
- մշակութային արժեքների հետ կապված հանցագործությունները կարգավորվում են Քրեական օրենսգրքի դրույթներով.
- մշակութային ժառանգության առարկաների՝ վաճառքի նպատակով արտահանման հայտի ներկայացումը իրականացվում է պետության թույլտվությամբ.

Պորտուգալիայի օրենսդրությանը համապատասխան, մշակութային ժառանգության յուրաքանչյուր օբյեկտ իրենից ներկայացնում է Պորտուգալիայի ժողովրդի համար բացառիկ արժեք և հանդիսանում է համաշխարհային ժառանգության անբաժանելի մաս: Մշակութային ժառանգության օբյեկտները ենթակա են պարտադիր պահպանության և հանդիսանում են անշարժ գույքի հատուկ տեսակ, որի վերաբերյալ սահմանվում են փիրապետման, օգտագործման և փնօրինման իրավունքի իրականացման առանձնահատկությունները:

Ժամանակակից Նունասփանի փարածքում, ինչպես նշվեց հետազոտությունում, կան փաստը հայկական եկեղեցիներ, որոնցից չորսը

գտնվում են Աթենքում, իսկ մյուս վեցը՝ Նյուսիսային Նունասպանում /Մալոնիկ, Կավալա, Քսանթի, Կոմոպինի, Ալեքսանդրապոլիս/: Նշած հասարակությունները ոչ միայն իրենք են հանդիսանում անգնահատելի պարամամշակութային նշանակություն ունեցող կառույցներ, այլ նաև դրանցում պահվող բազմաթիվ, պարամամշակութային մեծ արժեք ներկայացնող առարկաները: Այն իր ամբողջության մեջ կազմում է Նունասպանի հայկական պարամամշակութային ժառանգությունը և հանդիսանում է Նունասպանի պարամամշակութային ժառանգության անբաժանելի մաս: Նունասպանի կառավարության քաղաքական փաստաթղթերում «մշակութային ժառանգություն» հասկացություն գոյություն չունի: Նունասպանի սահմանադրությունը, սակայն, անուղղակի հղումներ է կատարում դրա վերաբերյալ: Սահմանադրության հոդված 24-ի կերպ 1-ը նախատեսում է, որ երկրի մշակութային ժառանգության պաշտպանությունը չի կարող վստահվել մասնավոր նախաձեռնության, այն հանդիսանում է պետության իրավունք և պարտականություն: «Մշակութային ժառանգության պահպանության մասին» Նունասպանի Նանրապետության 3028/2002 օրենքը ապահովում է Նունասպանի փարածքում գտնվող հունական և ոչ հունական մշակութային ժառանգության ամբողջական պաշտպանությունն ու պահպանումը: Ուսումնասիրելով Նունասպանի օրենսդրությունը պարամամշակութային արժեքների վերաբերյալ, կարելի է կատարել սույն հետևությունները՝

- Նունասպանում բոլոր հնությունները համարվում են ազգային հարսություն և պարկանում են հույներին, և բոլոր ավերակները կամ այլ հնությունները, որոնք գտնվում են ազգային հողի վրա կամ հողի տակ, կամ ծովի հարակին, հանդիսանում են պետության սեփականություն: Դա վերաբերվում է նաև հայկական պարամամշակութային արժեքներին,
- Նունասպանում մինչև 1453թ. և ավելի ուշ շրջանի պեղումների ժամանակ հայրնաբերված անշարժ հուշարձանները պար-

կանում են պեպոլոյանը, մյուսները, հապուկ որոշմամբ, կարող են փոխանցվել մասնավոր փիրապետման: Նույնիսկ հինավուրց շարժական հուշարձանները /մինչև 1453թ./ կարող են փոխանցվել մասնավոր փիրապետման՝ բացառությամբ կարևոր պատմական կամ այլ արժեք ունեցողների: Դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ է Կառավարության թույլ-տրվությունը,

- պատմամշակութային արժեքների պահպանության հետ կապված ծախսերը իրականացնում են սեփականատեր պետությունը և մասնավոր սեփականատերերը,
- մշակութային ժառանգության օբյեկտները ենթարկվում են պետական գրանցման, որով զբաղվում է Մշակույթի նախարարությանը կից Նուշարձանների ազգային արխիվը, որն էլ սահմանում է դրա վարման և նոր հուշարձանների մուտքագրման կարգը: Նայկական պատմամշակութային արժեքները դեռ մուտքագրված չեն տվյալ գրանցամատյանում, ինչպես արդեն նշվել է, մշակույթի ու արվեստի ոլորտներում ընդհանուր քաղաքականության պարասխանավորությունը ընկած է Մշակույթի նախարարության վրա, որն էլ իրականացնում է մշակութային պաշտպանությունն ու պահպանումը /ներառյալ հնագիտություն ու ժողովրդական մշակույթ/, օրենսդրության պատրաստումը, պատմական արժեքների հեղինակային իրավունքի պաշտպանությունը, զբաղվում է նաև միջազգային մշակութային համագործակցության հարցերով:

Summary

This research paper is dedicated to the analysis of the legal status of the Armenian cultural heritage abroad. For this aim the paper focuses on the investigation of the relevant legal framework of European countries such as Italy, France, Portugal, Cyprus, Austria and Greece. The findings revealed that the common legal regime of cultural heritage in the above mentioned countries is extended to that of the Armenian. The related laws are very rigid so they permit rather limited freedom of action in relation to the possession, usage and ownership of the cultural heritage. At the same time, state control on the cultural heritage of those countries is quite strict. In this research paper meticulous attention has been paid towards the investigation of the legal status of Armenian cultural heritage abroad from the perspective of international and European Union law. In this context the applicable international instruments and European Unions' legislative acts have been revealed and discussed.

Анотация

Данное исследование посвящено анализу юридического статуса Армянского культурного наследия за рубежом. Для осуществления данной цели, наша работа сосредоточивается на анализе соответствующих правовых норм таких стран как Италия, Франция, Португалия, Кипр, Австрия и Греция. Результаты исследования выявили, что общий правовой режим культурного наследия также распространяется и на армянское наследие. Соответствующие законы достаточно жесткие, и следовательно свобода действий касающихся обладания, использования и права собственности в отношении культурного наследия довольно-таки ограничены. В то же самое время, государственный контроль в отношении культурного наследия этих стран достаточно строг.

В данном исследовании с особенной тщательностью был рассмотрен правовой статус армянского культурного наследия за рубежом с точки зрения международного права и права Европейского Союза. В данном контексте были выявлены и рассмотрены применяемые международные инструменты и правовые акты Европейского Союза.

Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ
Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն Յ Ա Ն Կ
Գրքեր, հոդվածներ և մեկնադրություններ

1. Молчанов С.Н., «К вопросу об использовании в законодательстве понятий культурное наследие и культурное достояние», Екатеринбург, 1988г.,
2. Александрова Е., «Пакт Рериха и международная охрана памятников истории и культуры», София, 1987г.,
3. Соколов А.С., «История правовой защиты культурных ценностей», Изв.Рос.гос.пед.ун-та им. А. Герцена, 2009г., N 118,
4. Мартенс Ф., Восточная война и Брюссельская конференция 1874 — 1878 гг., 1879г.,
5. Александров Е., «Пакт Рериха и международная охрана памятников истории и культуры», София, 1978г.,
6. Шibaева В.А., «Пакт Рериха по сохранению культурных ценностей человечества», Краткий исторический очерк, Сборник, Рига, 1935 г.,
7. Франсуа Бюньон, «Право Женевы и право Гааги», ([http://www.icrc.org/web/rus/siterus0.nsf/html/irrc-841-844-001/\\$File/07_IRRC_844_Bugnion_RUS.pdf](http://www.icrc.org/web/rus/siterus0.nsf/html/irrc-841-844-001/$File/07_IRRC_844_Bugnion_RUS.pdf)),
8. Куцарова М., «Пакт Рериха—основа международно-правовой системы защиты ценностей культуры и ее будущее», Культура и время, 2005г. N4(18),
9. Павлов В.А., «Второй протокол к Гаагской конвенции о защите культурных ценностей в случае вооруженного конфликта» 1954г., Минск, 2003г.,
10. Ana Filipa Vrdoljak, International Law, Museums and the Return of Cultural Objects. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2008,
11. Ana Filipa Vrdoljak and Francesco Francioni, The Illicit Traffic of Cultural Objects in the Mediterranean, EU WP, AEL 2009/9,

12. Oliver Castendyk, Egbert Dommering, Alexander Scheuer, *European Media Law*, Kluwer Law International, Netherlands, 2008,
13. Ruth L. Edenbaum on slowtravelitaly, Venice, Islands in the Lagoon: The Armenian Monastery on San Lazzaro, 2004, ([F:\Italy\Slow Travel Italy - Venice, islands in the lagoon, San Lazzaro, Lido.htm](http://www.slowtravelitaly.com/italy/Slow_Travel_Italy_-_Venice_islands_in_the_lagoon_San_Lazzaro_Lido.htm)),
14. Europa-Summeries of EU legislation: Return of cultural objects unlawfully removed from the territory of an EU country/Summary, ([http:// europa.eu/legislation_summaries/culture/111017b_en.htm](http://europa.eu/legislation_summaries/culture/111017b_en.htm)),
15. Gerstenblith, Patty. *Art, Cultural Heritage, and the Law*, Carolina Academic Press, 2004,
16. Hoffman, Barbara, ed. *Art Cultural Heritage: Law, Policy & Practice*, Cambridge University Press, 2005,
17. Merryman, John Henry, *Thinking About the Elgin Marble: Critical Essays on Cultural Property, Art and Law*. The Hague, Boston: Kluwer Law International, 2000,
18. Greenfield, Jeannette. *The Return of Cultural Treasures*. Cambridge, New York: Cambridge University Press, 1996,
19. *Policy and Law in Heritage*, Edited by Robert Pickard, SPON Press, 2001,
20. Manlio Frigo, Cultural property v. cultural heritage: A "battle of concepts" in international law?, *RICR* June 2004, Vol. 86, N 854, pages 367-378,
21. John Henry Merryman, "The nation and the object", *International journal of Cultural Property*, Vol.3, 1994,
22. Derek Gillman, "The idea of cultural heritage", Cambridge University Press, 2010,
23. K.Chamberlain, "The protection of cultural property in armed conflict. Art, antiquity and law", Vol.8, N3, 2003.p.110-150,
24. Phelan Marilyn, G.Edson and Kimberly P., "The law of cultural Property and natural heritage: Protection, transfer and access", Karlos kapp press,1988,
25. Lonnie Johnson (1989). *Introducing Austria: a short history*. Riverside, Calif.: Ariadne Press,
26. D. Birmingham, "A concise history of Portugal", Cambridge University Press, 2003,
27. Manlio Frigo, Cultural property v. cultural heritage.A battle of concepts in international law?,([http://www.provincia.asti.it/hosting/ moncalvo/ pbc/frigo_ ricr.pdf](http://www.provincia.asti.it/hosting/moncalvo/pbc/frigo_ricr.pdf)):

Նորմատիվ իրավական և այլ ակտեր

1. Международные нормативные акты ЮНЕСКО, Москва, 1993г.
2. Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 года, касающийся защиты жертв международных вооруженных конфликтов (Протокол I). Женева, 8 июня 1977 года (<http://www.icrc.org/Web/rus/siterus0.nsf/iwpList133/4A1B0FBA8B5AE3CEC3257107002A11>),
3. Convention on the protection of the underwater cultural heritage, (<http://unesdoc.unesco.org/images/0012/001260/126065e.pdf>),
4. Convention for the safeguarding of the intangible cultural heritage, (<http://unesdoc.unesco.org/images/0013/001325/132540e.pdf>),
5. Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict with Regulations for the Execution of the Convention 1954, (http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13637&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html),
6. Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict (<http://www.icomos.org/hague>),
7. Convention Concerning the Protection of the World Cultural and Natural Heritage, (<http://whc.unesco.org/en/conventiontext/>),
8. UNIDROIT Convention on Stolen or Illegally Exported Cultural, (<http://www.unidroit.org/english/conventions/1995culturalproperty/1995culturalproperty-e.html>)
9. Second Protocol to the 1954 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict-Dutch involvement, (<http://www.kul.ee/webeditor/files/haag/woudenber.pdf>),
10. UNESCO Declaration Concerning the Intentional Destruction of Cultural Heritage Paris, 17 October 2003, ([http://www.icrc.org/Web/eng/siteeng0.nsf/htmlall/634JX3\\$File/irrc_854_Unesco_eng.pdf](http://www.icrc.org/Web/eng/siteeng0.nsf/htmlall/634JX3$File/irrc_854_Unesco_eng.pdf)),
11. Main Antiquities Law: Law No. 3658/2008, (<http://www.law-archaeology.gr/Index.asp?C=136>),
12. The Constitution of Portugal, http://www.servat.unibe.ch/icl/po00000_.html
13. The Constitution of Austria, (http://www.servat.unibe.ch/icl/au00000_.html),
14. The Constitution of Greece, (<http://www.cecl.gr/RigasNetwork/databank/Constitutions/Greece.html>)

15. LAW 3028/2002 On the Protection of Antiquities and Cultural Heritage, (http://www.wipo.int/clea/docs_new/pdf/en/gr/gr228en.pdf)
16. Convention with respect to the laws and customs of war on land (HAGUE II, 29 July 1899), (http://avalon.law.yale.edu/19th_century/hague02.asp),
17. Consolidated version of the Treaty Establishing the European Community {2002} OJ C 325/33, article 151,
18. Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2008] OJ C 115/1, article 167 (2,4,5),
19. Council Regulation (EEC) No 3911/92 of 9 December 1992 on the export of cultural goods, OJ L 395/1,
20. Council Directive 93/7/EEC of 15 March 1993 on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, OJ L 74/74, articles 1(2), 4, 7(2), 13, 14 (2),
21. Directive 96/100/EC of the European Parliament and of the Council of 17 February 1997, L 60/59 and Directive 2001/38/EC of the European Parliament and of the Council of 5 June 2001, L 187/43,
22. Commission Regulation (EEC) No 752/93 of 30 March 1993 laying down provisions for the implementation of Council Regulation (EEC) No 3911/92 on the export of cultural goods, OJ L 77/24, article 1
23. Commission Regulation (EC) No 1526/98 of 16 July 1998 amending Commission Regulation (EEC) No 752/93 laying down provisions for the implementation of Council Regulation (EEC) No 3911/92 on the export of cultural goods, OJ L 201/47-58, article 1,
24. Council Regulation (EC) No 116/2009 of 18 December 2008 on the export of cultural goods (codified version), OJ L 39/1, articles 2, 9, 10,
25. Legislative decree no. 490 of 29 October 1999, Consolidated Law containing the legislative provisions on cultural and environmental assets, (<http://audit2.clio.it/legaldocs/italie/Italia%20web/Testo%20Unico.htm>),
26. Legislative decree no. 42 of 22 January 2004 on Code of Cultural and Legislative Heritage, articles 10, 12, 13, 17, 18, 19, 21 (1'b', 2, 3), 29, 54, 55 (1, 2), 56 (1, 2), 57 (1, 2), 60, 61 (1, 2), 65 (1, 3, 2 a, b), 66 (1, 2a), 68 (1, 2, 5, 7), 69 (1), 169, 170 (1), 174 (1, 2),
27. Legislative decree 20 October 1998, n. 368, (http://audit2.clio.it/legaldocs/italie/Italia%20web/DLvo368_98_inglese.htm), articles 2, 4,

28. Constitution of Italian Republic, article 9, (http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/italy--e.htm),
29. Ordonnance n° 2004-178 du 20 février 2004 relative à la partie législative du code du patrimoine,
30. Code de Patrimoine, with amendments and modification, articles 1, L111-4, L111-6, L121, (<http://perlpot.net/cod/patrimoine.pdf>),
31. Report from the Commission to the Council, the European Parliament and the Economic and Social Committee on the implementation of Council Regulation (EEC) No 3911/92 on the export of cultural goods and Council Directive 97/3/EEC on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, Brussels, 25.05.2000, COM(2000) 325 final,
32. Report from the Commission to the Council, the European Parliament and the Economic and Social Committee: Second Report on the application of Council Directive 93/7/EEC on the return of cultural objects unlawfully removed from the territory of a Member State, Brussels, 21.12.2005, COM(2005) 675,
33. Recommendation on the Means of Prohibiting and Preventing the Illicit Export, Import and Transfer of Ownership of Cultural Property, (www.icomos.org/unesco/illicit64.html),
34. Recommendation for the protection of movable cultural, (www.icomos.org/unesco/moveable78.html),
35. Recommendation on the Safeguarding of Traditional Culture and Folklore, (www.un-documents.net/folklore.htm):

Այլ աղբյուրներ

1. Case 7/68, *Commission v. Italy*, (1968) ECR 633, 642
2. World Heritage list, (<http://whc.unesco.org/en/list32>),
3. Austria, (<http://www.culturalpolicies.net/web/austria.php>),
4. Legislation Aistria, (<http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/eur/lxweoos.htmEGI>),
5. BMUKK-Federal Ministry for Education, Arts and Culture, (<http://www.bmukk.gv.at>)

- [//www.bmukk.gv.at/enfr/minen/index.xml](http://www.bmukk.gv.at/enfr/minen/index.xml)),
6. Cultural Policy Database, (<http://www.culturelink.org/culpol/at.html>),
 7. National legislation for the protection of the cultural heritage, (<http://ec.europa.eu/taxationcustoms/resources/documents/cgoods.pt.en.pdf>)
 8. Portugal cultural heritage, (<http://www.culturelink.org/culpol/at.html>),
 9. Portugal, (<http://www.culturalpolicies.net/web/portugal.php?aid=23>)
 10. Ministério da Cultura, (<http://www.portaldacultura.gov.pt/Pages/Inicio.aspx>)
 11. C. Gulbenkian foundation, (<http://www.gulbenkian.org.uk/innovation-fund>)
 12. Истории Греции, (<http://greece-info.ru/historygreece>),
 13. History of modern Greece, (<http://www.mlahanas.de/Greece/History/ModernHistory.html>),
 14. Historical perspective: cultural policies and instruments, (<http://www.culturalpolicies.net/web/greece.php?aid=533>),
 15. Competence, decision-making and administration, (<http://www.culturalpolicies.net/web/greece.php?aid=533>),
 16. Outline of archaeology and archaeological profession in Greece, (<http://www.law-archaeology.gr>),
 17. Hellenic society for law and archaeology, (<http://www.law-archaeology.gr>),
 18. LAW/REGULATION FOR MUSEUMS, (<http://www.ne-mo.org/index.php?id=64>):

Ինտերնետային կայքեր

1. www.legifrance.gouv.fr
2. www.culturalpolicies.net
3. www.ec.europa.eu
4. www.beniculturali.it
5. www.mcw.gov.cy
6. www.unesco.org
7. www.culture.gr



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՓՅՈՒՆՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**MINISTRY OF DIASPORA
OF THE REPUBLIC OF ARMENIA**

**ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏԵԿՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**
Հետազոտական աշխատանք

**THE LEGAL STATUS
OF ARMENIAN CULTURAL
HERITAGE ABROAD**
Research



«Ամարաս» տպարան
Երևան, Տերյան 44
“Amaras” printing house
Teryan st. 44, Yerevan.

Ֆին. Tel. 56 04 79, 56 24 62
E-mail: amaras-print@mail.ru